



Բ Ա Գ Ի Ն

Զ. ՏԵՐԻՍ 1967 ՍՄՍՏԻՍՏԱՆԻ

ԹԻԻ 9

**پاكين**  
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية  
 مدير المسؤول  
 السيد ارتمين كارنيك قزائجيان

•

**PAKINE**  
 REVUE MENSUELLE  
 LITTÉRAIRE & ARTISTIQUE  
 Propriétaire  
 Dr. A. KAZANDJIAN

•

**բւգին**  
 ԱՄՍԱԳԻՐ  
 ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
 ԵՒ ԱՐՈՒԵԾՑԻ

ԿԱՐՏԻՆ ԽՐԲԱԳԻՐ  
 Կ. ԱՄՍՈՒՆԻ  
 ԽՐԲԱԳԻՐ  
 Գ. ՄԱԳԵԱՆ

ԽՐԲԱԳՐՈՒԹՅԱՆ  
 ԱՆԴԱՄՆԵՐ  
 Յ. ԳԵՂԱՐԴ  
 Տ. ՈՍԿՈՒՆԻ  
 Բ. ՓԱՓԱՋԵԱՆ  
 Վ. ՕՇԱԿԱՆ  
 Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԵՆ  
 † ԵՒ. ՊՅՍԱՋԵԱՆ

Խմբագրութեան հասցէ

**G. SASSOUNI**  
 Rue Sélim Boustani,  
 Beyrouth-Liban

Հեռաճայնի թիւ 296898

**ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ**

- Ն. ՋԱՐԵՈՒՏԵԱՆ
- Հ. ՅՈՎԱԷՓԵԱՆ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Ա. ԵՐԿԱԹ
- Լ. ԳԱՐՄԷՆ
- Թ. ՓՈՍՏԱՋԵԱՆ
- Ժ. ՂԱՐԻՊ
- ՇԱՀՊԱՆ
- Փ. ՃԵՐԱՆԵԱՆ
- Մ. ՓՐԵՆՍ
- Կ. ԻՄԷԼԵԱՆ
- Վ. ԳԵՈՐԳԵԱՆ
- .....
- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ
- ՆՇՄԱՐՆԵՐ

# Բազմի

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Զ. ՅԱՐԻ, ԹԻՒ Յ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1967

ԳԼՈՐԻՏԻ

## Մ Ե Ռ Ն Ե Լ Ի Ա Ռ Ա Ջ

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

Ա.

Նամակաբաշխը հեծիկը կոթնցուց  
պատին, որքեց զբախնքը ու քաշեց դրան  
դանդախին շղթան։ Ալէյի բարձունքնե-  
րուն վրայ շինուած այս դեղեցիկ վիլլան  
լատ յոպնութիւն կը պատճառէր իրին,  
որովհետեւ ստիպուած էր, շարաքը եր-  
կու անգամ, այս տաժանակիր զառիվե-  
րին մէկ մասը քալելով մաղցիլ։

Ընդհանրապէս պարտիզպանը կը բա-  
նար զուռը, գինջ ներս կը հրաւիրէր եւ  
խոհանոցէն իրեն զովացուցիչ մը կը բե-  
րէր։ Կրկին պիտի քաշէր շղթան, երբ  
զուռը բացուեցաւ և պարոն Ստեփան Ար-  
տաճան, վիլլային տէրը, դիմացը ելաւ։  
Նամակաբաշխը իր հինցած կաշիէ պա-  
յուսակէն հանեց տրցակ մը պահարան-  
ներ և յանձնեց պարոն Արտաճանին,

որ իր շնորհակալութիւնը յայտնեց,  
պաշտօնեայի բաց ափին մէջ ոսկի մը  
գնելով։

Արտաճան զուռը գոցեց եւ աչքէ  
անցուց պահարանները։ Սովորական  
դուռի նամակներ էին, բացի մէկ հա-  
տէն, որուն վրայ գրկողին հասցէն չկար։  
Նստաւ լաշն պատշգամին վրայ դրուած  
սեղանին առջեւ, բացաւ պահարանը եւ  
դուռն հանեց չորսի ծալուած թերթ մը.  
եւ կարդաց։

Ազնի պարոն,

Այս դարուս, երբ պատիւը ռոմանտի-  
ւած է, երբ ընտանեկան որբութիւնները  
ծաղրի առարկայ դարձած են, ուրա-  
խալի է, որ կը գտնուին տակաւին ար-  
ժանաւոր աւ պատուախնդիր մարդիկ, ո-

րոնք կը հսկեն ուրիշներու ընտանեկան երջանկութեամբ վրայ:

Դուք՝ տարուած ձեր գրադուսներէն՝ չէ՛ք տեսներ ձեր շուրջի անցուդարձերը եւ գաւաղութիւնները. բայց կան աչքեր որ կը հսկեն ձեր տեղը: Ազնիւ պարոն, ձեր տիկինը, Պէպքրիս Արտամեան, սիրահար մը ունի: Համդիպումները տեղի կ'ունենան շատ յաճախ, ձեր յարկին տակ իսկ: Մարդը ձեր ծածկոյններէն է: Չեմ ուզիր այժմ աւելի մանրամասնութիւններ տալ, միայն ձեզի կը քննադատեմ, որ ըլլա՛մ աւելի շրջանայեաց եւ գոյն: Հե-տեգայեցի կը բանամ աւելի լայն տեղեկութիւններ տալ:

#### ԲԱՐԵՎԱՄ ՄԸ

Արտամեան ոտքի ելաւ եւ պատշգաւ մին վրայ երթեւեկելով կրկին կարգաց նամակը, յետոյ զայն բզիկ-բզիկ ըրաւ եւ, հետեց աղբի սակառին մէջ: Ինչ անհա-ւատալի եւ տխուր գաղափար: Նոյնիսկ կոսկածիւր իր սիրելի Պէպքրիսին հա-ւատարմութեանը վրայ մեղք կը համա-րէր: Այս անանուն անպիտանը կ'ուզէր թոյն ցանել իր յարկէն ներս եւ պղտորել այն քաղցր մտերմութիւնը, որ կը տխ-րէր իր եւ Պէպքրիսին մէջ:

Սպասուհին քիչ մը անդին կը պատ-րաստէր նախաճաշի սեղանը:

— Տիկինը տակաւին չէ՞ արթնցած, — հարցուց:

— Դուռը զարկի, ձայն տուաւ եւ խնդրեց որ դուք առանձին ճաշէք: Տա-կաւին ինքզինքը յոգնած կը զգայ:

Ստեփան Արտամեան ախորժակով կերաւ նախաճաշը, վառեց գլանիկ մը: Քիչ հաջ երեւցաւ շարժափարը եւ ինք-նաշարժը մօտեցնելով դրան, սկսաւ մաքրել:

Ճամբուն ընթացքին, Արտամեան սկսաւ բանալ միւս պահարանները եւ կարգաց դործի վերաբերեալ նամակներ: Ամէն բան լաւ կ'ընթանար. ապսպրանք-ներ կը տեղային ամէն կողմէ: Տրցակին մէջ նշմարեց պահարանը, որուն մէջ

շրկուած էր անանուն նամակը: Զայն ալ բզիկ-բզիկ ըրաւ ու ըզրտեց ինքնաշարժի պատուհանէն դուրս: Կարծես կ'ուզէր չբացնել այդ թունաւոր տողերուն ամե-նադոյզն հեռքերն իսկ: Սակայն կարգա-ցած բառերը անհաճոյ մտնչներու պէս կը զարնուէին իր յիշողութեան, բայց կարող չէին արթնցնել իր նախանձը:

Պապ-Խորիսի իր հսկայ հաստատու-թեան դռնէն երբ ներս մտաւ, մոռցած էր արդէն ամէն ինչ: Գրամբնաններուն աղմուկը զղլիւիչ երաժշտութիւն մը կը յօրինէր, որուն փոխարէն պիտի չուզէր ունկնդրել ամէնէն հանճարեղ երաժիշ-տին լաւագոյն կտորը:

Հանդիպած պաշտօնեաները սիրալիք կը բարեւէին զինքը: Մտաւ անմնալան պրասենեակը: Հաճելի մթնոլորտ մը կը տիրէր հոս, գարնանային զովութիւն մը կը խուժէր օդը պայմանաւորող սար-քուածներէն: Սկսաւ քննել թղթաժրթ-ները: Քիչ յետոյ դուռը զարնուեցաւ ու ներս մտաւ իր հաւատարիմ ու դործունե-ւայ փոխանորդը, Արա Սոկրատեանը: Իր բացակայութեան, ան ամէն իրաւա-տութիւն ունէր որոշումներ առնելու: Քանի մը տարի առաջ, Արտամեան փա-փաք յայտնած էր, կարող պաշտօնեայ մը դործի առնելու: Երեք թեկնածուներ ներկայացած էին, երեքն ալ իրարմէ փայլուն: Արտամեան խորհուրդ հա-րցուցած էր իր տիկնոջ, բայց Պէպքրիս ընտրութեան պատասխանատուութիւնը իրեն ձգած էր: Սոկրատեան անմիջապէս կանխաձեռն էր պաշտօնի: Խեղաքի ու ճար-պիկ աղայ էր: Նախ եղած էր պարզ հաշուակալ, յետոյ առաջին քարտուղար եւ վերջ ի վերջոյ փոխ տնօրէն:

— Ի՞նչ նորութիւն, Արա, — հարցուց Արտամեան:

Սոկրատեան կաշիէ տոսիէ մը բացաւ եւ հեռադիւր մը դրաւ սեղանին վրայ:

«Ձեր ներկայութիւնը անհրաժեշտ: Շատ կարեւոր պայմանագրութիւն մը պիտի ստորագրուի»:

ՌԻԱԹՍ ԷՆՏ ՍՈՆՍ, ԼՈՆՃՆ

— Ե՞րբ հասաւ այս հեռագիրը:  
— Ձեր ժամանումէն կէս ժամ առաջ:  
Եւ պատրաստուէի ձեզի հեռաձայնել:  
— Պէտք է ուրեմն մեկնիմ անմիջապէս:  
Եթէ, հարցուք թէ ե՞րբ կը մեկնի առաջին օդանաւը: Այսպիսի առիթ մը պէտք չէ որ փախցնենք:  
— Որքա՞ն կրնայ տեւել ձեր բացակայութիւնը:  
— Երկու կամ երեք օր, առաւելագոյնը չարթ մը: Եթէ ստորագրելիք կարեւոր թուղթեր կան, անմիջապէս բեր:

»

Ինքնաշարժը կանգ առաւ օդակայանի լայն մայթին առջեւ: Հսկայ հրապարակը ուղղուած էր Եւրոպայի կաթնադոշին լոյսով: Մերթ ընդ մերթ մարդոց աղմուկը կը մարէր հեռուէն եկող ինքնամուղ օդանաւերու որսառումին մէջ:  
— Կ'ուզե՞ս որ միշտէն մեկնումդ քեզի ընկերանամ:— հարցուց տիկին Արտամեան:  
Մարդը նայեցաւ կնոջ: Հրապարակը ուղղող բոլոր գոյնզգոյն լոյսերը կեդրոնացած էին անոր լայն բերքունի մէջ, եւ կարծիք չբխումքներէն մեռած ճառագայթներ կը ցոլային դէպի Արտամեանին սիրտը: Կնոջ մազերուն իւրաքանչիւր թելը կը կաշկանդէր իր էութիւնը: Եթէ աչքան կարեւոր չըլլային իր մեկնումի պատճառները, Արտամեան պիտի չուզէր վայրկեան մը իսկ բաժնուիլ երիտասարդ կնոջ մնայուն կախարդանքէն:  
— Ինծի համար անհանդիստ մի՛ ըլլար, սիրելիս,— ըսաւ անոր ազամանազարդ մատները համբուրելով,— առաջին անգամը չէ որ կը ճամբորդեմ: Հանգիստիդ նայէ, եւ քանի մը մի՛ զրկուիր:  
— Կրնայ ըլլալ որ քանի մը օր ծնողքիս տունը անցընեմ, Պահագործ: Գիտես որ շատ չեմ սիրեր առանձին ապրիլ Վիլլային մէջ: Վերադարձդ մի՛ մոռնար ինծի յիշեցնելու հեռագիրով մը:

Արտամեան կրկին համբուրեց կնոջ նուրբ մատները եւ մինչ ինքնաշարժը կը սուրբ քաղաք տանող պողոտային դուրսէն լոյսերուն մէջէն, ինք քալեց դէպի օդակայանին հսկայ սրահ:  
Ճամբորդներու եւ ճամբորդներու խումբերուն մէջէն անցնելով՝ մօտեցաւ Անգլիական Օդանաւային Ընկերութեան գրասենեակը: Պաշտօնեային ներկայացուց տոմսակը, որպէսզի վաւերացնէ եւ վերջացնէ ձեւակերպութիւնները:  
— Հաճեցէ՞ք դա՛շիւն անցնիլ,— ըսաւ պաշտօնեան տոմսակը իրեն վերադարձընելով,— բարձրախօսով ձեզի կ'իմացնեմ մեկնումի ժամը:

Արտամեան ճգնեց ու նետեց քիկաբէթի պարապ տուփը եւ հատ մը նոր դնեց ու սկսաւ երթեւեկել հսկայ սրահին մէջ: Աջէն ու ձախէն՝ ծանօթներ եւ անծանօթներ սիրալիւր բարեւներ կուտան յին: Գնեց օրաթերթ մը ու ճաշարան յարձրացաւ գաւաթ մը սուրճ առնելու: Իւրաքանչիւր վայրկեանը, որ կը վատնէր, կորուստ մըն էր իրեն համար, զինք կը քաշէր ասի պահէն, երբ պիտի վերադառնար Պէսթերին: Սիրելիէն հեռու ապրած իւրաքանչիւր օրը, կը նմանէր տաժանելի ճամբորդութեան մը՝ անծայրածիր անապատի մը յուսահատեցնող աւաղներուն վրայ:

Կէս ժամ անցած էր և տակաւին բարձրախօսը չէր կանչեր Լոնտոն մեկնող ճամբորդները: Վար իջաւ ճաշարանէն եւ կրկին մօտեցաւ գրասենեակին, որուն մուտքին քսանի չափ մարդիկ հաւաքած էին եւ կը բողբոջէին բարձրաձայն:

Հեռախօսին զանգը հնչեց: Պաշտօնեան ընկալուչը վերցուց եւ սկսաւ մտիկ ընել գլուխը շարժելով: Քանի մը հարցումներ ալ ըրաւ, որոնց պատասխանը անմիջապէս հաղորդեց շուրջիններուն:

— Պարոննե՛ր,— ըսաւ,— այն օդանաւը որուն հետ պիտի ճամբորդէիք, տակաւին կը գտնուի Պաղատա. մեքենան խանդարուած է, եւ հազիւ վաղը պիտի կըրնայ ճամբայ ելլել: Ընկերութիւնը կը ջանայ իր կարելիք ընել, ձեր մեկնումը ապահովելու համար: Դժբախտաբար,

քիչ առաջ, ինծի իմաց տրուեցաւ, որ այս ժամերուն ուրիշ ընկերութիւններն ալ լոնտոն գացող օդանաւ չունին...

— Մէկ խօսքով, այսօր մեկնիլ չըկայ, — ըսաւ ճամբորդներէն մէկը:

— Օդանաւ մը կը սպասենք Հոռմէն. Լթէ անոր ճամբորդներուն թիւը քիչ է, պիտի փոխանցենք ուրիշ ընկերութիւններու, եւ զայն պիտի դնենք ձեր տրամադրութեան տակ, որպէսզի այս գիշեր իսկ հասնիք Լոնտոն:

— Եթէ ամէն բան կանոնաւոր ընթանայ, — ըսաւ նոյն ճամբորդը, — ե՞րբ կը հասնինք Լոնտոն:

— Առտուակ ժամը հինգէն առաջ կը հասնիք անպայման:

— Ե՞րբ կը մեկնի վաղուան կանոնաւոր օդանաւը, — հարցուց Արտամեան:

— Ժամը ութ ու կէսին:

— Շատ լաւ, առէք տոմսակս եւ ինծի տեղ մը ապահովեցէ՛ք վաղուան ժամը ութ ու կէսի օդանաւին մէջ:

— Պատմեան փոխեց տոմսակին վրայ մեկնումի օրն ու ժամը:

— Հասցէս ունիք ձեր քովը, եթէ որեւէ ուշացում պատահի, ինծի հեռաձայնեցէ՛ք, ինչքան, — ըսաւ Արտամեան մեկնելով:

Միշտ նոյն ժխորը կը լեցնէր ոպասման սրահին տարածութիւնը:

Պէտք էր նախ հեռաձայնել Պէաթրիոնին, Պհամտունի իր ծնողքին տունը: Ասկայն Պհամտունի գիծը ինքնադործ չէլլալով՝ շատ դժուար էր օդակայանին խցիկներուն մէկէն ունենալ Պհամտունը, իսկուրս ելաւ եւ ինքնաշարժ մը վարձեց:

— Ձիս Ռոսս Պէյրութի Բարմիշէն տար, — ըսաւ շարժավարին:

Ժամ մը առաջ, Պէաթրիոն նոյն ճամբէն, նոյն լոյսերու տօնին մէջէն անցնելով մեկնած էր դէպի քաղաք եւ անկէ Պհամտունն, Դօքսէն էր, որովհետեւ այս գիշեր պիտի չկարենար իր կնիջ հետ ըլլալ:

— Պէտք է խնդրէի, որ հետս մնար

մինչեւ օդանաւ բարձրանալ, — ըսաւ ինքներեն:

Իջաւ ինքնաշարժէն Աղաւնիճեռու Քարայրին դիմացը նոր բացուած Շառ-դէլիզէ ճաշարանին առջեւ: Բարեկամները շատ լաւ խօսած էին այդ հաստատութեան մասին: Բաճախորդները տակաւին քիչ էին: Ապսպրեց օրուան Սթիւն: Իսկապէս կերակուրները համեմատեալ էին եւ սպասարկութիւնը՝ անթիւ: Վճարելու տեսն, սպասեալին լաւ նուէր մը տուաւ եւ փափաք յայտնեց՝ որ կ'աղէ հեռաձայնել Պհամտուն:

— Շատ կը ցաւինք որ պիտի չկարենանք զոհացնել ձեր փափաքը, որովհետեւ տակաւին ձեր հեռաձայնը չէ հաստատուած: Գիտէ՞ք որքա՞ն դժուար է այս կողմերը գիծեր ապահովել: Երկու օրէն ամէն ինչ կը կարգադրուի:

Արտամեան դուրս ելաւ:

— Կը մնայ տուն երթալ եւ այնտեղէն հեռաձայնել, — մտածեց:

Կը ընկէր Բարմիշէն ոչ շատ հեռու: Շատ կը սիրէր քաշել գիշերները, տմայացած մայթերու վրայ, երբ անցորդները կը շարժին լուռ ասուերներու պէս, եւ աղմուկը մահաւոր, հաղիւ պղպիւ կը զարձնէ իր ներկայութիւնը: Հասաւ իրենց տան փողոցին անկիւնը:

— Չարմանալի բան, — ըսաւ, լոյս մը տեսնելով պատուհաններէն մէկուն, — Պէաթրիոն կը գտնուի Պհամտունի իր ծնողքին մօտ, սպասաւորները Ալէքի վիլլան են... Արդեօք Պէաթրիոն հրաժարած է Պհամտունի ելլելու դադափարէն, կամ ալ տուն հանդիպած է եւ մեկնելու պահուն մոռցած է մարել սենեակին լո՞յսը...

Վերելակը կանգ առաւ շորթորէ յարկը: Պատիկուց սորված էր դռները բանալ ու զոցել առանց աղմուկի: Կաշիէ պայուսակը դրաւ սեղանի մը վրայ ու մտաւ դահլիճ: Ոչ մէկ տեղ լուռաւորուած էր: Պէաթրիոն սենեակը կը գտնուէր նրբանցքին ծայրը: Առանց աղմուկի քաշեց դէպի այդ կողմը եւ կը պատրաստուէր իր ներկայութիւնը ըստ

սովորականին յայտնել հազարով, երբ զբան միւս կողմէն լսեց խօսակցութեան մը պատահականները: Պէտքերն երբեմն կը խնդար, երբեմն կը լռէր եւ երբեմն ալ փաղաքշական բառեր կ'արտասանէր: Ահանջը մօտեցուց զբան եւ լսեց Վիւսիմ ձայնը: Ծանօթ էր իրեն. ուրեմն անտեսուն նամակին ամբողջ պարունակութիւնը ճիշդ էր, եւ ինք հեզնած էր զայն առաջողը: Կրնար դուռը բանալ յանկարծ, խռովել ներս... բայց ասիկա զիւրին, շատ զիւրին պատիժ մը պիտի ըլլար... Պէտքերսին խնդուքը կրկին լարարացաւ եւ այն ատեն ուղեղէն ներս զգաց տեսակ մը ծանրութիւն եւ ջիւղերը պրկուեցան, կարծես ելեկտրական զօրանոյ հոսանք մը անցած էր մարմնէն: Սակայն, կ'ուզէր շահաւատալ, ինքզինքը կարծել տեսակ մը օադայէլական երազի մէջ, շտաբուիլ իրականութեան անհղհոսանքէն, պահ մը ձերբազատուիլ մղու-ձուսանքի լիկող ճիւղաններէն եւ գտնել ինքզինքը:

Նաւանջեց առանց աղմուկի, դուռն ելաւ եւ դոցեց մօտաքի դուռը: Մտնող աստիճաններէն իջաւ վար եւ յանկարծ յիշեց, որ կաշիէ պայուսակը մոռացած էր ներս, սակայն անկարելի էր կրկին վերադառնալ այդ գոտիքը: Շտաբուակեց իջնել, վայրկեան մը կեցաւ մայթին վրայ մէկու մը պէս՝ որ ինքնաշարժի կը սպասէ, յետոյ կարեց փողոցը եւ կոթնեցաւ ծառի մը:

Ուրեմն այսպէս էր քանի մը տարիէ ի վեր: Եւ այս աղտոտութիւնը տեղի կ'ունենար իր ալքերուն առջեւ, իր տան մէջ: Եւ ինք ապուշի պէս կը ժպտէր եւ կը խօսէր այս երկու իմերուն, որոնք իր հացով կ'ապրէին: Կնոջ ալքերուն կեղծ անմեղութիւնը իր մէջ քննած էր ամէն դատողութիւն: Գոհացուցած էր անոր իւրաքանչիւր քմահաճոյքը, սիրած էր զայն... ուղած էր՝ որ միշտ գեղեցիկ էրէի, որ հազուի ու զարգարուի թաղուհիի մը պէս, առանց գիտնալու որ Վիւսիմ համար կ'ընէր այս բոլորը:

Նայեցաւ դէպի վեր: Լուսաւոր պատուհանը կը բացուէր գիշերուան մէջ

դաշիճի ալքի մը պէս եւ անոր շղարշ վարադուրը, որ կը շարժէր մեղմ հովուն շոյանքներուն տակ, կը բաժնէր իր երբեմնի երջանկութիւնը եւ անզորութիւնը ներկայ գոտիքէն: Լոյսը վառուած մնաց մինչեւ աստու, զաշոյնի մը պէս, որ միտուած կը մնար իր սրտին մէջ: Գոնէ պահ մը զոցուէր այդ դաշիճի ալքը, պահ մը մարէր այդ լոյսը եւ Պէտքերսին մերկ մարմինը բաժնուած մնար խաւարով իր սիրահարին ալքերէն: Քառակուսի լոյսը հիմա կը փոխուէր շուշուի, ձայնի եւ թափանցիկ շղարշին ծակտիկներէն դէպի իր ականջները կը սահէին կնոջ քրքիջները եւ սիրահարին փաղաքշական բառերը: Սիրահարին, այն «մարդուն» որ ամէն առաւ խոսքով եւ կեղծաւոր ժողովով մը կը բարեւէր զինքը եւ սեղանին վրայ կը դնէր ստորագրուելիք թուղթերու ծրարը, իր որպիսութիւնը հարցնելով:

Արտամեան ծառին կոթնած մնաց ժամեր, լոյսէն կախողուած թռչունի մը պէս: Մարմինը սկսաւ կամաց կամաց փլշիլ եւ առաւօտուն աւելածունքը զայն գտան անշարժ, մայթին վրայ, իր տան դիմացը: Ալքերը բաց էին եւ անթարթ, բերանը կը շարժէր, բայց չէր կրնար խօսիլ, սիրտը կը արօղէր ուժգին: Ոստիկանները եկան, ասուզեցին ինքնութիւնը եւ զինք տուն փոխադրեցին:

Երկար զարկին զբան զանգը: Տիկին Արամեան վերջապէս դուռը բացաւ զանգաստելով, տակաւին նոր քուն մտած էր:

— Տակաւին երէկ իրիկուն ողջ ուսուողը Լոնտոն կը մեկնէր, բացաւրեց Պէտքերս, — ի՞նչ պատահած է խեղճ մարդուն:

Բժիշկներ եկան, երկար քննութիւններ ըրին ձեռքով եւ գործիքներով եւ վերջապէս տուն հետեւեալ արտաճանաչումով: Արտամեան կաթնաճար եղած էր յանկարծակեան եւ ծանր վիշտի մը ազդեցութեան:

— Բայց որեւէ մտահոգութիւն չու-

նէր, տոթթո՛ր, — ըսաւ տիկին Արտամեան ըծիլապետին, — Ի՞նչպէս կրնայ կաթուածա՛նար ըլլալ մարդ մը՝ որ յարգուած է ամէնէն, որուն գործերը փայլուն են եւ մանաւանդ կը վայելէ ընտանեկան երջանկութիւն:

— Երբեմն ամէնէն երջանիկ երեւցող անձերը կ'ունենան զաղտնի ու կրծող վիշտեր...

— Եթէ այդպէս էր, գոնէ՛ պէտք էր զիս տեղեկ պահէր, որպէսզի բաժնէի ու թէթեւցնէի իր մտահոգութիւնները...

— Վիշտեր կան, որ չեն բաժնուիր, տիկին, զանազան պատճառներով: Եւ յաճախ մարդ շատ կը տեսնէ այն ձեռքը, որ դանակ կը մխրճէ իր սիրտը:

#### Բ.

— Վկայարէ ծանրութիւն մը առած է մարմինս. երակներուն արիւնը կարծես վերածուած է աւապի, դուրսի աշխարհը կորսնցուցած է իր ծաւալը եւ էութենէս ներս կը խուժէ, աչքերէս եւ ականջներէս:

Անխոյ թիկնաթոռի մը վրայ նըստած, կը դիտեմ վանդակիս անբակտիյի ձողերուն միջոցը, Պէտթրիս սենեակիս մէկ անկիւնը զբաղած է: Երբեմն շուրջս կը դառնայ: Կը տառապի իոկապէս ինծի պատահածին համար, եւ սակայն երբեք չ'անդրադառնար, որ ի՞նքն է պատճառը իմ ներկայ վիճակիս: Միշտ մօտս է, կ'ուզէ հասկնալ փափաքածս, հարցումներ կ'ընէ ինծի եւ ձայնին մէջ այդքան կարեկցութիւն կայ, այդքան արդարահամբ, որ երբեմն ինքզինքին հարց կու տամ, թէ արդեօ՞ք չեմ սխալած իմ զատումներու մէջ, եւ կը զարմանամ, թէ այս նոյն կիներն է որ դէպի Լոնտոն ճամբորդութեանս ղերկը կը գտնուէր իր սիրահարին ղերկը, այս նոյն տան մէջ, անդի սենեակը, եւ տարիներէ ի վեր իր սիրահարին եւ թերեւս սիրահարներուն ականջին կը փոփոար իր քաղցր ձայնին կախարդանքը:

Բժիշկը շարաթը երկու անգամ այցելութեան կու գայ եւ կը քննէ զիս: Պէտթրիս միշտ ալ ներկայ կ'ըլլայ այդ քննութիւններուն. հարցումներ կ'ուզի թժիկին, կ'ուզէ հասկնալ, թէ բարելաւում կա՞յ ընդհանուր վիճակիս մէջ, թէ՛ ե՞րբ պիտի կարենամ վերագտնել խոտելու եւ շարժելու կարողութիւնս:

— Տիկին, չեմ ուզեր ձեզ վախցնել եւ ո'չ ալ օրօրեւ կեղծ խոստումներով. այս հիւանդութիւնը կրնայ տեսնել երկար եւ կամ ալ, օր մը կը տեսնէք, որ ձեր ամուսինը ոտքի ելած է եւ կը խօսի ձեզի հետ ա՛յնպէս, որ կարծէք բան մը պատահած չէ երբեք:

Պէտթրիսին մութ դէմքը կը պայծառանայ երկրորդ հաստատումին վրայ: Միւրեւի, քաղցր ու մոռացկոտ Պէտթրիս, որ իմ բացակայութեանս կը սիրաբանէր իմ ամէնէն հաւատարիմ պաշտօնեաներէս մէկուն հետ: Կնոջ մը հոգին կրնայ ուրեմն հաւատարիմ ու կոյս մնալ, մինչ մարմինը կը նետէ ուրիշներուն ղերկը: Անհասկնալի ու տարօրինակ էակ:

Հիւանդապահուհի մը ցերեկը կը հսկէ վրաս, ուրիշ մըն ալ գերեզը: Պէտթրիս շատ քիչ կը բացակայի եւ հազիւ ժամանակ կը արամազրէ իր հանգիստին: Պէտք է ընդունիլ, որ ամուսնութեան խորհուրդը անտեսանելի կապ մը կը ստեղծէ մարդուն եւ կնոջ միջեւ, եւ պարզ ցուցողութեան համար չէ՛, որ ամէնէն անհաւատներն իսկ կ'ուզեն պլոտակուիլ եկեղեցական արարողութիւնով:

#### Ծ

Սպասուհին ներս մտաւ, եւ նշան ըրաւ Պէտթրիսին, որ դուրս գայ. այցելու մը ըլլալու էր: Կնոջս անկեղծութիւնը եւ միամտութիւնը չափեցի, երբ հարցուց.

— Մարի, ո՞վ է զիս ուզողը:

Սպասուհին լուսնի խորամանկ գլուխը եւցաւ. չպատասխանեց: Գոհացաւ աչ-



քերուան մէջ նայել յօնքերը պոստեղով: Պէտքերիս հասկցաւ, ես ալ հասկցայ այ-  
ցելուն ինքնութիւնը:

Պէտքերիս երկար բացակայ չմնաց: Թեթեւ ամպ մը իջած էր դէմքին: Հաս-  
կըցայ՝ որ հոգեկան անդորրութիւնը սկսած էր խախտիլ եւ թէ փորձութիւնը կրկին կը զարնէր սրտին դռները: Հրա-  
ւէրը մերժած էր, որովհետեւ տակաւին կ'ապրէր յանցաւորի մտայնութեամբ. սակայն պիտի կարենա՞ր երկար դի-  
մադեմ հեշտանքներու հեռապատկերին, պիտի կարենա՞ր ներքին եւ արտաքին թշնամին յաղթել սեփական ուժերով: Այդ մասին կը տարակուսէի: Իսկուպէս կը խղճայի Պէտքերիս վրայ եւ կ'ուզէի օգնել իրեն խրատներովս, սակայն ոչ մէկ միջոց ունէի յարաբերելու հետը, որովհետեւ մեր սէրը միակողմանի էր, եւ մեր նայուածքները զիրար չէին կրնար հասկնալ: Նոյն լեզուին պիտի չըլլար մեր խօսածը:

Ուրիշ օր մը, սպասուհին կրկին ներս մտաւ. Պէտքերիս այս անգամ չփոթեցաւ, բան մը չհարցուց սպասուհիին. անմիջապէս դուրս ելաւ. հեռաձայնող կար:

Պէտքերիս բացակայութիւնը երկու ժամ տեւեց, երբ վերադարձաւ, նայեցայ աչքերուն մէջ: Ձկըցաւ հանդուրժել նայուածքին. մօտեցաւ սեղանին, ուր կային դեղերու արուակները. դեղահատ մը դրաւ բերանս, առանց կարգալու աղ-  
դարարութիւնը եւ առանց նկատի առնե-  
լու, որ դեղահատին ժամը չէր, եւ հի-  
ւանդապահուհին էր, որ կը կատարէր այդ պաշտօնը:

Յաջորդ օրը, մեր հաւատարիմ սպա-  
սուհին, հաւատարիմ աւելի Պէտքերիսին քան ինծի, իր տարեկան արձակուրդը ուզեց օգտագործել: Տարիներէ ի վեր այս առաջին անգամն էր: Կը մեկնէր իր ընտանիքին մօտ, ուր զինք կ'անոնաւորապէս կը շորթէին: Խոստացաւ ժամա-  
նակէն առաջ վերադառնալ:

Հիւանդապահուհին ալ երկար չմը-  
նաց: Գործը շատ ծանր կը պոսէր եւ յա-  
ւելում կը պահանջէր: Ես շատ պո-  
սէի իրմէ, եւ օրով պիտի ընէի այդ յի-  
սուն ոսկինոց ամսական յաւելումը. բայց պիկինս, որ իր արդուարդին համար հոգաւ հազարէն եւ երկու հազարէն չէր նայեր, այս անգամ ունեցաւ խնայողութեան հոգ-  
վերաբերութիւնը եւ առարկեց, որ ինք կրնայ աւելի լաւ պայմաններով աւելի/ երկուստեք հիւանդապահուհի մը վարձել: Բայց այդ հազարապիտ թուղունը երբեք չպտնուեցաւ: Բժիշկն ալ, կնոջն փափաքին վրայ, այլեւս չտրամբ մէկ անգամ սկսաւ այցելել զիս:

Պէտքերիս, առաջին օրը, անցուց սենեակս եւ զիս խնամեց մեծ դուրսու-  
բանքով, ինք էր՝ որ զգալով մը կերտ-  
կուրները բերանս կը տանէր եւ անձեռ-  
ցով մը կը սրէր շրթունքներս ու կզակ: Երկրորդ օրը, սակայն, ժամ մը քացա-  
կայեցաւ, երրորդ օրը ալ աւելի: Ձոր-  
րորդ օրը, ամբողջ յետ միջօրէն անցուց դուրսը. երբ վերադարձաւ կը պոստէի  
դէլ կացութեան մը մէջ: Թիկնաթոս շրջած էր եւ ես փոռած էի դետին: Բա-  
ցապահութիւնները իսկապէս անկեղծ էին. տակաւին մահս չէր փափաքեր եւ ինքնիքին կ'ըսէր.

— Պէտք չէ այս մարդը առանձին ձգել. կրնայ դէլ բան մը պատահիլ: Այ-  
սօր իսկ պէտք է հիւանդապահուհի մը գտնել:

Քանի մը օր առնէին դուրս չելալ:

Իրիկուն մը, դուրսի դուռը զարնուե-  
ցաւ: Սպասուհին տակաւին չէր վերա-  
դարձած արձակուրդէն: Պէտքերիս գնաց  
դուռը բանալու.

— Գնա՛ սենեակս, քանի մը վայրկեա-  
նէն կու գամ, ըսաւ կինս:

Եւ այլեւս, ամէն օր նոյն ժամուն, Սոկրատեան կու դար եւ գիշերը կ'անցը-  
նէր Պէտքերիսին հետ, անդի սենեակը, ամայի տան մէջ, ուրկէ զրկուած էին եւ սպասուհին եւ հիւանդապահուհին:

Առտու մըն ալ, Պէտքերիս արտու-  
հրեց պատուհանին դիմաց եւ սիրահարը ընդունեց իմ սենեակս: Նստած քանա-  
փէին վրայ՝ անոնք կը խօսէին ցած ձայնով եւ ամէն անգամ որ կը լսէի

լրթունքներուն կաշիքը, արտիս մէջ կուտակուած թոյնը կ'հոսար:

Ճիգ կ'ընէի գլուխս դարձնելու իրենց կողմը, նայուածքով շանթահարելու գիրենք, բայց մկաններս եւ ջիւղերս չէին ննայանդեր կամքիս. եւ ես կարուած դուրսի աշխարհէն, անկարող հազորդակցութեան մտնելու շուրջիներուս հետ, առանձնացած զոց ու լուս-բարութի մը վրայ, մաքիս մէջ կ'որոնայի ահաբեկ վրէժ մը:

#### Գ.

Օր մը, բո՛ւնէն ներս մտաւ, խոշոր տուփ մը բռնած: Իրեն կը նետուէր երկաթաբաժնի ուրիշ բո՛ւնէն մը:

— Նոր տեսակի գործիք մըն է,— քաւ,— կ'ըսեն թէ հրաշքներ գործած է եւրոպայի մէջ, եւ մեռած ջիւղերուն կեանք առած: Եթէ թոյլ կու տաք, տեղի'ն, զայն պիտի փորձեմ ձեր աճուածոյն վրայ:

Երեսուսարդ բո՛ւնէն, որ մասնագէտը ըլլալու էր այս գործիքին, երկու թեւերս մերկացուց, եւ անոնց վրայ փաթթեց բազմաթիւ անդամներ պղինձէ հաստ թել մը, որ տուփէն դուրս կ'ելլէր, եւ դարձուց կոճակ մը: Թուազըւած շրջանակի մը վրայ սկսաւ ասեղ մը երթեւեկել:

— Բան մը կը զգա՞ս,— հարցուց: Կոճակը քիչ մըն ալ դարձուց, եւ կոպերս վեր վերցնելով, լուսաւոր դիտակով մը աչքերուս մէջը քննեց: Տարօրինակ երթեւեկ մը կար, մատներէս զէպի ուսերս. կարծես միջոնաւոր մըր ջիւղներ կը կրծէին մկաններս: Եւ սակայն կը մնայի նայնդ՝ անշարժ ու անթօս:

Բո՛ւնէն զարմացած ինծի կը նայէր եւ կը կնէր:

— Տարօրինակ, տարօրինակ... եւ սակայն այս գործիքը հրաշքներ գործած է եւրոպայի մէջ եւ հազարաւոր հիւանդներ բուժած:

— Կարծեմ մէկ անգամով արդիւնք մը պիտի շնտանանք,— քաւ երեսուսարդ բո՛ւնէն,— պէտք է նաեւ հոտանքը աւելի զօրացնենք: Վաղը կրկին կը փորձենք, աւելցուց ու մեկնեցաւ:

Պէտքերս մօտեցաւ ինծի: Աչքերը ուղղած երեսիս, կատուի մը պէս, որ կը ջանայ դուշակել մուկի մը կատարելէ շարժումները: Դիմքին վրայ նշմարելի սեւ ամպ մը: Հասկցայ՝ որ քաղցր ու սիրելի Պէտքերսը մահու կը փափաքէր:

Դիշերը արթուն մնացի: Սարսուփ կար հոգիիս մէջ, եւ նոյն ատեն անբացատրելի ուրախութիւն մը: Բազուկներուս մէջ կը զգայի միջոնաւոր մըր ջիւղներուն յաւիտենական արշաւանքը: Անոնց կեդրոնը կը գտնուէր դաստակներուս մօտ եւ ճանապարհը մատներէս կը սկսէր եւ կը վերջանար ուսերուս մէջ: Եւ յանկարծ ահաբեկ ցաւ մը զգացի ցուցամատիս ծայրը, կարծես թուրաւոր ասեղ մը կը մտնէր հոն: Ցաւէս պիտի պոռայի, պոռացի ալ, սակայն ձայնս մեռած մնաց կոկորդիս մէջ: Յանկարծ մատներս սկսան շարժել, եւ ալ բազուկս սկսաւ վեր բարձրանալ: Ուրախութեան հրեցի թիկնաթոռս, մօտեցայ դանդի կոճակին, արթնցնելու համար Պէտքերսը, որ իր սենեակն էր, սակայն մատս մնաց օդին մէջ:

— Յիմա՞ր, յիմա՞ր,— կ'ըսէր անծանօթ ձայն մը,— եթէ զաղտնիքդ յայտնես կնոջդ, ինչպէ՞ս պիտի լուծես վրէժդ...

Այդ ձայնը իրաւունք ունէր: Սկսայ մտածել: Ծիշէ է. առողջանալու վրայ էի, առողջացած էի դրեթէ, եւ ուրախ էի անոր համար. բայց Պէտքերս պիտի գտնուէր դէշ անակնկալի մը առջեւ. ինչպէ՞ս պիտի վարուէր հետո, գիտնալով որ տեղեակ էի ամէն բանէ: Պիտի կարենայի՞նք շարունակել առաջուսն կեանքը. պիտի կարենայի՞նք շնչել նոյն յարկին տակ, կեդնելով մեր զգացումները: Որքան ալ մեծ ըլլայ սէր մը, չի կրնար հանդուրժել դաւաճանութեան:

Պէտքերս պիտի հանդուրժէր իմ ներկայութեանն այնքան ատեն, որ զիս

նկատէր շնչող իր մը, անկարող վկայ մը իր անհատարժուութիւններուն: Իսկ ես որսնա՞ծ էի առաջին օրն իսկ վրէժ լուծել. եւ որովհետեւ չէի որոշած այդ վրէժին պահել եւ ձեռք, նախընտրելի էր որ շարունակէի անդամալոյծ մնալ:

Յաջորդ օրը, բո՛րիկը կրկին բերաւ զործիքը եւ պլինձէ թելերը փաթթեց բազուկներուն: Ջիղերս կը դառնային աւելի զգայուն. եթէ ուզէի, կրնայի թեւերս շարժել. մատներուն մէջ բռնել զիւր մը... Ժամ մը ետք, թելերը փաթթեց օրունքներուն, դարձուց կոճակը, եւ եւեկտրական հրաշագործ հոսանքը սկսաւ ցնցել մարմնիս քնացող ջիղերը: Ամբողջ մարմնիս սկսաւ վերապրել...

Իժիշկը ժամացոյցին նայեցաւ:

— Հիմա ժամը վեցն է, — ըսաւ Պէտթըրին:— Թող զործիքը աշխատի մինչեւ ժամը ութ. այն ատեն սա կոճակը այսպէս կը դարձնէ եւ կը կտրէ հոսանքը. ո՛չ ութէն առաջ եւ ո՛չ ութէն ետք...

— Կը խորհիք որ իսկապէս օգուտ մը պիտի ունենայ մեր ըրածը, — հարցուց կինս բո՛րիկին:

— Պէտք է ունենայ. արդէն ուրիշ միջոց չկայ բուժելու ձեռք ամուսինը: Թերեւս քիչ մը ժամանակի կարօտի: Անհոգ եղէք, վստահ եմ ձեր ամուսինը մօտ ատենէն ոտքի պիտի կանգնի աւելի առոյգ քան երբեք: Այս գործիքը մեր դարուն հրաշալիքներէն մէկն է:

Պէտթըրիս բո՛րիկը ճամբեց եւ վերադարձաւ սենեակս: Մեր նայուածքները իրարու հանդիպեցան եւ անոր բիրերուն մէջ տեսայ հեզոնող ու շար լոյս մը: Եւ ես ալ ապուշի պէս պիտի մոռնայի սո՛քն բան եւ իրեն յայտնէի, իբր թաթի լուր, իմ առողջանալու:

Բան մը ըսաւ ինքնիրեն, քիչ մը երթեակեց սենեակին մէջ, նայեցաւ ժամացոյցին. ժամը վեցը տասը վայրկեան կ'անցնէր: Մօտեցաւ գործիքին ու դարձուց կոճակը: Մեքենան դադրեցաւ աշխատել:

Ձէի գիտեր որ Պէտթըրիս զիս կ'աւելբարդէր որ անտէրման եւ կը փափաքէր մօտաւորաւ մահու: Հասկցայ որ մենք այս

լեւս ոխերիմ երկու թշնամիներ էինք, պոնէ ինք, որ կ'ուզէր զիս ջնջել ապրողներու շարքէն:

Ձեռք կարծեք որ Պէտթըրիս միշտ եղած ըլլայ այն հրէշը, որ հիմա կ'երթեւեկէ աչքերուս առջեւ, սպասելով որ դատին փութիմ անշունչ եւ ինք վայելէ յետոյ իր անպատիժ ոճերին թունաւոր պտուղը: Մարդ էակը ո՛չ անասուն է եւ ոչ հրեշտակ. ո՛չ անմեղ մըն է ամբողջովին եւ ոչ անուշիկ հրէշ մը: Մեր իւրաքանչիւր հոգիին մէջ կը ննջէ ատելութեան սեւ վիշապը. ան կը ննջէ պահուստով ուրիշ զգացումներու թանձր կամ նոսր խաւին տակ եւ երբ առիթը ներկայանայ, երբ չապաստած դէպք մը կը ջնջէ զգացումներու այդ խարուսիկ խաւը, ոսկն ատեն վիշապը կ'արթննայ, կը կանգնի իր թաթերուն վրայ ու կը քակտէ ամէն բան:

Պէտթըրիս, որ առաջին օրերը այնքան կը դուրդուրար վրաս, այնքան անկեղծօրէն կը փափաքէր որ առողջանայի, հիմա ստրուկը դարձած էր մուկ մտելութեան, որովհետեւ այն եզրակացութեան եկած էր, թէ իմ ներկայութիւնս միակ արգելքն է իր երջանկութեան ճամբուն վրայ:

Մահու իրեն պիտի ազահովէր հարստութիւն, պիտի ջնջէր ամուսնութեան կապանքները եւ զինքը յաւիտեանս միացնէր սիրած մարդուն: Ձէի կրնար հաւատալ որ մարդ արարածը կրնայ այսքան փոխուիլ: Պէտթըրիս միւս կիներէն ո՛չ աւելի վատ էր եւ ոչ ալ աւելի լաւ. թերեւս աւելի լաւ քան վատ: Եթէ, այդ գիշեր, ես լոռտոն մեկնած ըլլայի, երբեք պիտի չպատահէր այս բոլորը: Պիտի ապրէինք մեր երջանիկ կեանքը. ես՝ երբեք չկասկածելով իր հաւատարմութեան վրայ. ինք՝ զիս խաբելով իր սիրուն ժպիտով: Եւ օր մըն ալ պիտի ձանձրանար իր սիրահարէն եւ պիտի վերադառնար ինծի իր ամբողջ էութեամբ: Բայց կիները կը նմանին վաղրերու. այնքան ատեն որ դազանադուսպը ոտքի է եւ կը շաշնցնէ մարմկը, կը հնազանդին անոր. բայց երբ մարդուն

ոտքը սայթաքի, եւ իյնայ դեռին, այն ատեն կը յարձակին վրան ու կը յօշոտեն զայն:

Այս դատումները կ'ընէի, հանդարտօրէն նստած թիկնաթոռի մէջ, բայց վրէժը կը սուսունէր գլխուս վերեւ, պիշատիչ ու անյադ թուռնի մը պէս: Ես ալ ուրիշ մարդոց պէս ո'չ ամբողջովին լաւ էի ոչ ալ ամբողջովին վատ. թերեւս աւելի լաւ քան վատ: Բայց բանականութիւնը չէ կըցած երբեք կառավարել մարդ էակը այսպիսի պարագաներուն մէջ. չէ կըցած երբեք հակակշռել եռացող զգացումներուն խառնաբանը: Հիմա մէջը լուած էր բանականութեան հանդարտ ձայնը եւ կը բարձրանար միայն զգացումին, բնազդին կատաղի ոռնոցը: Ինքզինքս հռչակած էի զատուութիւնս ու դահիճ այս երկու անպիտաններուն տարուհամար արդար վճիռը ու գործադրելու զայն անյապառ: Ըլլալ նոյն ատեն փաստաբան ու զատախազ:

Նախ ուղեցի երկու ամբաստանաւորներուն յարաբերութեանց տեղեակ լլլալ: Զափել իրենց զգացումներուն անկեղծութիւնը, անխուսափելիութիւնը իրենց հանդիպումին, ճակատագրին սամինը իրենց մերձեցումին մէջ:

Իսկապէս ասոնք զիրար կը սիրէին՝ կարենալ չապրելու չափ իրարմէ հեռու, թէ՛ կ'ուզէին իրարմէ օգտուիլ, Պէտքերս Արայի երիտասարդութենէն, Արան՝ Պէտքերսի հարստութենէն...

Կար նաեւ երկրորդ կարելիութիւն մը. կրնային նոյն ատեն զիրար սիրել եւ իրարմէ օգտուիլ. եւ ա՛յս ըլլալու էր ճշմարիտ ուխտանաչումը: Գիտէի որ անկեղծ ու անշահախնդիր սէր չկայ. երբովհետեւ մեր դիմացինին մէջ, իր անձնէն աւելի կը սիրենք իր զեղեցկութիւնը, ձերբերկր կամ ընկերային դիրքը: Վճիռս պէտք է գործադրէի:

Պէտքերս շատոնց դուրս ելած էր, զիս մահուան դատապարտելէ ետք: Ժամը տասնութէկին կը մօտենայ եւ տան մէջ կը տիրէր կատարեալ լռութիւն: Վստահ էի որ ոչ ոք պիտի գար. դիտ խանդարելու: Կոճակը դարձուցի դէպի

աջ եւ մեքենան աշխատացուցի երկու ժամ, եւ կրկին կեցուցի: Եւ ասիկա տեւեց մօտ շաբաթ մը: Ոտքերս անշարժ չէին այլեւս, կրնայի տեղէն ելլել, քուլել, ձեռքերս բուժուած էին ամբողջութիւն:

Ութերորդ օրը, բժիշկը քննեց մարմինս, հրամայեց որ շարժիմ, բայց ես մնացի անշարժ:

— Զարմանալի՛, զարմանալի՛ — ըսաւ, — պէտք եղածը ըրինք եւ ոչ մէկ արդիւնք ստացանք: Պէտք է աւելի լայն տեղեկութիւններ հարցնեմ կեւորոնին: Արդեօք չգիտցա՞նք լաւ գործածել այս մեքենան:



Իրեկուան դէմ, Պէտքերս ներս մտաւ խօսակցելով Մեթը Զիպրանին հետ, որ մեր անձնական փաստաբանն էր...

— Օրէնքի առկէ մեր ամուսինը ողջ կը նկատուի՝ կ'ըսէր օրէնքին մարդը, սակայն, որովհետեւ անկարող է հասարակացութեան մէջ մտնելու իր շուրջիններուն հետ, կարելի է պինդ նկատել անշարժացում, եւ զատարանին դիմելով որոշել տալ խնամակալական խորհուրդ մը, որ մեր ամուսինին անունով որոշումներ առնէ: Այդ խնամակալութեան իբր գործօն անգամ կրնանք որոշել տալ ա՛յն անձերը, որոնց անունը յիշուած է Պ. Արտամանին կտակին մէջ, եթէ այդպիսի թուղթ մը գոյութիւն ունի:

— Այո՛, այդպիսի թուղթ մը գոյութիւն ունի: Երկու տարի առաջ, ամուսինս դրեց իր կտակը, որ ներկայիս կ'գտնուի նոտարին գրասենեակը: Ժառանգութեան մեծ մասը, պրեթէ երեք քառորդը, ինծի ձգած է. մնացեալը իր ազգակիցներուն եւ քարեգործական հարստութիւններուն:

— Երկու տարի առաջ... Վստահ էք, որ կտակը նոյնը կը ժողով:

— Վստահ եմ. ամուսինս ինձմէ բան

չէր ծածկեր եւ զիս տեղեակ կը պահէր իր առած որոշումներէն։

— Շատ լաւ։ Ո՛ր կը գտնուին Պ. Արամեանին անձնական զբաղմունքները։

— Անձնական արկղ մը ունի զբաղմունքներ, որի մէջ կ'ընդգրկուին եւ կըրորդ մըն ալ հոս, այդ անկէն։

— Վաղը այդ երեք զբաղմունքները կը բանանք նոստրին, դատական պաշտօնական մըն եւ իմ ներկայութեան։ Եթէ հոն նոր կտակ մը չգտնենք, այն ատեն ի դուրս կը դառնայ հինը։ Եւ այն ատեն կրնանք կարգադրութիւններ ընել ըստ օրէնքի։

Պէտքերս փաստարանը ճամբեց ու վերադարձաւ։ Գործերն մէջէն առաւ բանալիներն ու բացաւ զբաղմունքը, ուր կը պահէր կարեւոր թուղթերը։ Սկսաւ պրպտել թղթածրարները. մէկէ մէկ անգամ անցաւ բաժնեթուղթերը, սրտնք հարստութիւն մը կ'արժէին. յետոյ տմէն ինչ կարգադրելէ ետք, կրկին գոցեց երկաթէ դուռը եւ բանալիները պահեց ձեռքին մէջ։ Դէմքին վրայ կար դժուարանքալի շար ժպիտ մը, որ ժանգոտած վառարանի մը պէս մխրճուեցաւ սրտիս մէջ։

Բանալիները միշտ ձեռքին մէջ բռնած՝ ուղղուեցաւ դէպի դուռը։ Յուսափառութեան սարսուռ մը անցաւ ժամանէս։ Եթէ բանալիները հետը տանէր, պարտուած էր եւ անկարելիութեան մէջ կը գտնուէր լուծելու վրէժս։ Դուրս չելած, սակայն, պահ մը վարանեցաւ, ու բանալիները հոս դրաւ գործերն մէջ։ Ձէր ուղեր զանոնք քովը պահելով կասկածի տեղի առաւ։

Ուրախութեան անձրեւ մը զովացուց պրկուած ջիւղերս։

Համբերեցի երկար։ Այդ օր ինծի ո՛չ ղեղ արուած էր եւ ոչ ալ կերակուր։ Մոռցուած էի սենեակին մէկ անկիւնը անպէտք իրի մը պէս։ Բայց դժգոհ չէի։ Ամէն մէկ մոռացում, ամէն մէկ գէշ արարք իմ կնոջս կողմէ, ատելութեան քանակը կ'աւելցնէր։

Նսեցի գուրսի դրան ձայնը։ Պէտքերս կ'երթար գիշերը անցընելու իր սե-

րահարին հետ։ Միտերն պիտի տօնէին այս ուրախ առիթը. պիտի խմէին իմ շուտափոյթ մահուանս, օր առաջ տիրապետու համար հարստութեանս՝ տարիններու աշխատանքիս պտուղին։ Այս հարբստութիւնը, որ պիտի ուղէի յանձնել զայս կենեակս։ Սակայն Պէտքերս չէր ուզած զառակ ունենալ, պահելու համար իր բարձել ու նուրբ մարմնին գիծերը։

— Անուշիկ ժպիտով ու վազրի ճիւղաններով սիրելի Պէտքերս, պիտի չըհասնիր նպատակիդ։ Կրնաս պահել նուրբ գիծերդ ու մարմնիդ թարմութիւնը, զայն յանձնելու համար սիրահարդ եւ այդ պիտի ըլլայ կորուստիդ պատճառը։ Եթէ զառակներ տուած ըլլայիր ինծի, պիտի չըլլայի այդքան վրէժնդիւր եւ պիտի չպատահէր դաժնէ օրերու ողբերգութիւնը։

Ողբալ է գիշերը։ Մերթ ընդ մերթ ինքնաշարժ մը կը սուրայ պողոտայի վրայ, կարծես արդարութեան սուղ չէր, որ կը շաչէր խաւարը ճեղքելու համար։ Արդարութեան սուրբ, արդարութեան ժամուն։ Գէշ արարքները միշտ ցերեկ աչքով կատարուած են։ Կէս գիշերը եղած է սեւ հրեշտակներուն ժամը, որոնք կու գան անիրաւները պատժելու։ Գիշերը անդորրութեան եւ ինքնամոգիւսմի պահն է։

Ոտքի ելայ ու սկսայ շրջել սենեակիս մէջ։

Նստայ գրասեղանիս առջեւ, վարդապետ հանգի թերթ մը թուղթ, որ կը կրէր անունս ու հասցէս ու գրեցի նոր կտակ մը, ուր Պէտքերսին ըստինք կ'իշխէր նուազագոյնին, մինչ բարեգործական ընկերութիւնները կը ստանային առիւծի բաժինը։ Ասիկա բաւական չէր սակայն, պատժելու համար անհաստատութիւն։ Վստահ էի որ վերադարձին Պէտքերս պիտի գրաւէր արժեթուղթերը եւ դաքած էր Մոկրաթեանին ուղղուած թիւները առնելու։ Պէտք էր անհասցեէի զանոնք։ Դահլիճին մէջ ունէինք բուխերիկ մը, ուր տակաւին կը մնային ձմեռան կրակներուն մոխիրները։ Հոն գի-

զեկի արժեթուղթերը, որոնք կ'արժէին Հարիւր հազարներ, լուցկին մօտեցուցի եւ հրճուանքով դիտեցի բոցը, որ կը բարձրանար: Գրակէ լեցուն պատարագ մըն էր, որ կը մատուցանէի վրէժի ոստուծոյն: Հարկաւ տակաւին ունէի մեծ գումարներ դրամատան մէջ, սակայն անոնք անձեռնմխելի էին այնքան ատուհ, որ ողջ մնայի:

Բոցը ոչնչացուց թուղթի տրցակները, եւ շքացուց կնոջ մեղաւոր յայտերը: Խաղաղ եւ ուրախ գիշեր մը անցուցի:

### Դ.

Առտուան ժամը տասին մտան խումբ մը մարդիկ: Պէտքերիս ու Սոկրատեսի ուրախ տրամադրութիւն կը ցուցնէին եւ յաճախ իրարու երես նայելով կը ժպտէին: Բանալիները առնուեցան սեղանիս զգրոցէն: Բացուցաւ դրամարկիւն դուռը, դուրս հանուեցան թղթածրարները եւ մէկիկ մէկիկ քննուեցան պաշտօնեաներու կողմէ: Պէտքերիս եւ Սոկրատեսի անկիւն մը քաշուած ձեւական անտարբերութեամբ մը կը դիտեն այս գործողութիւնը: Պիտի հասնին այսօր իսկ իրենց նպատակին: Պիտի միանան մարդոց եւ օրէնքի առջեւ իմ դիմելիս վրայ: Մէկը բերած է իր երիտասարդութիւնը եւ ընչաքաղցութիւնը, միւսը՝ իր գեղեցկութիւնը եւ քաջահամբերը:

Ահաւասիկ դոց պահարան մը, ըստ նստաբլուզի:

Բոլորին առջեւ բացաւ դռնը:

Վտակ մըն է դրուած ասկէ մօտ երեք միւս առաջ: Գրուած է Պ. Ստեփան Արտամեանի ձեռքով. այսինքն օրինաւոր եւ ընդունելի:

Երեք պաշտօնեաները աչքէ կ'անցընեն յօդուածները եւ իրարու երես կը նային:

Տիկին Արտամեան, ըստ նստաբլուզի, այս կտակով ձեր ամուսինը ձեզի ձգած է օրինաւոր նուագազոյնը, այս-

սինքն արժեթուղթերուն մէկ տասներորդ մասը, այնպէս որ դուք չէք կրնաք խնամակալ խորհուրդին մաս կազմել: Իւրեան մեզի կը մնայ ճշգիւ այդ արժեթուղթերուն թիւը, տեսակը եւ գումարը օրոշել: Ի՞նչ կը դանուին անոնք:

Արժեթուղթերը ինքը կը պահէր այս դրամարկիւն մէջ: Յաճախ ինծի ցոյց տուած է դանոնք:

Բայց անոնք հոս չեն ներկայիս: Եւ անոնց տեղը միայն ինքը գիտէ, կամ դուք:

Ի՞նչ ըսել կ'ուզէք:

Ըսել կ'ուզեմ, մէջ մտաւ դատուհան պաշտօնեան, դուք գիտէիք այս կտակին պարունակութիւնը, եւ մեր քննութեանն առաջ վերցուցիք այդ թուղթերը, իւրացնելու համար:

Ես այս կտակի գոյութենէն տեղեկութիւն չունէի. եւ երբեք կ'ընեմ, որ արժեթուղթերը երէկ իրիկուն իսկ այս տեղիկին մէջ կը գտնուէին, եւ բանալին ալ կը գտնուէր այս գլորոցին մէջ, ըստ սովորականին:

Տիկին, ըստ դատական պաշտօնեան, ինդիքը շատ պարզ է: Այդ արժեթուղթերը կամ ձեր ամուսինը պահած է, ինչ որ անկարելի է, նայելով իր վիճակին, կամ ալ դուք, ինչ որ աւելի հաւանական է: Հիմա մեզի կը մնայ ստուգել իրականութիւնը, եւ դատարան յանձնել ձեր պարագան: Ձեր փաստաբանը արդէն հոս ներկայ է, եւ իրմէ կը խնդրեմ, որ պէտք եղած օրինակուն միջոցները ձեռք առնէ ձեր դատը պաշտօնականիւ համար: Մինչ այդ, ձեզմէ կը խնդրենք, որ ոչ մէկ պատրուակով քաղաքէն հեռանաք:

Օրէնքի մարդերը խօսակցելով դուրս ելան, կտակա հետերին տունելով իր փաստաթուղթի: Պէտքերիս անշարժ մնաց տեղը, գլուխը կախ: Երբեք չէի սպասած որ գէպեքը կը հասնին այս եղբայրացութեան: Ամէնէն երջանիկ պահս էր գինք տեսնել այսպէս ընկճուած: Սկսած էի վրէժիս պտուղները քաղել, ճիշդ է, որ անոր համար զոհած էի հարստութեան մեծ մասը, առանց վարանելու. որովհե-

տեւ աւելի դիւրին է մեծ գումարներ շահել, քան թէ կենթ մը հոգիին նուաճել եւ անոր ընդունիլ տալ իր յանցանքները:

Անքերտա մէջ նայեցաւ Պէաթրիս եւ թրկերուն ատելութեան կրակը թափեց: Չյուզուեցայ սակայն. յաղթանակը իմ էր. դատաւարը ե՛ս էի:

— Անպիտան, անպիտան մարդ, — պրտաց, — երբեք քեզ չեմ սիրած, չեմ ալ կրնար սիրել: Քեզի հետ ամուսնացայ, որովհետեւ Հարուստ էիր, բայց առաջին օրէն իսկ քեզ սկսայ խտրել: Ինչո՞ւ պէ՞տ էր այդչափ, ինչպէ՞ս դուշակեցիր... Ո՞ւր են արժեթուղթերը... Ե՛րբ վտակեցիր կտակը:

Կը հրճուէի լուսանքներուն ասկէ: Կը հրճուէի երբեմն կուռքի մը պէս, պաշտած կնոջն փրկութեամբ, կատարեալ կարծած էակին թերութիւնները տեսնելով: Պէաթրիս զիս անարգելու համար սուտ ալ կը խօսէր: Սկիզբները շատ հուսադաւարեմ եղած էր... մինչեւ Սոկրատեսիին ժամանումը, որ ցարդ անծանօթ մըն էր իրեն համար...

Կը փորձուէի խօսիլ իրեն. ըսել հետեւեալը... Պէաթրիս, սիրելի Պէաթրիս, ինչո՞ւ կը յամարես: Կ'ուզես ամէն զնով փրկել արժանապատուութիւնդ, աւելի եւ աւելի խրելով ճախճախտի մէջ: Բայց ինչ որ կ'ընեմ հիմա քեզի համար է: Հարստութեանս կէսը փնտցուցի, որպէսզի ճանչես ինչ պինդք եւ զսուսան այն կիւնը, որ կը կտրծէի: Մի մոռնար որ ես ալ ունիմ արժանապատուութեան այդ յիմար զգացումը:

Պէաթրիս շարունակեց անարդիւլ զիս ու զայրոյթով դուրս ելաւ: Դռներ սկսան բացուիլ ու զոցուիլ. գզրոցներ, դարակներ տակն ու վրայ եղան: Պէաթրիս տրտեթուղթերը կը փնտռէր սէր զնելու համար, որովհետեւ շատ լաւ գիտէր, որ առանց անոնց պիտի կորսնցնէր Սոկրատեսիին: Իրենց սրտերը կապուած էին թուանշաններով. իսկ ես ջնջած էի այդ թուանշանները, որպէսզի ամէն ինչ լլուար անկեղծ ու յստակ. որպէսզի սէրը չզաւեար վաճառքի ապրանք:

Ոտնաձայներ լսեցի նրբանցքին մէջ, արագ քայլեր: Ոտքի հարուած մը եւ դուռն քայցուեցաւ: Պէաթրիս ներս խուժեց, երկու ափերուն մէջ բռնած թուղթի տըրած կտորներ եւ մօխիւր. իր կարծեցեալ երջանկութեան մոխիրները, ինծի ժօռեցաւ հետալով: Ջայրոյթը լայնացած էր ըրերը եւ չրթները կը դուրս գնէր: Ծիւղ դէմ կանգ առաւ եւ յանկարծ ափերուն պարունակութիւնը նետեւ երեստ:

— Ա՛ռ, անպիտան, — պրտաց, — ա՛ռ, կշտացի՛ր, ազա՛ն մարդ, ինչ որ այժմ ես, չես կրնար մեզ բաժնիլ իրարմէ... ո՛չ մէկ ուժ կրնայ բաժնիլ երկու սրտեր, որ իրարու կապուած են... ես սիրած մարդուս հետ չոր դետնի վրայ իսկ կ'ապրիմ...

Ոտքէս մինչեւ գլուխ ծածկուեցայ ծախերով եւ թուղթի փշրանքներով: Արիւնս սկսաւ հոսիլ, քիչ մնաց որ ոտքի ելլէի եւ դուրս նետէի անպիտանը: Բայց կրկին կըցայ զսպիլ ինքզինքս:

Պէաթրիս, վախճալով որ մէկը կըրնայ յանկարծ ներս մտնել ու զիս տեսնել այս վիճակին մէջ, կամ ալ թերեւս զլլալով ըրածին վրայ, անմիջապէս խողանակ մը եւ անձեռոց մը բերաւ եւ սկսաւ մաքրել վրտա գլուխս: Հիւանդութեանս սկիզբէն ի վեր առաջին անգամն էր որ կը զբաղէի ինձով, եւ կը զգայի որ այդ կ'ընէր արողով: Անքերուն չար փայլը չբացած էր եւ խոնաւութեան չղարչ մը կը մեղմացնէր նայուածքը:

Յաջորդ քանի մը օրերը, Պէաթրիս հազիւ պատասխանեց հեռաձայնին, եւ մէկ անգամ միայն բացակայեցաւ, այդ ալ հազիւ կէս ժամ: Ետեւի կը մտնէր սենեակս, կարդի կը գնէր ամէն բան, դեղերս կու տար ժամանակին:

Երբեմն կողմնակի նայուածքներ կը նետէր իմ կողմս: Բաներ կային որ կ'ուզէր հասկնալ: Իրեն համար դարձած էր առեղծուած մը: Ինչպէ՞ս կրնայի անգամալործ ըլլալ, զամուսն թիկնաթոռի մը եւ նոյն ատեն դահլիճի թուխքի կիկին մէջ վառել արժեթուղթերու տըրցակը:

Շարաթ մը հաջ քովիկը եկաւ :

— Մտացայ մանրամասն տեղեկու-  
թիւններ դործիքի մասին : Վստահ եմ  
որ քանի մը օրէն կը բուժուի ձեր ամու-  
սինը :— Ըսաւ :

Երկրորդ օրը ալ թեւս վեր բարձրա-  
ցուցի, երրորդ օրը սկսայ կակաղել, չոր-  
րորդ օրը ոտքի էի արդէն : Բժիշկը ու-  
րախութենէն կ'երթեւեկէր սենեակին  
մէջ : Իր կարծածէն աւելի ազդու էր զոր-  
ծիքը : Ես բուժուած էի շատոնց :

Առտու մը, Պէտքերիս ներս մտաւ,  
մեկնելու կազմ ու պատրաստ :

— Այսօր իսկ Սննիկ կը վերադառնայ  
արձակուրդէն, կարծեմ այլեւս ինծի  
պէտք չես ունենար :

— Կը հասկնամ վիճակդ. դիւրին չէ  
անդամաւործ ամուսին մը ունենալ. տե-  
սակ մը կենդանի իր... Մարդ այսպիսի  
պարադաներուն գլուխը կը կորսնցնէ,  
մանաւանդ երբ շուրջը կը դառնայ ճար-  
պիկ ու շահախնդիր երկատառարդ մը :

— Որքան յիմար ենք, որքան շուտ կը  
խաբուինք... Եւ վայրկեան մը տեւող  
խաբկանքին համար կը զոհենք մեր ամ-  
բողջ երջանկութիւնը...

— Իսկ մենք, այր մարդիկ, կը մոռ-  
նանք որ կնոջ մը սիրտը բերդ մըն է,  
զոր պէտք է նուաճենք ամէն օր, ամէն

վայրկեան, եւ չքնանանք մեր դասիննե-  
րուն վրայ : Անգամ մը որ թուլցնենք  
մեր ճիգերը, կը կորսնցնենք բերդին տը-  
րակալութիւնը, եւ ուրիշ մը կրնայ ար-  
շաւել անոր դէմ եւ նուաճել զայն :

— Գիտեմ որ այլեւս չես կրնար հե-  
րել ինծի, պէտք է որ անհետանամ : Ո՛չ  
միայն անհետատարիմ գտնուեցայ, այլ  
նաեւ արհամարհեցի եւ անարդեցի քեզ :  
Ես ինձմէ կ'ամշնամ հիմա. բայց կարծեմ  
թէ շատ ուշ է այլեւս : Մեղքեր կան, որ  
չեն ներուիր : Ներումն իսկ, չի կրնար  
ամբողջովին փնջել անոնց հետքերը :

— Այդ բաները մեր կարողութենէն  
վեր են : Ժամանակն է որ կը դործադրի  
վճիռը. եւ միայն Աստուած կրնայ սալ  
հոկեկան խաղաղութիւն : Դատելու իրա-  
ւունքը ոչ ոքի արուած է : Նոյնիսկ դո՛ւ-  
ւար է ինքզինքը դատելը :

— Դուն քեզի լաւ նայէ, — Ըստ Պէտ-  
քերիս դէպի դուռը քալելով, — ցտեսու-  
թիւն : Ես կը մնամ ծնողքիս տունը. եթէ  
պէտք ունենաս ներկայութեանս, հեռա-  
ձայնէ եւ անմիջապէս կու գամ :

— Յետեւութիւն, Պէտքերիս, ժամա-  
նակն է մեր տէրը :

Գոցեց դուռը ու հեռացաւ. հանդարտ  
քայլերով :



## ԴՈՒ ԶՄՈՒԱՑԱՐ

Դու մանկութեանս պէս չիմէ,  
Մահաւր մահբաւթիւն.  
Կնուած մի սիրումս պատեն աւիթից՝  
Մանկութեանս պէս սաւրբ —  
Մահաւր յայտնութիւն:

Դու իմ կեանքի այն վարդայուշ,  
Այն վաղմբակիսն ազդամուզում  
Ենուած կապոյտ ջրերի փրփուրից,  
Որպէս դիզուիւի,  
Որպէս Մառա  
Յայտնութիւն ինձ:

Դու կիմ, դու ինչ,  
Դու սիրոյ տառաւածային  
Առաջին հաղորդութիւնը  
Հոգուս.  
Իմ առաջին սէր,  
Մահաւր մահբաւթի:

Երբ տարիներն ու ժամանակի  
Քեռով ծանրաբեռ,  
Քշուած անյաջ յոռմամբերի  
Կիզում կարօտով  
Քո զէմը ելայ,  
Դու որպէս մահբաւթեան Պարօս,  
Իմ անգոր ու անփորձ սրտում  
Վառնցիւ վառագնեան ծիածանաշող  
Փխրում ու բեկ-բեկում լայսը:

Դու լոյսի ու բացի  
Ամբիծ ծիր կաթիլ,  
Մի այլ արեգակ —  
Ես մի երբեմն  
Ենթադրութեանս:

Առաջին անգամ կեանքում,  
Իմաստութեան երգը քրքռում,  
Որպէս սրբութիւն սրբաց  
Երկիւղածութեամբ ու վսեմ  
Մատուցիւ շուրթերիս,  
Ու ես դարձայ իմաստուն,  
Դարձայ խոհուն:

Համբարդներ էինք...  
Մենք բաժանուեցինք.  
Մեր վիճակն այլ էր —  
Մենք անշատուեցինք:

Յետոյ... Կարօտից քեզ.  
Կանչեցի քեզ.  
Դու լսում էիր իմ կանչը.  
Ու ես լսում էի արձագանքը կանչիս:

Դու հեռուից ներշնչում  
Ու յայտ էիր ապիտ ինձ:  
Քո խոստումները  
Լոկ կարօտ ու կրակ.  
Դու միշտ հեռաւոր ու անտեսելի,  
Դու մի այլ արեգակ —  
Ես մոլորուած մի կրակ:

Կանչեցի քեզ...  
Դու չեկար.  
Դու աւելի ու աւելի հեռացար  
Մակայն, չմտադար:

Կեանքի յարձանուսներում,  
Հոսանքներով բիրտ ու հար,  
Քշուեցի հեռու, հեռու:  
Անկումներ ու վերելքներ  
Ունեցայ բազում:

Եւ մոլորակեցի,  
Իսկ դու աւելի հեռացար.  
Հեռացար,  
Բայց չմոռացար:

Ու եւ կանչեցի՝ քեզ մտրեմ,  
կանչեցի՝ երգերիս յառն  
Խափով ու յամբով.  
Կանչեցի՝ քանառեղծի՝ մահաւոր  
Շուրքերով,  
Կանչեցի՝ սքսիւս ու հոգստ  
Կարկաշեքով՝ հիր ու վառմուն:

Ինչ լսում էիր իմ կարօտի կանչը.  
Ու աւելի հեռանում էիր.  
Ինձ փորձում էիր,  
Ինձ տանջում էիր,  
Ու հեռանում,  
Հեռանում էիր:

Դու, հեռացար,  
Բայց չմոռացար:

Դու հարծար անեպանն ու ջնարուն.  
Եւ ինչպէս մի լուստբազ ու լազուտոյ  
ծրաց,  
Ինչպէս անհասանելի գետն անապական,  
Այն լուսե քարանձախից  
Իմօ կանչեցիք,  
Ինչ անուշեցիք -  
Գու լեզ Լուստ Էրք:

Դեպի բարձունքն էիք կանչում ինձ,  
Դեպի Պառնասի գլխավերջը անժիթը.  
Դեպի շաղի ու շաղի  
Առաքատները լուսն:

Դու կանչում էիր ինձ,  
 Ու ես փայլեցի...  
 . . . . .  
 Ու ես փայլեցի -  
 Վերաբեմ հզու դժգոհ ու դաժան,  
 Քայց մեզմ ու մտնւ հանելի:

Հնուեց հետու,  
Հետեւում էր դու ինձ.  
Դու ինձ չլիցեցիր, չմոռացար:  
Դու լու Մուսա էիր,  
Ու ես երգորնվս հիր ու վառաճ  
Կանչեցիր քեզ.  
Անդառնալի ու խենթ սիրով  
Սիրեցի քեզ -  
Ես խենթ էի ու եղբ:

Դու աւելի եեռացար,  
 Սակայն չմտացար:

Անաստիս,  
Որպէս վերջին լիազօրութեամբ,  
Որպէս վերջին առեւտրային,  
Ու քաղաքապետի,  
Մեր անդիտի որդի աւ ձառնադրութեամբ  
Իմ այս երգերի փոխիչ  
Բնիկ եմ նուիրում,  
Որպէսզոր մեր անօրինակ սէրը  
Երբ քարձած,  
Միշտ չափելի աւ յուրեք ասորի:

ՀԱՅԿ ՅՈՎՍԷՓԵԱՆ

#### 4. ՄԱՍՈՒՆԻ

## ՄԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ

ՄԱՍՆ Ե.

### ՄԵՀԵՆԱԿԱՆ ՊԱՍԿԸ

Մարհատի մարտիկները կռթնած էին ծառերուն ու կը մրափէին։  
Յրեւի հառադողթները լոյսերու զիկվակներով կը կայծկլտային Սոս-  
կաց անտառին մէջ։ Մառերը, սօսափումներով, հրճուանքն ունէին իրենց  
ծոցին մէջ օրօրելու անձնուրաց այս մարտիկները։

Հեթանոսական մթնոլորտը տիրական մնացած էր այս բարձունքնե-  
րուն՝ վրայ, հակառակ էուսաւորչի բարձրադիր զմբէթներուն։ Ազատու-  
թեան խիղախող մարտիկները հին օրերու հեթանոս մարտիկները կը յի-  
շեցնէին։ Ու անտառը շնչաւոր ու խօսուն մեհեան մը դարձած էր։

Մարհատ առանձին թիկնած էր մեծ սօսին։ Այնքա՛ն տարիներու  
մտերմութեամբ կապուած էր անոր։ Երբ խումբերը Սոսկաց անտառը կը  
մտնէին հանգստանալու, դիտէին թէ Մարհատ այդ ծառին տակ խոր քու-  
նի կը մտնէր։

Մարհատ, հակառակ յաղնութեան, աշխարհ մը չափելու մտատան-  
ջութեամբ տարուած էր։

Սոսումը ազատած էր կոտորածներէն...

Սոսումը ներկայ էր իր կեանքի հորիզոնին վրայ...

Ու անոր ներկայութիւնը, Մուրբ Եռմահանու զմբէթներուն տակ,  
կեանքի շուր ողբերգութիւն մը կը բանար իր առջեւ։

Քսան տարուան սրտայոյզ ապրումներու աշխարհը ժապաւէնի պէս  
կը դառնար իր մտքին մէջ։

Որքա՛ն դէպքեր եկան եւ անցան իր երկաթէ ջիղերուն վրայէն։

Որքա՛ն գնդակներ անցան իր ականջին տակէն։

Ու հիմա, թաքուն զգացումներու վերլուծները, հոգեկան կայծ-  
կըլտումներով, իր ներաշխարհային լուծեան մէջ, հրարութի պէս կը  
պայթէին։ Սէրն ու մահը միասին կը ճնշէին այս երկաթեայ սիրտին։

Մահը արհամարհած՝ խիղախութեամբ քսան տարի ազտաութիւն  
դրոշը պարզած էր Տարօնի աշխարհին մէջ։

Ազատութեան ճանապարհին դրած էր իր կեանքը, զրկուած էր տունէն ու տեղէն, հրաժարուծ էր աշխարհի բոլոր բարիքներէն, վստահ թէ իր եւ իր ուխտակից ազատամարտիկներու արեան գնով, հայոց աշխարհը պիտի ազատուի եւ վերականգնէ իր հին փառքը:

Սարհատ այս բոլորը յանձն առած էր խոր հաւատքով, աներեք կամքով եւ մահը դիմաւորած էր զիւցազնի անվեհերութեամբ:

Պահած էր դանձ մը միայն, անշուշտփելի, երազային, պատանեկան ուրիշ անձար, թաքուն պանծ մը, որ իր հետ անդիլի աշխարհը պիտի տանէր, որպէս իր հոգիին անբաժանելի մասնիկը:

Սուսամբ...

Անշուշտի հոգեկան հարստութիւնը այս հերոսին, որ քսան տարի փորձը շրջաւ երեսը տեսնելու իր երազային էակին: Դաժան ու շիկացած երկաթ էր ազատութեան ճանապարհը, որով անցաւ Սարհատ, ու երբ կծկուէցաւ քարանձաւներուն մէջ միմակ ու անօթի, շօշափեց զէնքն ու դրանք եւ ճողացաւ աշխարհը:

Սուսամբ ներկայ էր Մարհատի մօտին մէջ: Կեանքի ու մահուան գուպարներէն ետք, երբ կ'ապաստանէր մութ քարանձաւին մէջ, երազային սիրոյ յուշը արեւ կը վառէր ունոր հոգիին մէջ:

Վազր, կուր կրկին պիտի սկսէր: Կրկին Դոյաժարտ՝ արիւնոտ բռնակալութեան գէմ... Ժինշեւ ՄԱՅԻՍ 28-Ը:

Ու ահա, առաջին անգամիւ էր որ ուղղակի իրեն ուղղուած էր Սուսամբի հիշքը:

Կուրկէ տեսնել զինք, երկու խօսք խօսիմ իր հետ, թող զիս մեռցնէ...

Քսան տարիներու անանձնական փոթորիկներէն ետք, անձնական կեանքի ճակատամարտ մը կը բացուէր Սարհատին առջեւ: Ան որ ճակատամարտներն ընդունած էր երգով ու ժպիտով, անվճռական խորհրդածութիւններու մատնուած էր այդ պահուն:

Ֆետային... Ո՞ր է Ֆետային...

Հրաժարած ամէն բարիքի, նուիրուած էր ազատութեան մարտին: Թաւառաւոր յեղափոխութիւն, որ այնքան ողբերգութիւններ արձանագործած էր լուռ սիրտերուն մէջ:

Ֆետային...

Բուռ մը բովում ալիւր, ու նշխարձ մը իր տապալակին մէջ: Օրերով անօթի կրնար մնալ, ու պիտի բուռ մը ալիւր ծամէր, մահ պատերազմի ելլելէ առաջ: Ու եթէ... Թշնամիին դնդակը սիրտը ծակէր, ու ինքը, կեանքի վերջին շունչին՝ արթուն բլլար, նշխարձի կտոր մը պիտի ընդունէր որպէս վերջին հաղորդութիւն...

Սրբադան հաղորդութիւն մը, ուր Աստուած վար իջած կ'ըլլար իր բարձունքէն, անօրինակ նահատակը սրբացնելու:

Սարհարու Աստուծոյ բնազդարար շօշափեց իր կողքէն կախուած տողալի ըովում ալիւրը եւ նշխարձի կտորութիւնը:

Անդին, Սուսամբ գողաճար կը սպասէր Ս. Յովհաննու քմբէթին տակ, ուրթողի գիրքով:

Գալէն եւ Մանուկը մօտեցան Սարհատին:

Երկուքն էլ սկսած, ամպոտած եւ, ինչ կայ, - հարցուց Գալէն, - եւ ու Մանուկը քեզի հետ պիտի խօսէինք, բայց տեղ մը դադար չըրինք: Ինչ լուր բերած էր Ս. Յովհաննու հովիւրը:

Տխուր ժպիտ մը դէմքին, Սարգստ հարցական նայեցաւ իրմէ անբաժան երկու մարտիկներուն։

— Ինչո՞ւ կը հարցնէք։ Եթէ կարելո՞ր զործի մը մասին ըլլար, ա՞րդէն կարդադրութիւն ըրած կ'ըլլայի, ու դուք կը գիտնայիք։

— Խօսքը կոտի, կամ վտանգի մասին չէ, — ըսաւ Գալէն, — այդ գործերու մասին դուն բերանդ կը բանաս, ու մենք մէջտեղ կը նետուինք։ Սիրտս կը խօսի, Գէորգ, սիրտս կը խօսի որ ամպեր եկան Հեղինէն...

— Տնալէն Գալէն պիտի գարձած է, Մանուկ, դուն Գալէի այսքան երկար խօսիլը լսած էս։

— Պարո՞ն Սարգստ, Գալէն անցած օր երբ Յակէի անգլիոթիւնները մտիկ կ'ընէր, անկէ յետո՞յ որ Հեղինի իշխան վարդանի աղջիկը Ս. Յովհաննէս եկած է։ Գալէն ուզեց որ երկուքս քեզի Հետ առանձին խօսինք։

— Էն Հովիւր, երեւի քեզի Հեղինի Սուսամէն լուր մը բերած էր, որ դուն ամպտեցար, — եզրակացուց Գալէն։

Սարգստ ժամանակ չունեցաւ պատասխանելու։ Նոյն պահուն Սօսեայ Հովանիին տակ մտած էր Ստեփան վարդապետը, Հինաւորաց մարտիկ եւ Ֆետայի, բայց միշտ սեւագլուտ ու Ս. Կորուպետի միաբան։

Սարգստ եւ Ստեփան վարդապետ գրկախառն մնացին երկար պահ մը։ Երկուքն ալ Բանասց գաւառէն էին։

Ֆետայիները Համախմբուեցան։ Ստեփան վարդապետ իր տեղեկութիւնները տուաւ։

— Վաշտ մը զօրք վանքի մէջ կը մնայ։ Թուրքերը յուսահատ կատաղութենէ մը բռնուած են։ Ձեր հարուածները չլծեցուցիչ էին։ Վանքի հրամանատարը շատ յաճախ վարդան վարդապետէն եւ ինձմէ կը հարցնէ։

— Ո՞ր է Գէորգ Ջալուլը։ Գիտենք թէ ամէն օր դատին մէջն է եւ ռական շինք կրնար ձեռք ձգել, ի՞նչ տեսակ մարդ է այդ կեալուրը։

Ես եւ վարդան վարդապետ Գէորգի եւ ձեր հասցէին հայրոջանքներ կը տեղանք, ու թուրքերէն անկէժքներ ալ վրան կ'աւելցնենք...

— Տեսա՞ք, տղա՛ք, անիծուած ենք, — ըսաւ Սարգստ, — խելօք կեցէք։

— Ատոնց անէժքը օրհնութիւն է մեզի համար, — մրմուռացին մարտիկները։

Պաշար բերին Հովիւները ու Ֆետայիները ճաշի նստան։



Սարգստ եւ Ստեփան վարդապետ առանձնացած էին նշանաւոր Սօսիին տակ ու կը զրուցէին մտահոգութեամբ։

Գալէն ու Մանուկը անոնցմէ քիչ մը Հեռու, ծառերուն կը քուլէին, ականջները սրած, բուն մը բռնելու Սարգստի շրթունքներէն։

— Ստեփան հայր սուրբ, պատասխան մը գրէ Ս. Յովհաննէսի վանահօր, ես անձամբ անոր նամակ չեմ գրեր։

— Ի՞նչ վրեժ, ի՞նչ պատասխան տամ, Գէորգ, գիտես թէ ան շատ կը զուշանայ քեզմէ։

— Գրէ որ ես զէնքին Հետ պսակուած եմ, այսօր կ'ամ, վաղը չկամ... Սուսամը թող տունը գառնայ։

Գալէն ու Մանուկը մօտեցան։

— Գալէն խնդրին ծածոթի է տասներհինգ տարիներէ ի վեր, — ըսաւ Սարգստ, — Գալէն ու Մանուկը նամակը կը տանին:

Յանձնաւ վարդապետ բացատրեց խնդիրը.

— Տղա՛ք, Հեղինի իշխան Վարդանի աղջիկը եկած է Ս. Յովհաննու վանքը: Վանահայր Մկրտիչ վարդապետը նամակ դրած է ինծի.

— «Սուսամ կ'ուղէ Գէորգը տեսնելի՛ յայտնեցէք Գէորգին, ի՞նչ կը կարգադրէ, իր գիտնալիքն է, այս խնդրէն ետ ձեռքբերա կը լուսամ...»

Ստեփան վարդապետ նամակը կարգաւէն ետք քթի տակէն աւելցուց՝ «Պիղատոսի նման...»

Պիղատոս, կամ վանահայր Մկրտիչ վարդապետ, ի՞նչ կրնար ընել: Անոյս ու անել սիրոյ ոգրերգութիւն մը տաւր տարիներէ ի վեր, անպատմելի տանջանքներու մատնած էր չքնաղ Սուսամը: Ֆեստային լիտներուն վրայ... Ե՛ղ տեսած ու լսած էր որ պիտի աճուանանայ: Եւ տակա՛ն, Սուսամ, անընկճելի կամքով, երազած ու ուզած էր: Աւ հիմա, երբ իրեն պարտադրուած աճուսինը չկար, հայրենական լէն օճախը քանդուած էր, ու ինքը հրաշքով ապաստած 1904-ի արիւնշալի կոխնէրէն, կ'ապաստանէր Ս. Յովհաննու վանքը, յոյս ունենալով թէ օր մը պիտի տեսնէ Սարգստ Ասլանը:

— Տեսնեմ Գէորգը, երկու խօսք խօսիմ անոր հետ, թող գիտ ուզան-ենն...

Սուսամի բաղձանքը, այնքա՛ն արտառուշ, հիմա, Սոսեայ անտառին մէջ դառաւտանի գրուած էր: Դատաւիճիւրը արդէն տուած էր, մահուան վճիռ՝ իր անձին հանդէպ, ու մահամերձը մէկ խնդրանք ունէր, տեսնել Գէորգը...

— Մահամերձի խնդրանքը չեն մերժեր, — ըսաւ Ստեփան վարդապետ, ու մնաց սպասողական:

Մանուկը անդիմէն.

— Հայր սուրբ, հարիւրաւոր անձնազուհէ կիներ եւ աղջիկներ կը մատնակցին մեր ազատագրական շարժումին, մէկն ալ թող Սուսամը ըլլայ...

— Ստեփան վարդապետի նամակն առէք եւ դացէք, — ըսաւ Սարգստ, — ինչպէս կ'ուղէք, այնպէս վերջացուցէք: Գիտցէք որ մենք արիւնտու ճամբաներու վրայ ենք, եւ մեր արշաւանքները աւելի բուռն պիտի ըլլան:

Սարգստ լռեց եւ թաղուեցաւ մտածումներու մէջ:

Ստեփան վարդապետ ոտքի ելաւ եւ անանձնացաւ Գալէի եւ Մանուկի հետ: Երկտող մը տուաւ անոնց որ յանձնէին վանահօրը.

— Սուսամը ո՛ղջ կը բերէք անտառը, մարտիկներէն հետու տեղ մը կը պահէք եւ կը տեղեկացնէք ինծի: Այս դործին մէջ Աստուած մեզի հետ կ'ըլլայ: Եթէ մեզք մը կայ, այդ ալ թող իմ վզին փաթթուի...

Գալէն եւ Մանուկը ուրախ էին որ երազ մը իրականութեան կը մօտենար: Ճամբայ ելան եւ խիտ անտառին մէջ անհետացան:

»

Արշալոյսը նոր կը բացուէր, երբ Գալէն եւ Մանուկը, խոժոռ դէմքերով ներս մտան Ս. Յովհաննու վանքի անտեստունը: Հովիտները գանձեց դիմաւորեցին ուրախութեամբ, Մանուկ իր մօտ կանչեց Փեթարցի Հովիւը:

– Հոգիները թող իրենց զործին երթան, գուն հոս կեցիք, նամակ պիտի տանիս վանահօր: Բերանդ գո'ց պահէ:

– Աչքիս վրայ, Մանուկ: Յոռմբին պաշար պիտի տանի'նք:

– Պաշար տանելու զործ չկայ: Կրնա՞ս ըսել ուր է իշխան Վարդա- նի աղջիկը:

Հոգիւր, որ շատ յաճախ Ծեռայիներու դործակատարը եղած էր, սարսուռ մը զգաց, երբ հարցում եղաւ Սուսամի մասին: Յեղափոխական կեանքը դաժան էր, դաժան վճռի մը վախը համակեց զինքը:

– Մանուկ, Սուսամը տնտես կիներուն հետ կը մնայ, հայր սուրբի կարգադրութեամբ: Ի՞նչ կայ:

– Բան մը չկայ: Դուն այս նամակը հասցուր հայր սուրբին, որ հոս պայ:

Հոգիւր առաւ նամակը ու հեռացաւ դուռից կտի:

Ճ

Արեւը նոր էր ողողած անառը:

Վանքի տնտեստունը խորհրդաւոր միջոյնքով մը կ'ապրէր: Մուտք ու ելք ընող հոգիներն ու տնտեսուհիները, կեկուած ու լուս՝ կ'երթեկեկէին: Ու երբեմն ալ մասը շրթունքին, լուսթեան ալիքարարութիւնը կու տային իրարու:

Երկու Ծեռայիներ, արշալոյսէն տաջ, մութ ու մոռլ ստուերնե- լու պէս, ներս մտած էին տնտեստուն: Փաղտնիքի հով մը քոլորը կաշ- կանդած էր:

Ու հիմա, վանահայրը հասած էր, վախն ու յուզումը զէմքին: Ան- զին, վանքին մէջ, թրքական վաշար կը մնար որպէս սպառնալիք...

Վտանդաւոր գէպքի մը նախազգացումը կ'ապրէին տնտեստան ծա- ռայողները, որոնք, երբեմն, խաղաղ կեանք մը կ'անցնէին տնտեսին եւ կենդանիներուն հետ:

Վանահայրը խորհուրդի նստած էր Ծեռայիներուն հետ:

Պարզունակ աշխատաւորներն ու տնտեսուհիները, ամէնօրեայ գէպ- քերէն վարժուած էին արիւնի հոտ առնելու: Վանքին մէջ թրքական զօրք, իսկ տնտեստուն՝ երկու սպառազէն Ծեռայի:

Դէպքը առմբի պէս կրնար պայթիլ:

Վանքի փոքրաւորը, որ դրան առջեւ կը սպասէր, ներս վազեց: Վա- նահօր ձայնը լսած էր:

– Տղա՛յ, Մարտիրոս, տնտեսուհիներուն մօտ անցիր եւ Հեղինայի այն կիկը հոս կանչէ:

Եփոթը աւելցաւ ծառայողներուն մէջ, երբ Սուսամ համարձակ քայլերով անցաւ իրենց առջեւէն եւ մոտա վանահօր մօտ:

– Հա՛յր սուրբ, զիս կանչած էիր...

Սուսամ վախով համակուեցաւ, երբ վանահօր քովը տեսաւ երկու Ծեռայիները, մոռլ զէմքով: Ինքնամոգիւլութեամբ, լուս եւ սպանեց վա- նահօր պատասխանին:

– Սուսամ, Ս. Կարապետի վանքը պիտի երթաս: Փալէն եւ Մանու- կը եկած են քեզ տանելու: Մեր Ստեփան վարդապետը նամակ գրած է որ

անմիջապես քեզ ճամբայ հանեմ... Պահ մը լռելէն ետք, — խրատեցի՝ չեղաւ, ձեռնցի՝ խօսք շահակցար: Աստուծոյ տոջնէ անպարտ եմ:

— Հայր սուրբ, ի՞նչ որ պրտած է ճակատիս, այն թո՛ղ կատարի... — ըսաւ Սուսամբ, սառն, արձանացած:

Մկրտիչ վարդապետ ոտքի ելաւ, մտահոգութիւնը ունքերէն կախած: Խղճի խայթ ունէր: Ֆեոտայիներու վճիռները դաժան էին եւ սուրբ կտրուկ: Սուսամբ կրնար պո՛հ երթալ վանահօր խիտ եւ անմիտ վարժունքէն:

— Կը խնդրեմ, ըսէ՛ք Ստեփան վարդապետին, որ երկտող մը ինծի հասցնէ, ես այս գործէն ձեռքերս կը լուամ: Աստուած թող արդար դատաստան ընէ:

Վանահայրը հեռացաւ կքուն, ու քթի տակէն մրմնջաց.

— Երթաք խաղաղութեամբ, Աստուած ձեզ հետ...

Գալէն եւ Մանուկը ոտքի ելան:

— Վարդանի՛ աղջիկ, քելէ՛...

Սուսամբ տեսեսուհիներուն կողմը անցաւ եւ փոքրիկ Ծրար մը անութիւն տակ՝ վերադարձաւ:

Անմիջապէս ճամբայ ելան: Անոնց ընկերացաւ Փեթարցի հովիւը, պաշարի Ծրար մը ձեռքը: Անդիւր օրէնք էր, փոքրիկ պաշար մը հասցնել ֆեոտային տեղափոխուած պահուն: Ո՛վ դիտէ, ֆեոտային կրնար քարանձաւ մը ապաստանիլ եւ շորս-ինչ օր ապրիլ այն բովուած բուռ մը ալիւրով, որ կը մնար իր տոպրակին մէջ, որպէս վերջին ապաւէնը:

Անոնք մտան անտառը եւ հետեւեցան հովիւին, որ առջեւէն կը քալէր: Լուռ էին, խոհուն ու ժռայլ: Խիտ անտառի մթնոտներէնը այս լուսթեան սարսաղին զգացում մը կ'աւելցնէին: Սուսամբ կը քալէր Մանուկի կողքին: Գալէն Ծանր ժայռի մը պէս կ'անցնէր Ծառերուն ընդմէջէն:

Սուսամբի սիրտը կը խօսէր: Յուզումները ալիք կու տային՝ անոր հոգին ցնցելով: Ո՛րք կ'երթար, ինչո՞ւ կը տանէին զինք զէնքի շաշիւնով, արդեօք այս մութ անտառի՞ն մէջ պիտի վերջանար իր կեանքը, այնքան փոթորիկներ ապրելէն ետքը:

— Աղբրտի՛ք... — սիրտ ըրաւ Սուսամբ իր հոգեկան ճիշդ արտայայտելու, — աղբրտի՛ք, ձեզմէ կը խնդրեմ, որ դիտ սպաննելէ առաջ, Գէորգին հասցնէք: Երկու խօսք խօսիմ անոր հետ, իմ մահս ձեզի հալալ...

Գալէն լուռ կ'աղնի ծառ մը, որ կարծես հրաշքով կը շարժէր: Մանուկ Ծռեցաւ Սուսամբի ականջին՝ խօսուն ժպիտ մը զէմքին.

— Քոյրի՛կ, մի վախճար, ես քու աղբէրն եմ...

Սուսամբի երկար տարիներու վիշտերը հալեցան, ծով դարձան, սիրտը ալեկոծեցաւ, ու արցունքներով ողողեց անոր դէմքը:

Կը քալէին լուռ: Լուռ էր Սուսամբ ալ, բայց աչքերը աղբի՛ր դարձած էին: Արցունքները անոր վիշտերը կը պարպէին, տարիներու տառապանքը կը հալէր, եւ հոգին միթոքարանքով կ'օծուէր:

Սուսամբ մըմունջով զրոյց կ'ընէր իր սիրտին հետ.

— Ֆեոտայի եղբայր մը ունիմ... պաշտպան եղբայր ունիմ, երազներուս ճամբուն վրայ:

Գալէն, հագուազէպ ժպիտ մը շրթունքին անկիւնը, դարձաւ Սուսամբին.

— Վարդանի աղջիկ, աչքերդ սրբէ, մենք երկար ճամբայ պիտի կտրենք:



Գալիլի. պէս լուռ Գալիլի խօսքը կրկնակի սփռմանք մը եղաւ Սուսպի համար:

— Աղբրտի՛ք, ձեր հողուն մատաղ... — Սուսա՛մ չկրցաւ շարունակել, սիրտը ալեկոծ էր:

Հասած էին անտառի արեւմտեան մասը, ուրկէ Ս. Կարապետի քար-ձունքներուն ուրուադծերը կ'երևէին հոսու հորիզոնին վրայ:

Վանքի հովիւը պաշարը յանձնեց Մանուկին:

— Աստուած ձեզ հետ... — ըսաւ, ու արագ քայլերով հեռացաւ:

Անտառի բացատքին, մեծ կաղնիներուն տակ հանգիստ առին: Հսն պիտի մնային մինչեւ արեւը մար մտնէր:

Գալէն ծխամորճը վառած, գոհունակութեամբ կը ծխէր կաղնիններու հովանիին: Մանուկն արդէն քնացած էր: Իսկ Սուսամը, քանի մը քաջ անդին, կաղնի կոճղին տակ ինքնամփոփ, երազն ու իրականութիւնը կը չափէր եւ քսան տարուան անցեալի մը ժապուէնը կը դարձնէր իր մրտքին մէջ:

Կէսօր էր երբ Մանուկ արթնցաւ:

— Գալէ՛, դեռ չե՞ս քնացած, այդ երկար ճամբան ի՞նչպէս պիտի կտրենք, երկու օրէ՛ որ աչք չեա՛ դոցած:

Գալէն ծուռ նայեցաւ Մանուկին, անխօս:

Ծխամորճը վառած էր ու անոր հետ կը զրուցէր լռելիայն: Փորձըւած հին ֆետային դիտէր, թէ առանց արթուն պահակի, իրենք կրնային վտանգուիլ:

Սուսամ Գալիլի տնունը երբ լսեց, սիրտը աւելի տմբացաւ: Լսած էր որ Սպարանցին Գէորգի անբաժան ընկերն է:

Համարձակեցաւ ձայն բարձրացնել:

— Աղբրտի՛ք, դուք հանգստացէ՛ք, ես պահակ կը կենամ...

— Ըհհ՛, ֆետայի մըն ալ տւելցաւ, եղանք երեք, — քթի տակէն խօսեցաւ Գալէն:

Մանուկ սրտանց կը խնդար:

— Քոյրի՛կ, պատառ մը հաց ուտենք, մենք կը հանդատանք, դուն ալ պահակ կը կենաս:

Գալէն ու Մանուկը քանի մը վայրկեանէն հացն ու պանիրը լափեցին, կարծես թէ կռուի պիտի երթային:

Այդպէս վարժուած էին: Ուսելը արագ վերջանալիք գործ մըն էր, ոտքի վրայ անմիջապէս:

Սուսամ, իր բաժին հացն ու պանիրը ծունկին, երջանկութեամբ կ'ուտացած էր: Յուսալից երջանկութիւնը իրականացած երջանկութենէն շատ աւելի ծովացած էր անոր հոգուն մէջ: Աշխարհն իրեն տուած էին... Արթնն պահակը պիտի ըլլար այս քաջակորով ֆետայիներուն, որոնք զինք կ'առաջնորդէին դէպի իր երազներու իրականացումը:

Գալէն կոթնեցաւ կաղնիի քունին ու շարունակեց ծխել:

— Մանուկ, աչքերս կը գոցուին, — ցած ձայնով, — դուն ալ հանդիւստացի՛ր, բայց մէկ աչքդ բաց մնայ...

— Սուսամ, ծառերու մէջէն ձայն մը առնելուդ պէս, մեզի լուր տուր, — ըսաւ Մանուկ, ու ինքն ալ դլուխը քարի մը դրաւ:

Սուսամ կրակի դէմ դէրձ գրաւող զինուորի պէս լարուեցաւ: Անտառի բացատքէն անդին՝ անցքերն ամբողջ իր անկնարկին տակ առաւ, ականջը անտառի խորութեան:

Այդ օր Ս. Յովհաննու վանքի անտառը համերգ կար։ Զեփուռի քմամահած խաղերին տերեւները կ'երդէին, թռչուններու զայլալը անտառը զոյ հանած էր աւ Մշոյ զաւտի խորհրդաւոր մշուշը վարի տարածութիւնները կը սքողէր։

Սուսամի սիրտն ալ ծոփացած երջանկութեամբ կ'երգէր։

— Մէկ անգամ տեսնեմ, ու մեռնիմ...

Մրտաուշ էր տառապան սրտի այս յանկերգը...



Երբեք այդքա՛ն խորհրդաւոր եղած չէր Ս. Կարապետի հեթանոսական անտառը, որքան այդ արշալոյսին։

Ստեփան վարդապետ, Մանուկի առաջնորդութեամբ, պուրակէ պուրակ կ'անցնէր, կարծես թէ Սօսեաց անտառը օրհնելու ելած էր։ Մեծղի ծառերու շուքերուն տակէն անոր անցքը քրմական խորհուրդ մը կը ստեղծէր։

Անդին, անտառին խորքը, ստուերներու զմրէթի մը տակ, Ֆետտիները կը հանգստանային։

Ստեփան վարդապետի քրմական պտոյտը կանգ առաւ պուրակի մը առջեւ։ Արեւն արդէն ոսկեղօծած էր ծառերը։ Գալէն, թիկունքը ծառի մը. հանդարտօրէն կը ծխէր։ Սուսամ ամփոփուած էր քարի մը վրայ, ու վերէն կախուած ճիւղերու տերեւներուն մէջ սքողած էր իր դէմքը։

— Ողջո՞յն...

— Աստուած օգնական...

Ոտքի էին Գալէն եւ Սուսամը։

— Հա՛յր սուրբ, Վարդանի աղջիկը քեզի կը յանձնենք, — բռա Գալէն, — մենք մեր պարտականութիւնը կատարեցինք, մնացածը քեզի կը թողունք։

— Աստուծոյ օրհնութիւնը թո՛ղ ըլլայ ձեր վրայ։ Գացէ՛ք աղաներուն քով եւ Գէորգին յայտնեցէք, որ Վարդանի աղջիկը իմ խնամքին տակն է։

Երբ Գալէն եւ Մանուկը կը հեռանային, Ստեփան վարդապետ Մանուկի ափանջին շնչաց։

— Սուրբի ծառին տակն ենք։ Երբ նախանալը վերջանայ, դուն եւ Գալէն Գէորգը հոն առաջնորդեցէք։

Արեւի ճառագայթները Սօսեաց անտառը կրկնակի խորհուրդով կը լուսատւէին։ Մինչ զեփուռները անտառին համերգը կը ծաւալէին, զաղտնիքը կը մնար Մանուկի, Գալէի եւ Ստեփան վարդապետի շրթունքին...

Վարդան վարդապետ այս խորհրդաւոր օրուան անցուղարձներէն անակզակ, վանքի մէջ անգաւորուած թրքական սպաները կը զբաղեցնէր, միւտ յուսալով, որ թրքական վաշտը հանդարտ պահելով, չըջանայ դիւղերը վտանգներէ կ'ազատէր։

Ստեփան վարդապետ վանական պորձերով չըջանը ելած էր, ու առոր բացակայութիւնը առաւօտեան եկեղեցական արարողութիւնէն, բնական նկատուեցաւ։

Վանական պորձերով բացակայող հին մարտիկ եկեղեցականը Ֆետտիներուն պաշար հասցուց, պահակներուն տեղերը ուղեկց, ու պատրաս-

տրեցաւ ինքնայատուկ որբուկան արարողութեան մը, որ անտառի խոր-  
հրդաւորութեան մէջ պիտի կատարուէր:

Անտառը սուրբ, սուրբերուն անունը կրող ծառեր ալ կային, ի մի-  
թարութիւն հովիւներուն, որոնք վանքէն հեռու կը մնային: Վանքի բանի-  
մացները դիտէին, թէ ո՛ր սուրբին անունը կը կրէր զարաւոր այդ սօսին,  
յայտ հովիւներուն եւ վանքի աշխատակորներուն համար՝ Սուրբին Մատն  
էր: Գիտցողը թո՛ղ դիտեար:

Ու հիմա, Ստեփան վարդապետ, թիկունքը հակա ծառին, սուրբին  
կոնակ զարձուցած, աշխարհիկ կեանք մը կերտելու խելագի քայլը պիտի  
անէր:

Աշխարհի շարն ու բարին, այսպէս կշիռքի կը զարնէր, երբ ծառե-  
րուն մէջէն նշմարեց Սարհատը, Գայլն եւ Մանուկն անոր կողքին:

Սուսամ ոտքի ելաւ, յուզումէն զոգահար:

Ստեփան վարդապետ հայրական պորովանքով դրկեց Սարհատը,  
եւ անոնք այդպէս մնացին լուռ պահ մը: Լուռ էին ու յուզուած Գայլն եւ  
Մանուկը:

Անտառը արտերու համերգը կը շնկշնկար կանանչ ծովու ալիքներուն  
վրայ:

Սիրտերը կը խօսէին, ու մարտիկները լուռ էին:

Ստեփան վարդապետ պահը ըմբռնող հոգեբան, վերջապէս բերանը  
բացաւ:

— Գէո՛րգ, մենք կ'երթանք տղաներուն մօտ, դուք մինակ խօսեցէք:

— Մենք խօսելիք չունինք... — ըսաւ Սարհատ, մթնած պէմքով:

Այդ՝ զննական պահուն, երբ իր հին օրերու ընկերները զէն ու զրահով  
խումբին քով կը վերադառնային, զէնքերը լեզու ելած էին եւ Գէորգ ա-  
նոնց ձայնը կը լսէր:

Ազատագրական մարտին ելած Սարերու Ասլանի հոգին, այդ պա-  
հուն, լիցցուած էր պատանեկան սիրոյ երազանքներով, որոնք քսան տարի  
իր հոգեկան աշխարհի լուռ մրմունջներն եղան: Սակայն անոր հոգին  
թունդ կ'ելլէր քսան տարուան զէնքի շաշիւնէն: Թնդանքներու եւ զէնքի  
որոտը կար իր ականջներուն, ու սիրոյ զեղում՝ իր սրտին մէջ: Ազատա-  
գրական շարժման նուիրուած մարդոց անհատական ապրումներու ողբեր-  
գութիւնը կ'աղաղակէր սիրտերէն ներս:

Սարհատ եւ Սուսամ լուռ իրար կը նայէին: Անոնց զէնքին ու աշ-  
քերուն մէջ մարդկային ամէնէն խորունկ ողբերգութեան վէպը կը կար-  
դաղուէր: Անոնք իրար կը հասկնային վիրաւոր սրտի զգայնութեամբ,  
ու խօսքը աւելորդ կը զանար: Լիզուները անզօր էին քսան տարուան տա-  
ռապանքն ու երազները արտայայտելու:

Արցունք կար Սուսամի աչքերուն մէջ: Գորովանք ու մտածում կը  
յուրդէր Սարհատի զէնքէն: Ո՞րքան տեսնեց հոգեկան խօսակցութեան այդ  
պահը, ոչ ոք գիտցաւ: Քսան տարուան ողբերգութիւնը ալիք կու տար ա-  
նոնց սրտերին մէջ, ու անոնք իրար ըմբռնած էին, ճիշդ այնպէս, ինչ-  
պէս պատանեկան երազային օրերուն...

Սարհատ ջլուտ շարժումով մը ոտքի ելաւ:

— Սուսամ...

— Քեզ խուրպան...

Լռութիւնը ծառերէն կ'ախուած էր քանր ջրաղացի քարի պէս:

— Սուսամ, կ'երթամ տղաներուն քով: Դուն ոպասէ: Ստեփան վար-

դապետը հոս պիտի դառնայ, — ըսաւ Սարգստ եւ արագ քայլերով անհետացաւ խիտ ծառերուն մէջ:

Սուսամ ոտքի էր, արցունքները, կայլակ առ կայլակ, անոր այտերը ողողած էին: Դէմքը պայծառ ու գեղեցիկ: Երջանկութիւնը գինք կը խեղդէր: Ու Սուսամ մտովի կը համբուրէր ծառերը, հողը, Սարգստի անցած ճամբան, վախով, զգուշութեամբ, դողալով կը համբուրէր Սարերու Ասլանի հրդեհուած աչքերը...

և

Սուսայ անտառը կը դողար հովէն ու գոգէն:

Ֆետայիները խումբ-խումբ եռանդուն խօսակցութեան բռնուած էին: Վտանգի մը պահուն միայն անոնք այսպիսի արագ շարժումներու մէջ կ'ըլլային: Անոնց հետեւ էր Սակփան վարդապետը, որուն շրթներէն կը կախուէին մարտիկները: Վտանգի մը նախանշանը չկար:

— Դէորդը վտանգաւոր մարդ է, տղա՛ք, դիտէ՛ք անոր քնաւորութիւնը, կտրուկ քայլ մը կ'առնէ, ու մենք մեր խիղճին առջեւ մեղաւոր կը մնանք: Սուսամը հիմա այս անտառին մէջն է, անոր սրկուքիւնը ձեզմէ կախուած է...

— Ես ու Մանուկը զացինք Ս. Յովհաննու վանքը եւ Սուսամը հոս բերինք, — ըսաւ Գալէն, — Հա՛յր սուրբ, անոնց կեանքը տասնըհինգ տարինեք է զեր ես դիտեմ, անոնք մեր յեղափոխութեան լուռ զոհերն են: Այս անտառին մէջ յեղափոխական պտուկ պիտի կատարես: Այս է խնդրանքս: Այսքան տարի անցաւ, ու ես զէնքի տակն եմ: Առաջին անգամն է որ բերանս կը բռնամ, ու իմ ընկերներուս խնդրանք մը կը ներկայացնեմ:

— Սուսամը մեր քոյրի՛կն է... Թո՛ղ Աստուծոյ կամքը կատարուի՛ր, — ձայնեցին Ֆետայիները, որոնք անձնական լուռ տառապանքներ ունէին, եւ սակայն զէնքի ձայնը կը խլացնէր սրտերու ճիւղը:

— Ես եմ կնքահայրը... — ժողտաց Գալէն:

— Ես էլ հարսնեղբայրը կ'ըլլամ, — բացազանչեց Մանուկը:

— Հա՛յր սուրբ, երկու ոչխար կ'ուզենք: Դուն պտակը ըրէ, մենք ալ հարսանիքի խորովածի համը կ'առնենք, — ձայն բարձրացուցին Ֆետայիները:

Ճիւղ ալ պահուն Սարգստ հասած էր ու ծառի մը կոթնած, մըտածկոտ դէմքով, մարտիկները այնոյժ խօսակցութեան մէջ կը գտնէր:

Ստեփան վարդապետը եղաւ առաջին նշմարողը:

— Տղա՛ք, ահա՛ Դէորդը:

Ֆետայիները մօտեցան Սարգստին, Ստեփան վարդապետը անոնց առջեւէն:

— Սարգստ, սիրելի՛, այսօր խումբը խմբապետ դարձաւ, իսկ դուն՝ պարզ զինուոր, ինչ որ ըսենք, այն պիտի ընես, — ըսաւ Արամը:

— Այո՛, մենք խմբապետ ենք եւ դուն զինուոր, իսկ Սուսամը մեր քոյրիկն է...

Ժպիտ մը խաղաց Սարգստի դէմքին, յուզուած էր անձնուրաց բնկերներու այս զուրկութիւնէն, ու առաջին անգամն ըլլալով, Սարգստ ո՛չ կատակ մը կը ցաւ ընել, ոչ ալ ստատեց:

Հոսիւթիւնը շատ էր խօսուել...

— Եղա՛ւ, Հայր սուրբ, — ձայնեց Գալէն, — խոմբի կարգադրու-  
թիւնն է, այս երեկոյ պտակը պիտի կատարես:

— Աստուծոյ եւ Յեղսփոխութեան կա՛մքը թող կատարուի... — ը-  
սաւ Ստեփան վարդապետը:

Սարհատ, ծառին կռթնած, տպրումներու, մտածումներու եւ յու-  
շումներու ալիքներուն վրայ էր: Իր աչքերուն առջեւ ամէն բան արագ կը  
վճռուէր, կտրուկ էին զինակիցներուն քայլերը, ու կարծես անվերաջնե-  
լի, ճիշդ ճակատագրական ընդհարումներու պահներուն, զնդակի ծուլոցին  
պէս...

Վանքի հովիւը, երկու խոյեր առջեւ՝ երեւցաւ: Ստեփան վարդա-  
պետ տոտլուց ամէն բան կարգադրած էր:

— Հա՛յր սուրբ, խոյերը բերի, Սատանու ձորի կողմէն թուրք աս-  
քեարները անտառի մօտերը կը դառնային:

Սարհատ ցնցում մը ունեցաւ: Խոմբը կրնար վաանդուիլ:

— Է՛հ, տղա՛ք, մէկտեղ հաւաքուեցէք, հովիւի բերած լուրը ուրիշ  
հարսանիքի նշան է:

Ֆետայիները համախմբուեցան Սարհատի եւ Ստեփան վարդապետի  
չուրջ:

— Ձեր խմբապետութիւնը վերջացաւ... Արա՛մ, հինգ մարտիկներ  
ա՛ռ հետդ եւ անտառի բացատըը հասիւր: Սատանու ձորի հսկողութիւնը  
քու վրին: Մէլիքն ու Մօսոն քանի մը ընկերներով Ս. Կարապետի վերի ու-  
սերուն ճամբան բաց պիտի պահեն: Եթէ դէպք մը պատահի, արեւմարէն  
տռուլ, երեք մասի բաժնուած՝ կռիւ պիտի ընդունինք: Ձեր նպատակը  
պիտի ըլլայ թշնամին չփոթի մատնել եւ խուսափել ճակատ ճակատի ընդ-  
հարումէ մը: Մեր ժամադրութեան վայրը իրզըլաղածի անտառն է: Հոն  
են մեր եօթը ընկերները, Հասէն եւ Հասանօն ալ անոնց հետ:

Քանի մը վայրկեանէն խմբակները ճամբայ ելան: Ստեփան վարդա-  
պետ Մանուկը հետն առաւ եւ փոխադրուեցաւ Սուրբին Մատին տակը,  
ուր Սուսամ կը սպասէր յուղումնահար:

— Սուսամ՝ քոյրիկ, այս ատրճանակը մէջքդ կապէ: Եթէ դէպք պա-  
տահի, մեղի հետ պիտի քայլես, — ըսաւ Մանուկ եւ կաշեկապով ատրճա-  
նակը տուաւ Սուսամին:

— Ձեր ճամբուն խուրպան թո՛ղ ըլլամ:

Մտածումներով կլանուած՝ մահ պատերազմի ելլող մարտիկները  
լուս էին, ունկնդիր անտառի հազար լեզուեան համերգին: Վերջապանը  
մտածումներուն:

— Ո՛ւր կորաւ կապը... տիրուն պապը:

## Ձ

Արեւի ճառագայթները կծկուած էին բարձունքներէն: Անտառը  
մթնած էր աւելի ու երբեմն կը շառագունէր կրակէն, որ կը վառէր եր-  
կու փոսերուն մէջ:

Կռիւ կամ հանգիստ, Ֆետայիները պատառ մը հաց պիտի ուտէին:  
Մանուկն ուր երեկոյեան պատկի եւ խորովածի յոյները մարած չէին:

Մուրը կռթած էր արդէն, երբ Արամը երեւցաւ:

— Պարո՛ն Սարհատ, այդ ասքեարները ճամբան կորսնցնողի պէս,

գարձան անտուրին չուրջը քանի մը անգամ ու վերադարձան զէպի վանքը։ Միշտ ետ կը դառնային եւ կարծես սարսափով կը նայէին մթառուներ անտառին։

— Աղէ՛կ, Աբա՛մ, քու տեսած զինուորները հրամանատարին պիտի գնահատեն թէ այս կողմերը ճանճ իսկ չտեսան, եւ հանգիստ պիտի քնանան, լաւ նշան է, — ըսաւ Սարհատ եւ աւելցուց։

— Հոգիւն ալ վարդան վարդապետին պիտի տեղեկացնէ, թէ գայլերը երկու ոչխար լափեցին։ Միամիտ չէ վարդան հայր սուրբը, հովիւի գէժքին կը նայի, եթէ յուզուած՝ իր աչքերուն կը նայի, ճիշդ է որ գայլերը կերած են ոչխարները։ Իսկ եթէ գլուխը կտխէ... վարդան վարդապետ, ձեռքով տուածի պէս զիտէ թէ մեր բաժինն է, որ կը պակսի վանքի հօտերէն։

— Մեզի բաժին չըլլային՝ թուրք գայլերը արդէն պիտի լափէին զանոնք, — ձայնեց Ախօն, որ միտերը եփեւում գործին լծուած էր։

Մարտիկները խնդացին բարձրաձայն։ Գիշերն իջած էր, ու ձնտալիներու ազատ օրը կը սկսէր։

Կենսունակ աշխարհ մը կ'եռար Սօսեաց անտառին մէջ։

Կրակներու շառայլին մէջ, Սարհատ զրահաւոր կիսաստուածի մը կը նմանէր, իսկ Ստեփան վարդապետ կատարեալ քուրմ մը կ'արձանացնէր։ Պահակները վերադարձած էին։

Ձնտալիները կ'ապաւինէին ընդարձակ անտառին եւ խաւարակուռն գիշերին։

Բնութեան խորհրդաւոր տաճարին մէջ, անձնուէրներու բռնակը տնօրինակ խանդավառութիւն մը կ'ապրէր։

Ձնտալիներու կարճ կեանքին ուրախ մէկ գիշերը, դար մը աւուրածութեամբ, տնոնց սիրտը հրճուանքով կը լեցնէր։ Վաղը անոնցմէ ոմանք կրնային նահատակուիլ։ Ի՞նչ փոյթ, տնոնք երջանիկ մահը նախօրէր ընդունած՝ երգելով կը մեռնէին, ապաղայ ապաստութեան լուսաշողոյզ արշալոյսներուն յտեւում իրենց աչքերը։ Անոնց արտակարգ կեանքի ամէնէն արտակարգ մէկ երեւոյթը տեղի կ'ունենար Սօսեաց անթափանցելի անտառին խորքերը։

Երեք մոմեր վառեցան երեք Մեծղի ծառերուն տակ։ Հաստ բունները աղօթօրէն լուսաւորուած, մարմարէ երեք սիւներու նմանութեամբ՝ տաճարի կը վերածէին այդ անկիւնը, ուր յստակօրէն կը նշմարուէր Ստեփան վարդապետ, գրեցիկ մը ձեռքին։ Անոր գէժ կեցած էին Սարհատն ու Սուսամը, գլուխներն հակած Գալիի ըռնած խալին տակ, իսկ Մանուկը, Սահամի կողքին, հարսնեցւոր դերը կը կատարէր արժանապատուութեամբ։

Ձնտալիները ծառերուն կռթնած, մութին մէջ իրենք ալ ծառի կոճղ մը, լուսութեամբ, յուզումով, զէպի կեանք վերադարձի անկարելի խորհուրդը կը դիտէին։

Ստեփան վարդապետ շատ կարճ կապեց։ Ի՞նչը կարգաց եւ ի՞նչը եղանակով մտաւ, ոչ ոք ուշադրութեամբ չեց, եւ սակայն, անտառը կ'երգէր ամէնէն ցեծայի շարականները եւ ուրախ մեղեդիները Սարհատի եւ Սուսամի այս սրտառուչ պսակադրութեան առթիւ, ուր հեթանոսական մթնոլորտը կը մնար անաղարտ։ Քիչ մը հեռուէր դիտողին պիտի թուէր արձանախուրձ մը, հոն՝ մարմարէ ծառերուն մէջ, ամբողջովին երազային։

Երբ Ստեփան վարդապետ, խալը ձեռքին, վերջին օրհնութիւնը տուաւ, սրտի խորէն ձայնը բարձրացաւ։

« Աստուած ամենակարող, Աստուած ամենատես, այս օրհնութիւնս ընդունէ Հայրական ներողամտութեամբ, դուն՝ ներող յանցանաց... - Ստեփան վարդապետի ձայնը ղողաց, ապա շարունակեց, - իսկ եթէ յանցանք ժը կայ այս պատկառութեան մէջ, կ'աղաչեմ առ քեզ, որպէս օրբ-բազան տաճարիդ ծառայ, Տէ՛ր ամենակալ, այդ յանցանքը՝ փութաթիս մի-այն ու միայն իմ վրիս, ու երջանիկ կացուցանես պսակեալ զոյգը, կարճ կեանքի այս ուխտեալները... »

Երբ խորհուրդի կանգնած հարսն ու փեսան, կնքահայրն ու հարս-նկարարը, համբուրեցին Ստեփան վարդապետին ձեռքը, Սառա՛մ երախտազէտ յուղումով համբուրեց Գալէին ձեռքը, որպէս կնքահայր, ու Մա-նուկէնը որպէս հարսնեղբայր: Մոմի լոյսերը աղօթօրէն շարժեցան ծո-ռերու բուններէն, ու արձանները կեանք առին եւ շարժեցան:

Յուսկերու եւ խոտերու վրայ տարածուած սեղանը բացուած էր օրհ-նութեամբը Ստեփան վարդապետին: Մարտիկները ուժաւ մը կոննակ խմե-ցին՝ շնորհաւորանքի համար: Բաժակաճառերը կարճ էին:

« Կենդանութիւն... »

« Անո՛ւշ, անձաճութեան:

Ու ընթրիքը կը վերջանար անպարանջով, վտանգին դէմ միշտ պատրաստ:

Ֆետայիի հարսանիք... շտեմնուած երեւոյթ: Ազատութեան հա-մար, յանկարծուատ կոտի բռնաճններու համադարկին պէս շեշտակի, կտրուկ, վճռական:

Մոմերու լոյսերը մարած էին, բայց ազատութեան արիւնոտ ճանա-պարհը լուսաւոր էր անձնուէր մարտիկներու ալքին:

Մառերուն տակ տակաւին համախօմք էին, եւ կատարուած խոր-հուրդի ապրումը կը ծամէին, երբ Սարհատի ձայնը լսուեցաւ.

« Տղա՛ք, Սուսամը ձեր քոյրն է, այս խումբի սխառեալներէն մէկը: Ձեր նուէրը այն ասորճանակն էր, որ այս պահուտ իր վրայ կը կրէ, պսակի մատանիի փոխարէն: Սուսամը իր նպատակին հասաւ այս գիշեր, բայց գերագոյն նպատակին համար, այս վայրկեանէն սկսած, ձեր ճամ-բան պիտի շարունակենք... Ազատութիւն կամ մահ... »

« Մեր քոյրն է, մեր ընկերն է, - ձայնեցին Ֆետայիները մթու-թեան մէջէն:

Կրակի շառայքը երբեմն անոնց պղնձագոյն դէմքերը կը լուսաւորէր: Սարհատ ցած ձայնով.

« Մուտա՛մ, ընկերներու նուիրած ատրճանակը, մեր ամէնէն թանկ նուէրն է, որ կրնայինք մէկու մը տալ: Երբ մինակ մնաս ու վտանգուիս, ապալինէ ատրճանակին՝ անձ պաշտպանելու: Եթէ անկարելի եղաւ պաշտ-պանութիւնը, ատրճանակը քաջութեամբ ուկանջիդ տակը դիր եւ կրակէ:

« Պատրաստ եմ ամէն վայրկեան... - մրմնջաց Սուսամ:

Պահ մը լուռութիւն:

Սարհատ ոտքի ելաւ.

« Մանո՛ւկ, հարսնեղբայրդ առ եւ Ստեփան վարդապետին հետ գնա՛: Սարհատ իր տարերքէն մէջ մտած էր:

Դասաւորեց պահուկները եւ մատնանշեց անտառի անջքերը, որոնք արթուն հսկողութեան տակ պիտի պահէին: Թումըը հնդեակներու բաժ-նըւած, իրենց տեղերը քաշուեցան: Արամ խմբակի մը հետ պիտի ունցնէր

նորոնքէն եւ միանար այն մարտիկներուն, որոնք իրենց կը սպասէին իր-  
գրագրածի անտառը:

— Արա՛մ, երկու օր այս անտառի մէջ պիտի մնանք, ու ապա, կէս  
շաբաթի պիտի հասնինք ձեր մօտը: Այդպէս խօսքը գիտիս: Պահանջները  
արթուն ըլլան:

Յանի մը վայրկեանէն անտառը կշահեց մարտական շեղմանը:  
Անտառին տերեւներուն համեմատը կը շարունակուէր, բնութեան խո-  
րախորհուրդ մը մոնջներով, ու միայն հայրենի հողն էր, որ կը դառար իր  
անմահաց զաւակներու ներկայութիւնը ծով մթութեան մէջ:

Մարտիկները կը պատրաստուէին մարտական հարսանիքի...



Յունիսի խաղաղ գիշերը կը հեւար Տարօնի խռովայնի գաշտին  
վրայ:

Թուրք տուններէն ներս վտանգաւոր հարց մը մղմանը պէս կը  
կ'արձագանգէր:

— Ո՛ր է Գէորգ Ջավուչը...

Իսկ զօրամասերն ու ոստիկան ընկառները, գէնքի եւ մարտիկի շա-  
շիւնով, հարցումը կը կրկնէին գիւղէ գիւղ, շրջանէ շրջան, պատերազ-  
մական արհաւիրքը, սարսափն ու գողը տարածելու աշխատանքը քաղաք-  
թեան մէջ:

Ժողովուրդի միակ միութեամբը կը մնար կայծակէ հարուածը, որ  
կը կայծկլտար անակնկալ տեղ մը...

Լուսածին գիշերը գուրգուրանքով կը սքողէր արաւ արշաւը ազա-  
տութեան մարտիկներուն, որոնք կ'անցնէին ինքնաշարժի ծննդավայր գիւ-  
ղի ստորոտէն, հայ մեծագործութեան ամուն շարունակելու համար: Ան-  
տառէ անտառ, գիւղէ գիւղ խումբերն իրար կը գտնէին, կը ստուարանա-  
յին, ու իրենց յառաջապահները թուշուրի ճիւղի մը ունկնդիր՝ արթուն պա-  
հաններուն ցուցմանը կ'անցնէին, ու ապահով կ'իրճի մը մէջ կը մխրճու-  
էին:

Կուրտիկի բարձունքին, Գոմեր գիւղի անտառին մէջ, աղաւթեան  
բանակը կաղնիներու հովանին կը վայելէր:

Սասնոյ բարձունքներուն այս ճանապարհը թրջական ապահովու-  
թեան գօտին էր: Զօրք կար Սասունի զօրանոցներուն եւ Ս. Յովհաննու-  
վանքին մէջ: Սարերու Աջանը վտանգաւոր այդ երկաթէ ցանցին մէջ պի-  
տի չմտնէր: Ու թրջական բանակները Գէորգ Ջավուչը կ'որոնէին Ս. Կա-  
րապետի շրջանը, ստոյգ շրջաններու հիման վրայ, ու նաեւ գաշտի կեդ-  
րոններուն մէջ:

— Ո՛ր է Գէորգ Ջավուչը...

Սարերու Աջանի կայծակնային արշաւանքները արտակարգ էին,  
չմեղմելով ու զգետնող:

Դէպքերն ու կայծակնահարումները իրարու կը յաջորդէին, շտա-  
բումի մատնելով թրջական զօրքը, նահանգապետը, ոստիկանապետները,  
պէկերն ու աղաները: Տասր ամիսներէ ի վեր, Սարհատի խումբը, հարուա-  
ծողական նոր ծրագրով, ձիաւոր ու արաւաչարժ, ամէն տեղ էր, գիշեր-  
ներուն տիրապետող ուժը, շատ յաճախ իրենց աչքերուն առջեւ, կուրծքին  
վրայ, բայց միշտ անզսպելի:



Սարհատ դարձած էր հեքիաթային Գէօր Օղլին, Հին դարերու Գոյլ Վահան Մամիկոնեանը, թուր կեանքին շարժող Սասունցի Դաւիթը:

Թրքական իշխանութեան կորովը կտրած՝ անդօր էր Սարհատի առջեւ ուժը խորտակելու: Բայց պետական հարկադրանքով Սասունն ու Մլոյ դաշտը զինուորական շրջաններուն տակն առած՝ Սարհատ Սարհոյ կ'որոնէին, անպէ՛ն բազմութիւնները կը ճզմէին, անմեղ մարդիկ բանտերը կը լեցնէին: Ու երբ զիշերն իր շղարշին տակ կ'առնէր հայոց աշխարհը, առիւծները կը մռնչէին, շրջանէ շրջան, խուլ ու սպառնական, այս անգամ, սարսափի մատնելով բռնակալութեան անհաշուելի վրձմակները:

Ապտուսթեան պայքարի ամբողջ ողբերգութիւնը ապրող ժողովուրդը իր կորուստները կը մոռնար, արիւնոտած սիրտը կ'ամօքէր յառաջու հրճուանքով, եւ Ապտուսթեան Ստուծոյ հետ կը խօսէր, երբ... առիւծներու մոնչիւնը կը լսէր խաւարի ծալքերէն:

Ու Հիմա, կաղնիներու շուքին տակ, առիւծները հանդիստ կ'ընէին բանի մը օրէ ի վեր:

Սարհատ մօռյալ լռութեամբ կրկին ձուլուած էր կաղնիի կոճղին, ու մտածումը ամպ կապած էր անոր դէմքին:

— Տղա՛ք, կու՛ն չկայ, — ըսաւ Հոգեբան Գոմսայ Մօսօն, — Սարհատի ամպոտած դէմքին ետեւ նոր ծրագիրներ կը պատրաստուին:

— Հիմա հանդիստ քնտանիք մը դարձանք, Սուսամը մեզի հետ է, չմոռնանք, — ըսաւ Մօկունքի բանիմաց Դադարը:

— Սարհատի դէմքը այսպէս չտեսնէի, տղոց հետ պարի պիտի ելլէինք, — քմծիծաղով ըսաւ անառակ Ախօն, — խաւար անտառին մէջ պտակը ըրին, ու մենք պար մըն ալ չպարեցինք:

— Զէնդ կարէ՛, աղա՛յ, չե՛ս գիտեր որ Գլորիի պարը կուռի ժամանակ կը սկսի, — Գալէն էր որ հանդարտ կը ծխէր ու մէջքը կը երէր ծառի՝ բունին:

Այդ օր, արեւը հաղիւ հասակ մը ըսրճրացած էր, երբ անտառ մը տան Սակարն ու իր մարտիկները:

Գրկախառնում, յուզում, կատակ եւ գեկուցում իրարու յովարդեցին: Սասնոյ ժողովուրդը ամբացած էր Բարձրաւանդակի վրայ, ու մեծ չպարտութեամբ կը հետեւէր Ֆետայիներու այն խոյանքներուն, որոնք տեղի կ'ունենային դաշտին մէջ:

Մակարի խումբը լսեց Ս. Կարապետի անտառի պտակը ու լռեց: Իրենց համար անօրինակ էր Ֆետայիին ամուսնութիւնը:

Գոմէր գիւղի մարտիկները, տէր Սարգիսի առաջնորդութեամբ, այդ օրուան պալարը հասցուցին անտառ:

— Շէ՛ն մնայ գիւղը, տէ՛ր Սարգիս, — ըսաւ Սարհատ, — այսօր ալ խումբը պիտի կշտանայ: Օր մը անօթի, օր մը կուշտ, բայց դուք է՛ն ըտէ՛, ե՛րբ պիտի կշտանանք ազատութեամբ...

— Սիրելի Սարհատ, երբ այս անտառին մէջ մեր ազատամարտիկները կը տեսնեմ, ազատութեամբ կշտացած եմ, — ըսաւ տէր Սարգիս, — գիտէ՛ք որ քահանաները անկուշտ են: Երբ այսքանով կշտացայ, ալ դուք երեւակայեցէ՛ք մեր ժողովուրդի զղացումը, ապրումը եւ ազատութեամբ կշտանալու յոյսը:

— Յոյսով չտտ օրօրուեցանք: Ազատ հայրենիքի ճամբան արիւնոտ է ու երկար, իսկ մենք Գուռլիկ Զալալին չունինք, որպէսզի աչքը գոցենք՝ բանանք, հրեզն ձին մեզ մեր նպատակին հասցնէ:

– Մեր հրեզնն սուրբ մեր Ծննդյանն են, դուք էք, մեր ժողովուրդի հաւատքն է...

– Տղա՛ք, տէր Սարգիսը միգի կ'ըսէ ճամբայ ելէք... Աղէ՛կ, տէր հայր, Սուսամը կը պահես մեր տունը, մէկ շաբաթ ետքը փոխադրէ ֆեթար, իշխան Պետոյի մօտ։ Տեղական մարտիկները զայն կը պաշտպանեն, ինքն ալ ինքզինքը կրնայ պաշտպանել։

Սարհատ դարձաւ մարտիկներուն։

– Ձիերուն լաւ նայեցէք, մեր հետ ալ պաշար զերցուցէք։ Մեր ճամբան երկար է, ու մենք պիտի անցնինք շատ արագ։

Մակարի եւ իր ընկերներուն սիրտը կոտորած էր։ Սարհատի ամուսնութիւնը յեղափոխական ուխտին հակառակ կը նկատէին, մանաւանդ խտապահանջ Մակարը յրգովուած էր։

Լսելով Սարհատի հրահանգը, որ այդ երեկոյ ճամբայ պիտի ելլեն, զարձաւ իր քովիներուն։

– Տղա՛ք, ես ու իմ Աստուած, Գէորգը ծնուի է...

Քոմիտի խումբը ժպտեցաւ ու լռեց։

Սարհատ խումբէ-խումբ ոնցաւ, կատակներ քրաւ, ու ոմանց հետ ալ քօտեմարտի մտաւ։

Գոմայ Մօսն, որ հեռուէն Սարհատի քածները կը դիտէր, շուրջիններուն քաւ։

– Կայ-չկայ այս գիշեր իսկական հարսանիքը պիտի սկսի...

Մարտիկները պէտք չունէին Մօսոյի մարդարէութեան, տարիներու փորձառութեամբ գիտէին Սարհատի բնասորութիւնը, երգ ու կատակին կը յաջորդէր արիւնոտ ընդհարումը։

Ծննդյանը իրենց պատրաստութիւնները կը տեսնէին, ոմանք զէնքերը կը մաքրէին, օւրիշ մը իր փամփշտակալը կը յեցնէր, ուրիշներ իրենց միերու քովն էին՝ կախիչ կապ մը ամրացնելու, կամ ինկած պայտ մը ձիու ոտքին դաժելու։

Սուսամ մօտեցած էր Մանուկին։

– Աղբէ՛ր...

– Ի՞նչ կայ, Սուսամ։

– Ձեզի հետ կ'ուզեմ դալ։ Ձեր կողքին սպաննուիլը երջանկութիւն է ինծի համար...

– Սուսամ քոյրի՛կ, այդ մասին բերտն չբանաս Սարհատի առջեւ, անոր մէկ խօսքը երկուք չ'ըլլար...

Սուսամ փաթեմ ու պեղեցիկ կ'ին մը դարձած էր։ Դեղձուն ծամ աղջնակը կրկնակի դեղեցկութիւն մը կ'արձանացնէր։ Պարզ հագուստ-կապուստը եւ ասորճանակի ներկայութիւնը անոր դօտիին՝ դեղեցկութիւնը աւելի կը շեշտէին։ Ու պարզ էր իր շարժումներու ընթացքին, որոնք անձնութեան ուխտի վաւերացումը կ'արտայայտէին։

– Մահուան պատրաստ Սուսամը իր ճակատագրին կը յանձնուէր։

Երջանիկ մահուան ճամբան, երգով ու կատակով, ոչ ոք աշխարհին մէջ գիտցաւ անցնիլ իմացական հպարտութեամբ, որքա՞ն հայ Ծննդին։

– Երջանկութիւնները ս'ի կըցած է չափել սովորական չափերով։

...  
...  
(Ետք.)

Կ. Ս.

## ԵՐԱՋԻ ՊԷՍ.,

Ի՞նչ կադայտով եմ մերկուած  
 Գու լայնածիր աչքերդ հողին տակ հիմա.  
 Քունի մթին քաբերում տակ  
 Լուսադաշտառ մշմա՞րն է ջիմջ երկմէի  
 Նաւարկուած այնքան օրեր ետք խաղաղ  
 Երջանկութեամ մէջ տեսալացած վիշտերով  
 Կամա՞րն արդեօք Շուէտի  
 Ծածկւած բիւր տանգներով ոսկեգոյն.  
 Երկի՞նքն արդեօք Լէյզէնի  
 Սփռի՞չ եւ մահաբայր  
 Որ դեռ կարծես աչքերուդ մէջն է հիմա  
 Երազի պէս անայլայլ ու փաղցրաշաղ

## Ա՛Հ, ԴՈ՛ՒՆ ՄԻԱՅՆ

Մի՛ տար ինծի կեանքի պատուէր.  
 Արդէն վաղուց գտած եմ ես  
 Ուրախութեան աղբիւր մ'անձայն  
 Անյուսադիր բաներու մէջ.  
 Կասեցուցի երազներուն  
 Թռիչքը կապույտ քարթիչներովդ  
 Որ խօլարար կը քարախեն  
 Երբոր իրենց կը մօտենաւ  
 Ա՛հ, դա՛ւն միայն կրճառ հիմա  
 Երեսայքները շղթայել  
 Անբաւոյն կախարդանքին  
 Եւ մանկութեան շողով մը դեռ  
 Իմ մանկութիւնս յարաւսանել  
 Տունը քառայլ տրեւներուն  
 Որոնք շիջած են վաղածառ  
 Կրճառ քակել երկնի համար  
 Ուր խած աչքերդ կը սևեռին  
 Հիւսկէնն աղուոր տերեւներուն

## ՍՏՈՒԵՐՈՎՆ ԻՐ

### ՍՏԵՂԾԻԶ

Վախով սարսուռն եւ գալկանսր  
 Ամէն քարի սնկն հեռու  
 Կեանքն է կեցեր ուրախութեան  
 Փեքակներէն ա՛յլ բաժնուած  
 Իր ճեռքերուն մէջ վերքեր կան  
 Երբ ան ստուերն իր կ'արօնէ  
 Աչքերու մէջ՝ ամկարելի  
 Ազամանդները յիշելով  
 Եւ այցելութիւն իր դառնանաւ  
 Պիտի բնութ՝ անհուն քաղաւկ  
 Մը աշխարհէն իմ հագույս մէջ  
 Եւ ստուերովն իր ստեղծիչ  
 Երազներու, պիտի լեցնեմ  
 Ձեռքերս խօլ եւ բռնուած  
 Իր ցովքերուն քարթիչներէն

ԱՐՍԷՆ ԵՐԿԱՅ



Այս թիւով կը վերջանայ Լեւոն Գարսեւի շարքան Զաւրոս վեպին ձեռագիրը:

Սփիւռքի կազմութեան եւ հոն ինկած հին, ու թոր հասակ ճնշող սեռանքներուն տագնապներն ու հեռանքները բնագործակ կատար մը վրայ բանորոգանալու հրապ մը կը փառասիրէր այս գործը, որ սակայն, չկրցաւ ինքզինք իրագործել, ենդհանրին վախճում մահուամ պատճառով:

Գրական լուրը հասկացողութիւն եւ անընթաց խոստովան մը ունէր Լեւոն Գարսեւն ու միշտ այդ պատճառով շատ չէր աճապարներ, յամապարհեց բնաւ; որքեց ու գրածը անմիջապէս երատարակելու փորձութեամբ չենքարկուէցաւ, կտրուէր տակի, մննէր տակի, ու երբ տարիքի եւ իմացական հասունութեամբ շրջանը թեւակոխած՝ կը պատարասուէր ամտիկ գրութիւններու տեսարակները բաժնալ՝ իշու ամառս հարսածը:

Լեւոն Գարսեւն ունի ձեռագիրներու համի մը տեսարակներ, որոնք պարբերաբար տիրի մասուցուին՝ «Բազմոյս» ընթերցողներուն:

## ԼԵՒՈՆ ԳԱՐՍԵՆ

## ԼԵՐԱՆ ԶՈՒԳԸ

(ՎԵՊ)

Դուք տեսա՞՞ք էք ուղտերու կարաւանը, երբ կ'անցնի անապատներէն: Եթէ տեսած էք լաւ: Եթէ չէք տեսած զարձիակ լաւ: Անոնց ներքաններուն հետքերը կը մնան յարաշարժ աւազին վրայ կաղապարուած ա'յնպէս, ինչպէս որ է իւրաքանչիւր ուղտի ներքանին կաղմը, ոմանք շիտակ գիծերով, ոմանք ալ կոր կամ անձեւ: Սակայն անոնց հետքը կը մնայ ակնթարթ մը միայն եւ դեռ ուղտերու կարաւանին սիրունէքը հորիզոնին վրայ: Ազգային հոգի մը, կամ հոգի պարզ քմայք մը կը սրբէ կը տանի հետքը անցնող կարաւանին եւ դժուար է համոզուիլ, թէ պահ մը առաջ՝ ուղտերու կարաւան մը անցած է այդտեղէն:

Այսպէս է կեանքը Արեւելքի մեծ ու պզտիկ քաղաքներուն մէջ: Մեծ ու պզտիկ անաններուն մէջ:

Մարդիկ կ'ապրին, կը գործեն, կը սիրեն, կը տառապին ակնթարթ մը միայն ու առանց հետք մը մզնալ՝ կ'անցնեն, կ'անհետին:

Անոնց անցքը կեանքի ճամբաներէն, նման է անցնող ուղտերու կարաւանին՝ յարաշարժ աւազներուն վրայ:

Հոս, Միջին Արեւելքի մէջ տիրապետող աւազն է՝ Գարսեւ Ծոցէն միջին: Միջերկրականի ակերը, միջին Նիզոսի հոգիւր՝ ամէն ինչ մեղէ է, կալուղ, ճակատադրապաշտ, ինչպէս աւազը:

Հայ մարդը քառորդ դարէ աւելի, իր լինելներու կարծրութենէն, իր արդարաբար հողերու ծոցէն դուրս նետուած էր... անցած էր Տէր-Ջօրէն, անցած էր Արաղէն ու խարոխած էր կեանքը աւազուածքի այս նստակայքին:

Փոխուած էր հողային նկարագիրը: Սերունդ մը, որ արդէն բոլորած էր իր պատենական խանդավառութիւններուն չըջանքը եւ հասած հասուն երիտաւար գուլթիան սեմին, աչքերը քացած էր այս կակուղ, մեղկ աւաղաշխարհին մէջ, ուր հետքերն ու դրոշմները անցնող ուղտերու կարաւանին՝ կ'անհետին անկեթարթի մը մէջ միայն:

Իայնչ պէտքիկ է կեանքը...

Ըլլայ կարծր ժայռերուն վրայ, ուր ամէն հետք կը դրոշմուի անջնջելիօրէն, Ըլլայ յարաշարժ աւազներուն վրայ, ուր ամէն հետք անկեթարթի մը մէջ՝ կ'անհետի:

Վէպի մը կառոյցին համար կրնան անսկզի նկատուիլ այս պարզ խօսքերը, սակայն, եթէ անսկզի իսկ նկատուին, այդ պիտի ըլլայ վրձին ճարտարապետական անկիւնէն դիտուած միայն եւ ոչ թէ կեանքէն բխող թելադրանքներէն, որովհետեւ խումբ մը մարդոց կեանքը եւ անոնց ներքին աշխարհը, որոնք կը թիկնաւորուին կեանքէն, չեն հպատակիր ընկալելու ձեւաւորումներու կամ դասաւորումներու օրէնքին ու թիկնաւորութեան մըն եւ այս տողերը, թող ըլլան անոնք մեղանշում մը գեղադիրական բծախրն-դրութիւններուն դէմ եւ ոչ թէ կեանքին եւ այդ կեանքը կենդանացնող, իմաստաւորող մարդոց դէմ. անոնց ապրումը թող յայտնուի մերկ այնպէս ինչպէս որ է իր ներքին ու արտաքին իրականութեան մէջ, իր հակասութիւններու ջրապառարկայի մէջ, որովհետեւ հայ մարդուն ապրումն իսկ հակասութիւններու թնձուկ մըն է՝ ինքն իր մէջ, ինքն իրմէ դուրս:

Քառորդ դար ու քան մը աւելի տեւողութիւն մը մէջ գիւտ ամուր մնացած է հայը, ինչպէս իր շտեմած, իր չճանչցած հայրենի աշխարհին քարերը: Ա-

մուր մնացած ըլլալով հայը, ինքզինք հարազատ կը զգայ նոր քարերուն, նոր աշխարհներուն, դարձած է տեսակ մը աշխարհազաղացի: Հիներուն համար դրեթէ անկարելիութիւն մը դարձաւ մտնել այս յարմարելու սահմանագծէն ներս, իսկ անոնք, որոնք փորձեցին մտնել, այդ մուտքը կը յիշենք քաղաք շտեմած լեռնցիի մը անցքը՝ ինքնաշարժ երով, կտրեցող ցանցուած պողոտայի մը, իսկ նորերուն համար այդ անցքը վերածուած էր շատ բնական եւ ինքնա-վստահ քաղաքի մը:

Առօրեան իր ընթացիկ եւ մարդկային պահանջներով նոր տղաք կը քշէ հաճոյքի, շօշափելի ապրումներու ճամբուն: Հիները խորթ աչքով կը դիտեն փնտցնող այս ընթացքը, պարզ անոր համար, որ ջիւղերու եւ բլիթներու տեղատուութիւն մը կը բոլորեն, մինչ նոր տղաքը՝ մակընթացութիւն մը: Սակայն հակասութիւնը կը դնէ իր շէշը հոն, ուր աշխարհիկ առօրեայի մը ընդմէջէն անցնող այդ տղաքը, երբ կը լսեն միջին ալիքի վրայ հայերէն երգ մը՝ հրճուածքով ու անպատում տառապանքով կը լեցուին, հակառակ անոր, որ այդ պահուն կրնան զրկած ըլլալ օտար աղջկան մը մէջէն:

Հակասութիւնը կը դնէ նաեւ իր շէշը հոն եւ կ'ընդգծէ, երբ այդ տղաքը իրենց սկէպտիկ աշխարհայեացքներով մարդկութեան, քարձր պաղապարներու հանդէպ՝ հաւատքէ պարպուած իրենց մտայնութեամբ՝ ամուր կառնած կը մնան ցեղային հաւատքին, դադարաւորներուն... կը պայթարին այդ դադարաւորներուն համար, կը պայթարին նոյն իսկ իրենց դադարաւորակից երէցներուն հետ... կը խօսին անոնց հետ յաճախ դուքով եւ մենքով: Մեր մարդկային արժանապատուութեան համար, ձերբապատուելու համար ստորագրածան քար-դոշթերէն՝ պահանք մեր դրոշմը այս աւազներուն վրայ՝ ճիշդով, բռնու-թեամբ, թէեւ դիտեն աւաղին - յարա-շարժ նկարագիրը, թէեւ դիտեն որ վերջ ի վերջոյ ամէն ճիշդ, ամէն պայթար

դատապարտուած է անհետ կորուստի, սակայն զեղծեցիկ է կեանքը եւ այդ դեպքերում ընդմէջէն, զեռ ամուր մը նայած է հայր անոնց մէջ, զիրենք տառապիցնելով, դաշուսահարելով հանգիստ՝ առաւել եւս կը զեղծեցկացնէ կեանքը:

— Մենք մեր բաժինը կը բերենք, երբ վաղը ամէն ինչ հովին մէջ քամաքով անհետի, թո՛ղ մեղքը նստի անոնց աւերուն, որոնք սակարկութեան մասն մեր հողիներուն հետ շտեմարէն եւ մեր շտեմած հայրենիքը ճանչնալու համար իսկ փայտաղբի պահանջեցին մեզմէ, բայց հոգ չէ, մեզմէ վերջ դեռ առնելու երկու սերունդ պիտի զգայ ա՛յն, ինչ որ մենք կը զգանք այսօր, անշուշտ որո՞ւ տարբերութեամբ մը, այն տարբերութեամբ, որ այսօր կայ, օրինակի համար, կը ներէ՞ք համարձակութեանս, իմ եւ Վահրիճեանին միջեւ:

— Ձա՛յնդ... անպիտան, կը խօսիս երկրի մասին, սակարկութեան մասին, զիմ եւ Վահրիճեանի տարբերութեան մասին, նախ քան ո՛ր էիր կորսուել եւ ի՞նչ գիշեր, ինչո՞ւ չեկար լսելու քու բարեկամիդ՝ Յակոբին զեկուցումը... Իսէ՛, ուր էիր կորսուել:

— Տարբեր ձեռի բարեկամներով պարտուած էր,— րաւ. Յակոբ, թեթեւ քրմ-ծիծաղով մը:

— Այդպէս է հա՛: Կը լսես Յովհաննէս, մեր Ձաւէնը տարբեր բարեկամներով...

— Կամո՛ց, ընկ. Վահրիճեան, կամաց...

— Ա՛յ չեղ մաքսանենդ վաւ է, լաւ... երկիր, հայրենասիրութիւն, սերունդներու տարբերութիւն՝ իմ եւ Վահրիճեանի միջեւ, ներդադր, սակայն մեր ընկ. Ձաւէնը՝ պայքարի տղան, երկար բացակայութենէ ետք փոխանակ վալու մօտս, լսելու խօսքս, գացեր է տարբեր բարեկամներու հետ... Ըսէ՛ք, ի՞նչ ընելու է:

— Կամաց-կամաց, ընկ. Վահրիճեան, ես խօսող չեմ... խօսողը՝ վանքի հաւերը ուսող Սուրբ Յակոբն է:

— Այո, կամաց-կամաց... ասը տարիէ ի վեր այս է միակ յանկերգը՝ միշտ կամաց-կամաց:

— Հոգ մի ընե՛ր, ընկ. Վահրիճեան, ախր մեր Ձաւէնն է... Էնոր հոգին տրեմ... ամուսնացնենք էս տղոց, ամուսնացնենք, որ մարդ ըլլան... Լահելութիւն է, ընկ. Վահրիճեան, Լահելութիւն:

— Ծիւղ է Յովհաննէս, Լահելութիւն է: Էյ վախ Լահելութիւն՝ թո՛ւր, թո՛ւր ու գացիր ինչպէս հաւքը...

— Ընկ. Վահրիճեան չեղ պէտք է կռիւ՞ մեծ մարդաճանաչ:

— Ձա՛յնդ, մաքսանենդ, դեռ կը խօսիս:

Նստած էին կօշկակար Յովհաննէսի սենեակը: Յովհաննէս ուրախ էր... Յակոբն ու Ձաւէնը իր սիրելիներն էին: Անոնք Մարտիրի լուսազօյն ընկերներն էին... Յովհաննէսի սէրը Մարտիրի հանդէպ օրընտօրէ կ'աճէր, կը մեծնար, կը դառնար կեանքը իմաստասիրող անհրաժեշտութիւն մը:

— Ե՛րբ պիտի գայ Մարտիրը, ինչո՞ւ մեր այս կարճ արձակուրդէն չօգտուեցաւ:

Յովհաննէս հաղաց՝ չոր ու կտրուկ: Վահրիճեան կ'անդիտանար Մարտիրի եւ Եսայիի կապը:

Յովհաննէսի հազը ուշադիր ըլլալու ազդանշան մըն էր՝ ուղղուած Յակոբին եւ Ձաւէնին:

— Անոր գալը դժուար է: Ծանրութեամբ է, շատ ու շատ:

— Ա՛, բալամ, ի՞նչ դժուար, ի՞նչ ծանրութեամբ... Թող գայ, գէթ չաբաթ մը տեսնենք զինքը, քիչ մը խօսինք աջէն, ձախէն:

— Կու գայ, անպայմանօրէն կու գայ, մինչեւ Յունիսի վերջերը գործերը կ'աւարտեն, կը վերադառնանք բոլորս միասին:

— Չմոռնաք ջերմօրէն համբուրելու դիւքը, իմ կողմէս:

— Բայց ընկ. Վահրիճեան, մի մոռնա՛ր որ ան կարգ մը հարցերուն մէջ տարակարծիք էր քեզի հետ:

— Ձա՛յնդ, աւազակ, դեռ կը խօսիս է՛ր...

Դուքսը՝ իրիկունը կ'իջնէր։ Յակոբն ու Ջաւէնը կ'ողջէին մեկնելէ։ Յովհաննէս կը պնդէր որ մնային դէժ ընթերցէ։

— Քանի մը օրէն պիտի մեկնիք, պէտք է աճապարենք։

— Ոչ Յակոբ, մնացէ՛ք քիչ մը եւս, դեռ կը խօսինք, գիշերը երկա՛ր է։

— Մեզի համար գիշերները կարճ են։

— Նորէ՛ն մաքսաններու թիւն... Յակոբ, կարծեմ գոն ալ շատ բարի ծաղիկ մը չես։ Դեռ կանուխ է, քիչ մը եւս նըստեցէ՛ք։

— Լաւ, կը մնանք, դժուար է մերժել ընկ. Վահրիճեանը...

— Կիցցես Ջաւէն, օր մը մարդ պիտի ըլլաս, սակայն ես...

— Մի վախ՛աք, ձեր կեանքը ապահովուած է դեռ 20 տարիով։ Օր մը կը տեսնէք մարդ ըլլալ։

— Աստուած տայ, խելացի բաներ սկսար խօսիլ, Ջաւէն ջան։

Դուքսը մուրը իջած էր։ Յունուարի ցուրտ ու խոնոտ չով մը կ'անցնէր փողոցներէն։

Ներսը կանգ առած էին բառերը, կանգ առած էր խօսակցութիւնը։

Յովհաննէս կը փորձէր փաթթել սիկարէթ մը։ Մատները կը դողային։ Ջղային չով մը կ'անցնէր անոր մարմնին մէջէն։

Ընթրած էին լուսնամբ, քիչ քանի մը շիշ Յովհաննէսի պատրաստած ցինիէն։

Անբացատրելի մթնոլորտի մը ճընլումին տակ, Յովհաննէս փորձած էր խօսեցնել Ջաւէնը։

Ջաւէնի սրբաօրութիւնները անցած էին ապարդիւն։

Վահրիճեան իր սկզբնական կատակներէն հաք, աստիճանաբար սկսած էր ամփոփուիլ ինքն իր մէջ։

Յակոբ կը պահէր յամառ լռութիւն մը եւ թախծոտ տչերով կը նայէր մերթ Վահրիճեանին, մերթ Յովհաննէսին։

Տարիներ անցած էին՝ ձգելով իրենց խորունկ հետքերը։ Երիտասարդները՝ Վահրիճեանն ու Յովհաննէսը ծերացած էին, իսկ երէկուան մանուկները դարձած էին երիտասարդներ՝ հասուն եւ հուժկու։

Կարծէք երէկ էր։ Յեղափոխական Վահրիճեանը տարագիր վասպուրականցիներու հետ՝ կտրեց Պարսկաստանը հիւսիսէն հարաւ։ Անդիլիան քանակները պրաւած էին Միջագետքը։ Վահրիճեան բազմաշուք տարագիր բողոքութիւններուն հետ հասաւ հոն... առաջին հանգրուանը՝ Պաքուպ, ապա տեղափոխուեցան նոյն տարագիրներուն հետ Պարսիկի ժօանը՝ Նահր-Օմար, ուր վասպուրականցի վաղթականները սկսան կազմակերպել իրենց կեանքը, որ սկսան բարձրացնել տարագրի իրենց նոր հիւղակները՝ այրող աւազին վրայ, կիդիլ արեւին տակ, Վահրիճեան դեռ երիտասարդ՝ կորովի, անխնջ նուիրւած էր տարագիրներու կեանքի կաշմակերպման ծանր գործին, դարձած էր դառնացած տարագիրներուն խորհրդապետն, կը վայելէր անոնց ամբողջական վստահութիւնը, սէրը... այդ բազմաշարժար բողոքութիւնը Վահրիճեանի մէջ գտած էր իր կորսնցուցած առաջնորդը։

Վահրիճեան ժողոված էր իր ընկերները, ժողոված անոց ճիգը՝ հետապնդելու կորսուած հայ դատը՝ Արեւմտքի մէջ, կապած էր իր ճակատագիրը տարուհի բողոքութիւններու ճակատագրին։

Նահր-Օմարի մէջ շինել տուած էր աղիւսէ եւ թիթեղէ ընդարձակ սրահ մը, մասնակցած էր այդ սրահի շինութեան աշխատանքին՝ ջուր կրած, աղիւս փոխադրած, մղած էր վասպուրականցի սակաւաթիւ քանի մը մտաւորականներ ուսուցչութեան եւ թիթեղեայ առաստաղով այդ նորաշէն սրահին մէջ վերստին հնչած էր Ա. Բ. Գ. ի յաւերժական արձագանգը։

Երեկոները հաւաքած էր վասպուրականցի բիճաները, երիտասարդները՝

արժանեցիկ անտառին մէջ... խօսած անոնց վերջին տարիներու անցուղարձեցումն չուրջ, Հայոց անկախութեան, Մեծի ժառին... հոն, հեռու հեռաւոր Ամանոսի լանջերուն բուռ մը հայերու պայքարին մասին - Ձէթունէն Ատուտ, Մերսին ու Տէորթ-Սոլ: Քոստէր Սարտարապատի մասին, Հայաստանի Հանրապետութեան մասին, Համայնապետը նոր իրաւակարգին մասին: Քոստէր էր մեծ ու ցնցող անկումներու մասին՝ Կիլիկիոյ պարպումը, Հայաստանի Հանրապետութեան շինումը: Քոստէր էր կարծի մեծ ամօթին մասին: Քոստէր էր նահանջին մասին, Զանգեզուր, Նոյնի մասին, որուն հանդիպած էին արդէն Վասպուրականցի տարազերները Պարսի մէջ, լսած անոր խօսքը՝ կրակի, խանդավառութեան, հաւատքի խօսքը, Լեւոնահայաստանի սպարապետին խօսքը, որ կ'երթար տարապիւր, կ'երթար Պարսիսէն նստող զէպի Արեւմուտք, զէպի մեծ անծանօթը, Հայոց հաւատաքին կայծը դեռ անմար, իր աչքերուն թորը... բոլոր անոնց պէս, որոնք մըտաբանութեամբ նորի հաւատքէն՝ կարեցին ծովերը ու քաղին Արեւմուտքի կեղծ լոյսերուն:

Վահրիճեան չէր պատկամեր, այլ արժանեցիկ անտառներուն մէջ կը խօսէր, կը լսէր տարազիւ բողբոջութիւններու դանդաղութիւնը... մանաւանդ բիճաններուն, որոնք մէկ մէկ իմաստուններ պարձած, արդէն անցած էին քննադատութեան:

- Դեռ կանուխ է քննադատել: Դեռ կանուխ է մեղադրել, յանցաւորներ փնտռել: Դեռ գեանի մէջն ենք: Դեռ չենք հասած ափը: Ափը հասնելէ ետք՝ դէրին է ճշդել պատասխանատունները... Այսպէս կը տրամաբանէր Վահրիճեան:

- Ո՛չ, կ'ըսէին բանգէտ բիճանները, եթէ պարոն Արամ ողջ մնար, մենք հոս չէինք հասներ:

- Ճիշդ է, ճիշդ է, բայց պարոն Արամը ոչ եւս է: Մենք կորսնցուցինք մեր

երկիրը... ամուր, շատ ամուր սեղմեցին եւ կոտորեցին մեր ողնայարը... յանցաւորներ չփնտռենք... բոլորն ալ մեծով, պզտիկով՝ Կաթողիկոսով, վարդապետով, տէրտէրով, վարժապետով, մտաւորականով, յեղափոխականով, հարուստ պահպանողականով, քաղաքացիով, դիւղացիով, բոլորն, բոլորն ալ յանցաւոր ենք... ամբողջ ժողովուրդը յանցաւոր է... կ'ըսեմ դեռ կանուխ է քննադատել... յանցաւորներ փնտռել:

- Աղորդ է, աղորդ, կ'ըսէին ոմանք:

- Ձէ, չէ, կ'ըսէին յեղափոխութեան ծնունդը տեսած ու ապրած ծերունիներ, որոնք ամբողջ գիշերներուն կը նստէին Տիգրիսի ափին, կը ծխէին բթմամտ հաստութեամբ փաթթուած պապիրոսներ, կը խօսէին, կը հակահարկէին, կը հայհոյէին աջ ու ձախ, երբեմն ալ բռնկելով կը հեռանային, երբեմնով որ ալ պիտի չկան, սակայն պահ մը ետք դանդաղ - դանդաղ քայլերով վերադառնալով վերջին լսելու Վահրիճեանը, որովհետեւ կը սիրէին զայն... անոր մէջ կը տեսնէին իրենց վերջին յոյսին նշոյլը:

Երիտասարդները, երկրին ժառանգ մնացած ամօթխածութեամբ՝ լուռ կը հետեւէին ուս զրոյցներուն:

- Ո՛չ, ոչ, սխալ է քննադատել: Հալ կեանքի վերջին տասնամեակը 1908-էն 1918 եղաւ ծանրակշիւ, եղաւ աւելի խոր, աւելի ցնցող քան մեր իրականութիւնը: Այդ տասնամեակի ուսերուն քանի մը դարերուն բնուէ կայ... այդ բնուէ շատ, շատ ու շատ ծանր էր մեր կոնսկին համար:

- Ո՛չ... ո՛չ...

- Այո՛... այո՛...

- Յեղափոխական ըլլալէ դադարեցանք: Դարձանք վարժապետ, տէրտէր, կ'առարկէին կարգ մը յամառ բիճաններ, որոնց՝ երիտասարդութիւնը Շատախի լեռներուն վրայ եղած էր հարսնեղութիւն մը վառօդի եւ զնդալի հետ: Պէտք



է կռուէին թուրքը, 1915-ին մեր Վասպուրականին նման:

— Այո՛, այո՛... ո՛չ, ո՛չ...

Կար չօղափելի յուսալքում մը այդ տարադիր բազմութիւններու այգերուն խորը, կար սակայն հաւատքը վերադարձի: Ամէն նահանջ վերջի վերջոյ ունի իր վերադարձի ճամբան — անոնք քանի մը տարիներու ընթացքին չորս անգամ նահանջած էին Հայոց աշխարհէն զէպի կողմէ: Վերջին նահանջը եղած էր երկար՝, շատ երկար՝ թուրքը դոցած էր Երեւանի ճամբան, անոք չեղած էին իրենց ուղղութիւնը զէպի հարաւ, անցած Կապուտան լճի քովէն, հիւսուցք իրանէն... Հոն, ճամբու ընթացքին, անուշադրութեան հեռանալով զոչ առած էին, իրենց հին գեղավարներէն մին... յուզուած էր ժողովուրդը, փոթորկած, սակայն քսուած էր, իջած վար՝ հիւսիսէն հարաւ: Տեղ մը հասնելու, ապառով տեղ մը հասնելու հաստատ որոշումով: Վահրիճեան միացած էր առանձին, այդ բազմահազար տարադիրներուն հետ, քսուած էր անոնց հետ, առանց որդած՝ զանոնք եւ հասած անոնց հետ Միջագետքի առաջին հանգրտանը՝ Պարուպա:

Յակոբ վառեց սիկարէթ մը: Բարձրացուց զինիւր բաժակը, նայեցաւ Վահրիճեանի յոգնած աչքերուն: Պարակեց բաժակը:

— Դժուար է, Յակոբ, շատ դժուար... անկարելի ժողովուրդ է՝ մեր ժողովուրդը:

Կցկուտը այս քառերը սահեցան հատիկ-հատիկ... Պանդաղ, որոնք կարծէք չէին գար Վահրիճեանի շրթունքներէն, այլ ավ ուսին պարբերական ցնցումներէն: Այդ ցնցումները վերջերս դարձած էին յաճախակի:

— Ոչ թէ դժուար է, այլ դժուար էր:

— Ընդէ կա, դժուար էր: Օրին դժուար էր: Պահանջկոտ ժողովուրդ ենք: Շատ կը պահանջենք: Կատարեալը կը պահանջենք եւ կը մոռնանք եւ մոռցած ենք միշտ ձեռնունայն:

Յակոբ դաժած էր նայուածքը Վահրիճեանի աջ ուսին: Վահրիճեան զգաց անոր անկարելին ծանրութիւնը:

— Մի մտահոգուիր, Յակոբ, այդ ցնցումները ժառանգական են: Հորս ավ ուսն ալ, որոշ տարիքէ մը ետք, յաճախ կ'ոսնենար նման ցնցումներ, բայց ան չգնաց աբդ ցնցումներէն, այլ ծերութեանէն:

Յակոբ ժպտեցաւ:

Յովհաննէս լեցուց պարպուած բաժակները:

Չուէն գլուխը հակած կը մտափէր: Դուքա՛, Յուսուարի խածնող հովը կը խաղար — ասնիքներուն վրայ, փողոցներուն մէջ, պատուհաններուն տակ: Երբս՝ խանգարուած լուսթիւր վերստին հաւաքեց ինքզինքը եւ տեղաւորուեցաւ սենեակէն ներս:

«Դժուար է, շատ դժուար»:

Յակոբի պանկին տակ սկսաւ դառնալ այս «գոթուարներէն» կազմուած շուրջպար մը, նախ հանդարտ ազա աբազ-արազ:

Վահրիճեան նստած էր տիւանին վրայ, ուխտան մեծ գլխով, յոգնած նայուածքով եւ լայնախարիսի ուսեւրով:

«Դժուար է, շատ դժուար»:

Անոց խարոյկները կը ծխային, արձակելով թանձր, սեւ եւ խեղդէլ մուխ մը...

— Մենք կռուեցանք: Արմենականը, Հնչակեանը, Դաշնակցականը, Ռամկավարը, լուսաւորչականը, բողոքականը՝ կողք կողքի կռուեցանք: Դիմեցինք ամբողջական ինքնապաշտպանութեան: Ամբողջ Վասպուրականը վերածուեցաւ մէկ զարկերակի՝ զետեղուած պարոն Արամի սրտին, ուղեղին մէջ: Մենք կռուեցանք, հասնելու համար հոս: Այս աւազներուն: Հա, չիօսիք, կռուեցանք անգլիական բանակին դրած օրէնքներուն, անոր շնորհած ալիւրին, թէյին կամ շաքարին համար... աշխարհի մէջը... Մենք կռուեցանք: Ամբողջ Վասպուրականը կռուեցաւ՝ Նահր-Օ-

մարի, Պարսի լուսնակներուն համար։  
Ձիտի... աշխարհի մէջը...

Վահրիճեան լուսնակներ կ'ունենան  
զրէր իրեն ուղղուած այս պարկուտ-  
ները։

Բիճաններն ու ջոջ աղաները բնազ-  
դական խմաստութեամբ, փափկանկա-  
տուութեամբ կ'ըսէին «Ձիտի», փո-  
խանակ «Ձիտի» ուղղելով խոսքը ուղ-  
ղակի Վահրիճեանին։

«Դժուար է, շատ դժուարներու»  
լուրջպար կը դառնար գեռ Յակոբի  
մտքին սալալատակներուն վրայ։

«Դժուարներու» այդ խառնարանին  
մէջ, ապաւինած լուսնակներ կը արկար  
Վահրիճեան։ Լուսնակներ դարձած էր  
անխոցելի զրահ մը, միջնարեղ մը ա-  
նոր համար։

— Ձիտի՞նք, չիտի՞նք...

Ձէր խոտեր Վահրիճեան, բայց պա-  
հանջկոտ էին բազմազաղար այդ տարա-  
դիրները, միշտ պահանջկոտ։

Արդար էր անոնց պահանջկոտու-  
թիւնը, արդար էր անոնց դժգոհանքը,  
կը մտածէր Վահրիճեան — կոտած էր  
այդ ժողովուրդը մեր պատմութեան  
մէջ աննախընթաց միասնականութեամբ։  
Կոտած էր մեր պատմութեան հողեկան  
տեղատուութեան ամենատրտում շրջ-  
անին, երբ ամբողջ հայ աշխարհը,  
նոյնիսկ Ձէրքունը բռնած էր մեղկօրէն  
մորթուելու ճամբան։ Կոտած էր այս  
ժողովուրդը եւ Արծրունիներէ ժառան-  
գած գերակայութեան զգացումը առա-  
ւել եւս արմատացած էր իր մէջ։ Ան չէր  
սպրած — կը մտածէր Վահրիճեան, Տէր  
— Ձօրի կամ քաղաքի ստորակայութիւ-  
նը, բայց հիմա, Միջազգային հարաւին  
մէջ, անզիտակի բանակի պարէնը,  
օտարին կողմէ զրուած օրէնքները դա-  
հափթօրէն նետած էին զայն գերակա-  
յութեան դադարներէն ստորակայու-  
թեան անդունդները։

«Դժուար է, շատ դժուարներու»  
լուրջպար կը դառնար գեռ Յակոբի  
ուղղիւն մէջ։

— Վահրիճեան, դուրպան քեզ, մենք  
կ'երթանք։ Կ'երթանք Հայաստան։ Թող

ըլլայ Խորհրդային Թող ըլլայ կա-  
հալ։ Մենք կ'երթանք։ Հոն ճամբան ա-  
ւելի կարճ է, աւելի մօտ ենք մեր Վա-  
նին քան հոս։ Արարիստանը։

— Ո՛չ, ո՛չ... այո՛... այո՛։

— Սպասենք, ջանք մը, քիչ մը եւս  
սպասենք։

— Ո՛չ, ո՛չ, մենք կ'երթանք։

Գաջին։ Բազմազաղար տարադիր-  
ներէն դաջին միայն երեք-չորս հա-  
զարը։

— Թող ըլլայ կախալ։ Թող ըլլայ  
Վանը պարպել տուող խային ուռուը,  
անոց եօթը պորտը... Երեւանը շատ ա-  
ւելի մօտ է Վանին քան Արարիստանը։

Կը ծխային անբոց խարոյկները՝  
արձակելով թանձր, սեւ եւ խեղդիչ  
մոխր մը։

Տարի մը երկու — առաջին ներգա-  
թէն ետք պայթեցաւ ռումբը՝ հրդեհե-  
լով վերստին ծխացող խարոյկները,  
Նահր-Օմարի բազմազաղար տարադիր-  
ներու հողիներուն մէջ։

1924 — Լոգան։

Հայկական օճախ։ Պօղոս փաշա  
Նուպար։ Ահարոնեան։ Խատիսեան։

— Ղուբալան, Վահրիճեան, գնա՛,  
գնա՛ խօսիք Վասպուրականի անունով։  
Խօսիք քսանըւնիկ հազար տարադիրներու  
անունով։ Դառնանք ետ, եթէ ոչ Վան,  
գոնէ՛ անոր մօտ տեղ մը։ Ձենք ուղիւ  
անկախութիւն։ Միայն թող մենքը՝  
ինկիլիզն ու Ծրանքը, լիւերիկան երաշ-  
խաւորեն մեր ապահովութիւնը։ Մենք  
յոգնեցանք, շատ յոգնեցանք... յոգնած  
ենք, յոգնած։ Գնա՛, գնա՛ Վահրիճեան,  
գնա՛, դո՛ւն ալ մեղք ես, քեզի ալ մեղք  
է, գնա՛ աշխարհ տես, փարեղ տես, ը-  
կերներդ տես... գնա՛, ճար մը ըրէ՛...  
դուն ալ մեղք ես... քեզ դուրպան Վա-  
րիճեան, գնա՛...

— Ո՛չ, գեռ կանուխ է, սորվեցէ  
սպասել, սորվեցէ համբերել... եթէ  
սորվինք այս բոլորը, այն ատեն շահած  
կ'ըլլանք մեծազոյն ճակատամարտը...  
տէրը կ'ըլլանք մեր տնտեսութիւն... տէրը  
կ'ըլլանք ստեղծուած այս նոր իրակա-  
նութեան։

— Ձէ՛, չէ՛, զնա՛...:

Զայրոյթ կար այս անգամ բիճանիւ, ջնջ աղաներու աչքերուն խորը: Զայրոյթ վաճրճեանի դէմ:

— Ի՞նչ ճակատամարտ: Ի՞նչ իրականութիւն: Մենք լաճեցանք վանի ճակատամարտը: Մենք յաղթեցինք թուրին... Գնա՛, խօսէ մեր անունով: Խօսէ մեր կացութեան մասին... Խօսէ Պօղոս Փայլաչին, մեր Ահարոնեանին, ղուրպան անոր: Գնա՛ վաճրճեան, զնա՛, զուն ալ մեզք ես, ջնա՛ ինչ ինչ տես... կարգադրէ մեր խնդիրը... մնացի՛ր դուն միայն մեզի հետ, մեզի համար առանձին... ղուրպան, զնա՛:

Մոլոր ճամբով մեծ պահարաններով նամակներ հասան Նահր-Օմար: Կը կանչուէր վաճրճեանը՝ Փարիզ:

Նահր-Օմարի հիւղաւանը փոթորկեցաւ անգամ մը եւս:

— Տեսաք, տեսաք, մենք գիտէինք, առանց վաճրճեանին լսական ժողան չլուծուիր: Կը կանչեն պիեքը, զօռով կը ղրկենք, ղուրպան իրեն... պէտք է երթայ: Թող տան մեզի օճախ մը, դժուար չէ, եթէ ոչ բոլոր հայերուն, բայց մեզի կու տան, անպայմանօրէն կու տան... մենք կուրպանք, յաղթեցինք, վանի տէրն էինք, ամա էն օռնսպիլ ուռուսը խանդարեց... Թող երթայ: Ինք գիտէ: Ինք կրնայ լուծել մեր հարցը, քոնէ մեր վառարկանքներու համար:

Գնաց վաճրճեան:

Դուրսը դեռ Յունուարի խածնող հովը կը խաղար փողոցներուն մէջ, աստիճաններուն վրայ, պատուհաններուն տակ:

Դժուար է դժուար...

Տարաքիրները սպասեցին:

Ամբան երկար գիշերներ: Օգոստոս: Լողան, Հայկական օճախ:

Նահր-Օմարի արմաւենիի անտառներուն մէջ, Լողանի դժուարութիւնները, անլուծելի հարցերը դարձան դիւրալուծելի: Լուծուեցան առանց որեւէ դժուարութեան, առանց որեւէ քննադատութեան:

Բիճանները, ջնջ աղաները, նոյնիսկ վարժապետները, իրենց իմաստութեան փառաբանները կը հիւսէին:

— Կարգադրուած է ամէն ինչ: Վաճրճեանը հիմա կը խօսի, կը բացատրէ, կը համոզէ՝ Լոյս ձորճին, Քիճմանոյի, ո՞վ չէ լսած վանի անունը, ո՞վ ծանօթ չէ Հայոց Հայրիկին, մեր այդ դեռտանին, վանայ լճին, Շամբրամարներին... մի մտահոգութեք, եթէ ոչ բոլոր հայերուն, բայց մեր հարցը կը կարգադրեն... կը տանին մեզ, եթէ ոչ վան, գէթ անոր շատ մօտիկ տեղ մը... ապահով տեղ մը:

— Ձէ՛, չէ՛... Ի՞նչ ըսել է «անոր շատ մօտիկ տեղ մը»: Մենք մեր վանը կ'ուզենք: Հայկական օճախը միայն վանի մէջ կարելի է հիմնել... Ի՞նչ ըսել է «անոր շատ մօտիկ տեղ մը», մենք կուրպանք... վանին դուրս հայկական օճախ ոչ ոք իրաւունք ունի ստեղծելու... մենք անկոխութեան մեր իրաւունքը կը զիջենք, կը համապարհակրենք պայմանաւ, որ օճախը հիմնուի վանի մէջ... միմիայն վանի մէջ՝ վանն է մեր բուն Հայաստան:

— Անշուշտ, անշուշտ բոլոր մեծերը պարտական են մեզի... ո՞վ է խուլ իմ մէջը, որ պիտի համարձակի հակառակել:

— Ջանքով, ինչպէ՛ս սիրտ կը մաշեցնէք, մեր Ահարոնեանը կու տայ դասը այդ խուլին: Ղուրպան անոր անունին, անոր ղրիշին՝ արիւն կը կաթի, արիւն:

— Ո՞վ է այդ խուլը... այդ իմ մէջը:

— Այո՛, այո՛, մենք մեր վանը կ'ուզենք... օճախ՝ միայն վանի մէջ:

— Ջանքով, մի յոգնիք, վաճրճեանը կը կարգադրէ, մի յոգնիք:

— Այո՛, ճիշդ է, ո՞վ է այդ խուլ իմ մէջը, մեր Պօղոս Փայլան անոր... ինչ որ է, սպասենք... հայուն Աստուծոյ մեծ է, ամենազօր... սպասենք:

Օգոստոսի լիալուսին գիշերներ:

Լողանը փոխադրուած էր Նահր-Օմարի արմաւենիի անտառներուն մէջ:

Վերադարձի յոյսը, իր ծիրանի գոտին պարզած էր հողիներէն ներս։

— Կը վերադառնանք, կը վերադառնանք մեր հողերուն, մեր ծովուն, մեր Վարազայ վանքին... Թո՛ղ չըլլանք անկախ, կը բուռն որ մեծերը երաշխաւորեն մեր ապահովութիւնը։

— Կառուցանք մենք այս աւազներուն համար, անդլիական քանակին ալիքին, թէյին կամ չաքարին համար։

Վահրճեանէն ստացան քանի մը բարեւազիւրներ փաթեղէն։ Լոգանի կամ օճախի մասին ոչ իսկ տող մը։

— Զանք, ուրբաթախոս մարդ է մեր Վահրճեանը, ինչո՞ւ պիտի գրէ։ Կաշխատի։ Վերջնական կարգադրութիւններէն ետք, լուրը կը լսենք աշխարհի շորս կողմերէն։ Մարդը կ'աշխատի... չի սիրեր խօսիլ, չի սիրեր գրել։... յաղթանակը մերն է, կը հիմնուի օճախը։

Անցաւ ամիս մը... տարակոյսը ինչպէս ալ օճ մը սողոսկեցաւ հողիներէն ներս։

— Զանք, գրեցէք թէ ինչ կըլլաւ։ Ինչո՞ւ այս շուրթերը։ Նոյնիսկ պարզ բարեւազները դադրեցան։ Ինչո՞ւ։

— Ո՛ւր են վերջին թերթերը։

Վերջին թերթերը ամսուան մը հընուրթեան թուականը կը պարզէին։

— Ո՛ւր են նոր թերթերը, վարժապետ։

— Ասոնք են... կ'ուշանան... ծովի, անապատի՝ ճամբաներով կու դան... կ'ուշանան։

Առաւօտ մըն ալ արեւածագէն առաջ, երբ դեռ կը նիւրէք Նահր-Օմարի հայկական հիւղաւանը՝ պայթեցաւ ումը, Պարսոյէն։

Յնցուեցան հիւղաւանին անապատի պատուհանները, առաստաղները, տանիքները։

— Օճախը թաղուած էր Լոգանի մէջ։ Թաղուած էր ծանր խաչքար մըն ալ դրուած վրան։

— Ինչպէ՞ս, ով ըսաւ։

— Թաղուած էր թաղուած։ Իսմէթ

փաշան յաղթական վերադարձած էր՝ Լիզարա։

— Զանք, ո՞վ ըսաւ, անոնց եօթը պորտը, ո՞վ թաղեց, ո՞վ, ըսէ՛ք։

— Այո՛, այո՛, Մուսուլի նաւթի ալիքները ողողեցին, թաղեցին մեր օճախը, այո՛։

Իջաւ մուկը հողիներէն ներս։ Կը մեռնէր վերջին յոյսն ալ։ Այրուած էին վերադարձի բոլոր կամուրջները։

Բոցավառուող խարոյկը հանգած էր վերստին, արձակելով, տարածելով աւելի թանձր, աւելի սեւ, աւելի խեղդիչ ծուխ մը։

— Ո՛ւր է Վահրճեանը, թո՛ղ դա՛յ, թո՛ղ պատմէ։ Ի՞նչ ըրին Պօղոս փաշան, Ահարոնեանը... հապա . ո՛ւր են մեր բարեկամները՝ Լոյս ձորձը, Քիմանտոն, ո՛ւր են։ Ինչո՞ւ կ'ուշանայ Վահրճեանը... Ի՞նչ կայ հոն, փաթիլ... մենք հոս, ինք հոն, ինչ գործ ունի հոն... Թո՛ղ դա՛յ իր ժողովուրդին... Խեղճ ենք անիծել Լոգանին ալ, օճախին ալ... Թող վերադառնայ։

Փախնան վերադարձաւ Վահրճեան։

Պարճեալ փոթորկեցաւ հիւղաւանը։

Վահրճեան պահեց իր հանդարտութիւնը, իօնեցաւ ինչ որ խօսած էր նախ քան մեկնումը։

— Թող մեկնինք, թող մեկնինք Հայաստան... Թող Հայաստանը ըլլայ կախալ... Թող ըլլայ ուսուսին։

Այս անգամ ալ մեկնելու, չմեկնելու մակընթացութեան, տեղատուութեան ալիքները յաջորդեցին իրարու։ Յուզումը ընդհանրական էր, սակայն նուազ պահանջկոտ։

Դժուար է, շատ դժուար...։

Հայկական օճախի տեղատուութենէն ետք, մակընթացութեան նոր ալիք մը նետեց Հայաստան Վասպուրականցի տարադիրներու երկրորդ խումբը։

Պացին — անկախ Հայաստանի, հայկական օճախի, յուսահատութեան մոխիրը իրենց նաւածքներուն մէջ։ Պացին հոն, ըսելով։

– Մենք չկուուցանք այս աւագնե-  
րուն համար, այս թէյ ու շաքարին հա-  
մար:

Մնաց վահրիճեանը բազմահազար  
տարադիրներու հետ: Անցաւ քառորդ  
դար եւ քան մը աւելի: Միտան քիճա-  
ներն ու ջոջ աղաները: Երկուստարդ-  
ները դարձան թեկնածու նորօրինակ  
բիճաններու՝ թրծուած հինին կազապա-  
րով: Մանուկները կամ նորածինները  
զտրճան նոր օրերու մարդիկ, ժառան-  
գական իրենց ենթազողը պարարտացած  
կեանքին, նոր պայմաններուն աղբիւ-  
րովը, կենսանիւթովը:

Կեանքը յաղթեց...

Նահապետի կղզեացած հիւղա-  
ւանը լուծուեցաւ: Միջադէտքի քաղաք-  
ներուն մէջ: Իբար խառնուեցան վա-  
զուրականքին, անապատներու ճամ-  
բով, Միջպահաք հասած Տիգրանա-  
կերացին, Ալիթունցին, Սոնցին, Էր-  
դրուցին, Ուրբերդցին, Աղեարթցին...  
Իբար խառնուեցան ամբողջ հայաշ-  
խարհը:

Կազմուեցաւ Պաղտէթը: Գաղտէթ-  
ները:

Ինչպէս Շամիրամի բերդը: Զորացաւ  
Վանայ ծովը: Վարազայ վանքին քիւե-  
րուն տակ ծիծեռնակները ալ բոյն չէինե-  
ցին, իսկ պատերն ի վեր կամ վար դե-  
զին մողէզներու տողանցքը շարունակ-  
ւեցաւ անարձապանք ամայութեան մէջ:

– Դժուար է... Հաս դժուար, անկա-  
րելի ժողովուրդ է մեր ժողովուրդը...

Զաւէնն ու Յովհաննէսը կը մը-  
փէին...

Վահրիճեանն ու Յակոբը լռու-  
թեամբ կը խօսէին, կը կշռէին, կը դա-  
տէին:

Դուրսը Յունուարի խածնող հովը  
կը խաղար փողոցներուն մէջ մըմնջե-  
լով:

– Դեռ կանուխ է, դեռ կանուխ է  
խօսիլ, վերադնաւտել... դեռ չենք  
կարած դեռ... չենք հասած դեռ դե-  
տափին... դեռ կանուխ է:

Յունուարի հովը կը խաղար, մերթ  
բնդ մերթ կը հարուածէր պատուհան-  
ներու ապակիները, երբեմն փաղաքա-  
կան, երբեմն բիրտ:

Հովի հարուածներուն կ'արձապ-  
դէին պատուհաններու ապակիները:

– Անցաւ քառորդ դար եւ քան մը  
աւելի: Վաղը կ'անցնէ կէս դար եւ միշտ  
քան մը աւելի:

Յունուարի հովը կը շարունակէր իր  
խաղը, շարունակէր քաղաքի խաղը:

– Դեռ կանուխ է... դեռ կանուխ  
է...

Յակոբ կը լսէր, կ'ըմբռնէր հովին,  
ապակիներուն փոխապացութիւնը: Իր  
նայէր վահրիճեանին: Կարճէք առաջին  
անգամն է, որ կը տեսնէր զայն:

– Անցաւ քառորդ դար... վաղը  
կ'անցնէ կէս դար, կ'արձապանքն ա-  
պակիները վերտափն:

Յակոբ կը նայէր վահրիճեանի ա-  
կօտուած դէմքին, յազնած աչքերուն,  
քառորդ դար, կէս դար կ'անցնէ, կ'անց-  
նին... կը նայէր Յակոբ եւ վահրիճե-  
անի գէմքին վրայ կը տեսնէր ժամա-  
նակը քարացած... անշարժ ժամանակը:

Դուրսը Յունուարի խածնող հովը  
կը խաղար փողոցներուն մէջ, քիւերուն  
տակ, տանիքներուն վրայ եւ Յակոբ  
դեռ կը դիտէր վահրիճեանի գէմքը, որ  
ժամանակը ծանրաբեռն նաւու մը նման  
նետած էր խաբիսիւր: Նետած՝ ան-  
շարժ քարացումով մը:

Լ. Գ.

(Շար. 4 եւ ... ԱՆԱԽԱՐՏ)

## ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Աւելի քան տասնամեակ մը առաջ՝ դիմացի պատմաւածէն ստորագրող երիտասարդը, Նարեկ Արեղայ ծածկանաւով, «Նայիրի» շարքաբարձրիմ մէջ տոբրազրեց չորս-հինգ պատմաւածիներ ու որոշ հետաքրքրաւոր արքայացիքը քննարկեցին մօտ, բայց մեզի համար պէտքէն ավանդուեցին թեկնածուներ իր ճիշդը:

Առօրեան աւ իր տոգտակները, որքան ալ բաւեալ ու բիրտ ըլլան անոնք, չեն կրնար վճարական արգելիներ ըլլալ ստեղծագործական քափիմ: Ոչ մէկ տըր-տանգէ ի վիճակի է հակառակը հաստատել: Տեղեկատու հոգի մը չի կրնար չազատկել, արտաքին պայմանները անկարող են ծածկել մերձին հոգեւոր լոյսին գալաւ տեղը: Ժայռքիւն տարերքը ունեցող շուրքերը տարբայնորէն կը փառնեն բոլոր խոշորութիւնները:

Թագ քահանա հաստատումներ չբռնիմ մեր պնդումները: Անուանում հայ գրականութիւնը հարուստ է վերի մտքները երաշխաւորող տաւալներով: Մամի լոյսը գեղեցիկ աւորեայի մը ճշմարիտ, ու մամի լոյսով գրուած են մեր կարգ մը գլուխ-գործոցները, մանաւանդ վառագը բարեօգտութիւն մը մասին չի վկայեր, բայց մանաւանդ մանգաղին տակ գրուած հարիւրաւոր էրեր աւ հասարակութիւններ մեզ, որոնց մտածած գեղեցիկութեամբ ու կշռոյթով կը բարաւ յեն աշուր բնութարար արար:

Ի՞նչ տարակուսանքներ ալ առաջ էջուն, կը մնայ փաստը, ըստ որում՝ պատմական պայմանները աւելի լոյսատու չեն, քան մամիմ աւ մանաւանդ մանգաղին օրօք ապրողներուն պայմանները, ու անգամ մը ըսինքն արդէն՝ Ժայռքիւն տարերքը ունեցող բարերը տարբայնորէն կը փառնեն բոլոր խոշորութիւնները եւ հոն կը բանան իրենց կարկաչները:

Թորգոմ փոքրամեծին վերադարձին առիթով գրի առինքն այս առիթը, բայց միայն Թորգոմ փոքրամեծին չեն վերաբերիր անոնք, նկատի ունինք բազմաթիւ հասցէներ:

Լաւ հետեւեցէ մեր երիտասարդներուն տարագրած գրութիւններուն ու պիտի ստուգէ իսկույն, որ շնորհ ունեցողներ չեն պակսիր անոնց մէջ: Պակտիւնը, հաւանաբար, հաւատարմութիւնն է: Կը մնայ պարզապէս հաւատարմութիւնը մնայուն դարձնել, ամէն օր բան մը գրել, ամէն օր բան մը պատահել, ու առօրեան յաղթանարիւնով՝ առօրեայ գրողութիւն, ապրումի՝ վերածել գրականութիւնը:

Վերի քննարկումները գլուխ-գործոցներու մասին հարաւոր յաւակնութիւններ չունին, ո՛չ ոք կրնայ գլուխ-գործոցներու խորութիւնը աւ իրադրութեան մարտնչել, բայց գրական յաղթանարիւնները հաւատարմութեան ստեղծած պայմաններուն մէջ տեղեկութեան են միշտ ու երկնաւոր են անոնց կողմէ, որոնք, հակառակ շարքաբարձրական պայմաններուն, միջոցառելի վերածած են գրականութիւնը:

ԹՈՂԳՈՄ ՓՕՍԹԱՃԵԱՆ

## Կ Լ Կ Լ Ա Կ Ը

— Հայրերի՛կ, նարկիլէն պատրաստ է, հիմա... :

Հայրիկը՝ Սիմոն Առաքելեան, մուտ ձիթագոյն երեսներով բարձրահասակ անձ ժըն է։ Մենդեամբ եւ անդեամբ արեւելքի Փը։

Իր գերագոյն երանութեան մէջ է այժմ։ Տան ետեւ, պարտիզահայեաց Վն-րանտային մէկ անկիւնը, բազմած հին բազկաթոռի մը վրայ, կը սկսի Ծխել ահա իր կլկլակը։ Ամերիկայի այս հեռաւոր մէկ քաղաքին մէջ՝ իրապէս տարօրինակ է իր այս երեսայթով։

❖

Ուղիղ երկու շաբաթ է որ կը տառապէր մարդը։ Բժիշկը յստակ կերպով յայտարարած էր իրեն, որ այդ թէ՛մպէ՛ք ինչ գործածութիւնը զինք շիտակ գերեզման պիտի տանի։ Այնուհետեւ, անկողնիս հետեւի վրայ, զազրեցուցած էր կլկլակի գործածութիւնը երկու շաբաթէ ի վեր։ Երկու շաբաթ՝ երկու տարի։

Կլկլակը... արեւելքի սրճարաններու առասպելական նարկիլէն, իր քառասուն տարուան անբեկանելի բարեկամ մը... Ինչպէ՞ս կարելի մէկ անգամէն։

Երկու շաբաթուան ընթացքին քսան անգամ փոթորիկ պայթեցուցած էր ասան մէջ։ Ջղային պրկուած վիճակով, մագնիսացած դրութեան մը մէջ դրած էր ամբողջ տունը։ Այլ ի՞նչ անէ՞քներ, ի՞նչ հայհոյանքներ չէր թափած կնոջ եւ աղջկան դիտուն։ Սկսած էր Ամերիկայի դիւտը ընող Գոլմպոսէն, եւ յանգած

երկոտասորդ փեսային գլխուն, որուն պատճառով եւ մեղքով, ինք եկած ինկատ էր Ամերիկա։

Իր ի՞նչ գործն էր. իր ի՞նչ պէտքն էր գալ Ամերիկա։ Եկած էր ակամայ, նոյնիսկ կուսեւրով կտրծեա գլխուն պալլեք։

Լիբանանի Թրիփոլի քաղաքէն էր վարպետ Սիմոն։ Միջերկրականի գեղաժիծաղ այն քաղաքէն, որուն քնակիչները խոշոր ընտանիքի մը պէս կ'ապրէին, կը նկարագրէր յաճախ։ Հոն՝ «Այ. Փի. Սի.» ընկերութեան յայտնի եւ ճանչցուած մեքենագէտը եղած էր տարիներով։ Այժմ հինգ տարիներէ ի վեր՝ հանգըստեան կոչուած։ Հարիւրաւոր գործաւորներ աշխատած էին իր տնտիշական հակողութեան տակ։ Բոլորէն սիրուած, յուրքէն յարգուած Վարպետը եղած էր ինք։ Մտալիւմ Սիմոն։ Այսպէս կը կոչէին զինք։ Արաբ թէ՛ հայ շրջանակներէ հաւասարապէս ճանչցուած մարդ՝ հանգըստեան կոչուելէ ետք ալ կեանքի նոր ուղիքի մը շինած էր իրեն հոմար։

Առտու կանուխ, իր նախաճաշը եւ սուրճը խմելէն ետք՝ կ'իջնէր շուկայ, ուր կը կատարէր իր ասան հանապազօրեայ գնումները։ Մէկ քանի խօսք կը փոխանակէր Ծածոթներուն հետ, որոնց անխուսափելիօրէն կը հանդիպէր հոն։ Վճիռներ, ու կարծիքներ կը բանաձեւէին օրուան անցուղարձերուն եւ քաղաքական կացութեան շուրջ։ Եւ ապա՝ շիտակ տուն։

Տունը՝ երկու յարկանի՝ բացւած էր բանուկ մէկ փողոցին վրայ։ Վերադարձին պատրաստ կ'ըլլար արդէն կլկլակը։ Կիներ մասնաւոր խնամ-

բով եւ հոգածութեամբ կը զետեղէր զայն պատշգամբը: Սիմոն վարպետ ողորակելու աթոռի մը վրայ նստած, բարձրագոյն ներշնչումով մը կը վայելէր զայն ահա: Կլկլակին պատուանդանը՝ յոյժ թափանցիկ ապակիէ շինուած մասնաւոր շէշ մըն էր, որուն ազդեցութեամբ էին անոր միւս մասերը: Գունաւոր եւ երկար մար-բուճը, յետոյ շէշին բերանը դրուած կորնթարզ եւ վառ կրակազլուխը: Այս կրակներուն վրայ՝ կը վառէին, կը խանձէին ծխախոտի լայն կտրուած տե-րեւները, որոնց բարկ բոցը եւ ծուխը կը լեցնէր իր բոլորովը, մինչդեռ շէշին ալտերէն հեղափոխ, անմուռն կը սահէին արցունքի կայլակներ:

Սիմոն վարպետ իր անվրդով գէժ-բով, պաշտամունքի կեցողի մը ճշմարիտ ֆերմեանդուծիւնը ունէր կարծես, ճիշդ այն ճորմներուն պէս, որոնք ա-ղօթքի կը կենան հին մեհակներու աս-րուաններուն առջեւ:

Վարէն անցորդներ կը տեսնէին զինք: Կը բարեւէին: Ո՛վ չէր ճանչնար վարպետ Սիմոնը...

— Մարհապա, Մաալի՛մ Սիմոն.

— Բարե՛ւ, Սիմոն վարպետ... Իրի-կունը ի՞նչ կ'ընէք, մեզի եկէք: Կ'երթա-յին. քայլ մը տեղ էր: Քալելով ամբողջ քաղաքը կրնային պտուղի, ինչո՞ւ չե-րթային:

Ք

Այսպէս էր կեանքը հոն: Բայց մէկէն ամէն ինչ փոխուեցաւ:

Քանի մը տարիներ անալ, Ամերի-կայէն այցելու հայ երիտասարդ մը, ի-րենց մէկ գրացիին տունը, զիպուածով հանդիպած էր վարպետ Սիմոնի երէց աղջկան: Վարպետ Սիմոն զգուարահած մարդ՝ այնքան ալ հանդիպով եւ դիւրու-թեամբ չէ որ յօժարած էր իր աղջիկը տալ այս աղուն: Բայց տունը էր ի վեր-ջոյ: Տարի մը ետք, միւս աղջիկը, նոյն պէս հարս եկած էր Ամերիկա: Ետքէն, իր երկու մանչերը Ամերիկա եկած էին ուսանելու...

Այս բոլորէն ետք, Վարպետ Սիմոն ինք ալ ստիպուած եկած էր իր զսակնի-բուն մօտ:

Օղակայանին մէջ, Ամերիկա ոտք կոխած վայրկեանին իսկ զիսցայ սր ալտեղ իմ տեղս չէ՛ր կ'ընէր խեղճ մարդը:

Ամէնէն առաջ զրկուեցաւ իր լըլա-նակէն: Ո՛ւր մնացին իր ծանօթները: Շուկան: Հրապարակը, ուր միշտ կը շրջապատուէր արաբ եւ հայ ծանօթնե-րով, բարեկամներով: Յետոյ՝ իր օովո-րուծիւնները: Եւ առաջին հերթին՝ իր նարկիլէն: Ամիս մը տեւեց, մինչեւ որ կրցաւ հասկնալ որ Հոլիվուտի մէջ նա-րտուէյ անուն սուրիացի նկարաւան-ծր կը ծախէ եղեր իր փնտռած թէմպէ-րին: Ու այսպէս, զոնէ իր մէկ պապակի զոհացում կրցած էր գտնել:

Բայց իր տունէն մինչեւ Հոլիվուտի սուրիացի նկարաւանաւոր, քսան մղոն համբայ էր: Ա՛խ այս հեռաւորութիւն-ները Ամերիկայի մէջ: Եւ իսկ Անհետը մասնաւորաբար: Օթօ քչել չէր գիտեր: Լեզու բերան չունէր: Այս տարիքէն ետք անգլերէն սորվիլ, Աստուած մի արա-ցէ: Բայց այս բոլորը գինք հաղմանդած դարձուցած էին: Ի՞նչ ընէր: Ինչպէ՞ս ընէր:

Լման տարի մը յարչարուելէ ետք՝ մտածեց ետ երթալ: Իր փափաքը յայտ-նեց կնոջ եւ աղջիկներուն: Տղաքները իրմով հետաքրքրուած անդամ չունէին: Մին՝ Նիւ Եօրք, միւսը՝ Սան Հոսէ, եր-կունքն ալ կ'ուսանէին: Բայց թէ՛ կնոջ, թէ՛ աղջիկը ծիծաղելի գտան իր վե-րադառնալու փափաքը:

— Ես հոս պիտի մեռնիմ, ըսաւ մարդը:

Բայց ո՞վ մտիկ կ'ընէր իրեն: Կը հայհոյէր: Կը պոռար, կը հրամայէր... եւ հուսկ ապա՝ կը յոգնէր, կը լռէր...

Այս բոլորին յաջորդեց անխուսափու-լին. արեան բարձրացում: Ինչպէս անկո-ղին: Տասնըհինգ օր գամուած էր անկո-ղին, ու կը հետեւէր բժիշկներու անբե-կանելի հրահանգներուն:



Ձ

Այն տասնհակ հազարաւոր անտէր-անտիրական խլիկներէն մէկն ալ ինք էր, որ Տէր Զօր տեսաւ, ու ճակատագրին յէկ բախտովն է միայն, որ ազատեցաւ բզանդէն, երբ տաս-տասներկու տարեկան երեւուն մանուկ մըն էր դեռ, եւ ուր ապաւէն ու գթութիւն դտաւ անապատի արար մէկ գիւղացիէն: Ետքէն՝ Հալէպ: Յետոյ՝ Ժիպէյ, ինչպէս Քնիւր Իսթ Բլոք-ի Գոնի հայկական որբանոցը:

Անապատը եւ արարողութեան սէւ գոհնները զինք շարքաշ մարդ մը դարձուցին, ու եղաւ ճարպիկ եւ կերպրելալ անձ մը: Պէր որ զնոց յարմարեցաւ: Լեզու դտաւ, արհեստ սորվեցաւ: Գործ տաւ: Դիրքի հասաւ:

Մայրենի Ծողողութէն, իր բնաջնջուած դերասաննի միակ ապրող ճետն էր, որ ամուսնացած ու շորս գաւազներ հասցուցած էր ազգին:

Ու ասկայն...

Եւ ասկայն, ինչո՞ւ այս տարիքէն ետք՝ տեղ փոխելու պէտք էր դատապարտուէր Վարպետ Սիմոն: Երբ երիտասարդ էր, դիւրին էր յարմարիլ: Բայց հիմակ ալ տարիքը առած էր, նոյն աշխոյժ չունէր: Իր գաւազներուն Ամբ-րիկա հաստատուիլը փրկութիւն մը ըլլալէ հետո... ինք կը տեսնէր համայնական աշխատանքը, որ կը սպառնար հոս ծնող-մեծցող բոլոր հայ երիտասարդներուն:

Նախ պիտի ժողնային լեզուն, յետոյ սովորութիւնները: Բարքերը: Եւ զազ-դին կապող թաթոս պիտի թուլար, պիտի թուլնար...

Ինք միակ փափաք մը ունէր: Թուրքին կողմէ բռնադրաւորա՞ծ հողերուն տա-վատագրումը կ'ուզէր տեսնել: Կ'ուզէր Հայաստանը տեսնել: Ու կը նախընտրէր հոն մեռնիլ, հայրենիք էր:

Հոս, Ամբրիկայի մարդոց ապրելա-կերպը կը տեսնէր ինք: Կը տեսնէր երի-տասարդութիւնը: Ու հոգին կատաղա-

թեամբ կը լեցուէր: Զէր հանդուրժելը.

Ուրիշներ՝ բարի հայեր, որոնք եկել էին քառասուն տարիներ առաջ՝ թերեւ յիսուն: Մարդիկ, որոնք աշխատեց, տքեց էին, անդուլ եւ անդադար, ու այն օրը որ հանգստեան պիտի կոչուէին, երջանիկ կեանքի մը ակնկալութեամբ՝ յանկարծ դիտապաստ ինկած էին քրտի կաթուածով, կամ այլ անծանօթ հիւանդութեան մը զոհ երթալով: Ուրիշներ, աւելի բախտաւորներ, դիրքի հասածներ, բոլորն ալ ուշ կամ կանուխ հրաժարու-հալու տային այս աշխարհէն, անհաշիւ հարստութիւններ ձգելով կառավարութեան կամ իրենց ալլասերած գաւազներուն:

Այս երեւոյթներուն առջեւ ինչպէ՞ս կրնար անդգայ մնալ ինք:

Ձ

Տասներկու օր անկողնոյ ծառայելէ ետք՝ ոտքի ելած էր Վարպետ Սիմոն: Ու նարկիլէին կրակը պատրաստ էր թափելու բոլոր տնեցիներուն զլիւռն, եթէ այսօր իսկ, այսօր իրեն թէ՛մպէ՛ր չըբէրէին:

Ինչ փոյթ մահուան սպառնալիք: Այսպէ՞ս ալ պիտի մեռնէր, այնպէ՞ս ալ: Ինք կը նախընտրէր երջանիկ մահը:

Ու իր փեսան, ստիպուած ձգելով դործ, աշխատանք, զացած էր մինչեւ Հոյիվուտ ու բերած էր ահա թէ՛մպէ՛ր:

Ու կլկլակը հիմակ չէր արտատուեր այլևս. այլ կը խնդար: Կը խնդա՞ր, ան-վերջանալի ու վարակիլ ջրբեշով մը:

Ջուրի վերամբարձ ցայտումներուն հետ, լախ ժպիտ մը կ'ուրուաղծուէր այժմ Վարպետ Սիմոնի դէմքին, որովհետեւ որոշած էր Լիրանան վերադառնալ անպայման:

Բ. Փ.

Մարտ 30, 1967, Լաւ ԱՅՅԵԼԻՍ

## ԵՍ ԽԱՐՈՒԱԾ ԵՄ

Օ՛հ, ինչ անակնկալ... երբեք չէի կարող յուսալ, որ կարող է գտա-  
տահել մենք միասին լինենք երբեմնից:

Քանի որ, այդպես է, հիմի նստեմք հով-հովի եւ թո՛ղ, որ աշխար-  
հը մեզ նախանձի: Չկարծես սիրտս կը բացեմ քո առջեւ. ո՛չ, ո՛չ, երբե՛ք,  
ես անվերջ կը փառաբանեմ քո գեղեցկութիւնը, քո հմայքի ու թովածի  
գովքը կ'անեմ, գիտեմ, որ մարդկանց ներաշխարհը քեզ չի հետաքրքրում,  
նա, որ իր սրտի ու ծագու գաղտնիքները բացեց քո առջեւ, պատմեց իր  
կրած տանջանքները, իր անկեղծ սէրը երգեց քեզ, քո սիրտն ու հագին  
չուզեցին, ծաղր թուացին քեզ եւ դու հեզեօրէն ծիծաղեցիր այդ բալտի  
վրայ: Ես քեզ հետ կը խօսեմ այնպէս, որ քեզ նրճուամբ պատմառի, կ'ա-  
սեմ այն՝ ինչ քեզ հետաքրքրում է եւ կը պատմեմ այն հեփաթները, որոնք  
քեզ դուր են գալիս:

Գիտեմ, որ դու գիտակցում ես քո գեղեցկութիւնը, գիտեմ, որ բա-  
լտը երկրաստորագները քո երկրպագուներն են եւ դեզեղելով շուրջդ, անվերջ  
խօսքեր են շռայլում, սիրտդ սիրաշահելու համար: Այդպէս էլ լաւ է, նա  
սր գնահատեց իր արժէքը՝ մնաց միշտ բարձր, նայնիսկ իր ամենագոյնեղակ  
քշուտութեան մէջ:

Արեւի վերջին ծափանցները վտիտ տատամսում են հեռաւոր սարե-  
րի կատարներին եւ սակաւ առ սակաւ անցնում, չհամար, շուտով մթն-  
շաղր կ'իջնի եւ մենք հեռու կը լինենք մարդկանց խուզարկու աչքերից:

Տեսնո՞ւմ ես, ո՛վ գեղեցկութեան դիցուհի, երկններանց վարդերն  
ու ծաղիկները իրենց գլուխներն են խոնարհել քո հմայքի առջեւ՝ բիրեղ-  
ներ շաղկելով շուրջդ, գովաշունչ գեփիւռները մեղմ ու հեշտագին ելեւէջ-  
ներով խաղում են քո ռսկէ վարսերի հետ եւ լուսէ լների մէջ, սէզ ու հը-  
պարտ կարասներն են երկնիզածութեամբ լողում, հրապարտում քո կա-  
խարդակաւ հայեացքից:

Իսկ ես, ես հիմի կը զարդարեմ քո հալանի կուրծքն ու քեռերը ա-  
զամանդէ ու մարգարտէ մանեակներով ու ապարանջաններով, որոնք քո  
անմահ գեղեցկութեանն են վայել. քեզ դուր կը գալ այս ամէնը, ամէն-  
քը. որ քեզ սէր կը ներշնչեն, որ քեզ կը դիւթեն ու կը գերեն:

Բայց ինչո՞ւ նա լուռ ու անխօս հեռացաւ արտառուելով:

Օ՛հ, ես խաբուած եմ:

Ս. ԲԵՒՌՆԻՆ

Թեհրան

## Ղ. ԺԻՐԱՅՐ

# Փ Ի Ք Ա Տ Ե Լ Ի . . .

Այդ օր, կ'որոշէ այլեւս իր առաջին  
համարձակ քայլը առնել եւ յանձնել ինք-  
յինք մթութեան գիրկը:

Երիտասարդ տարիքին տակաւին ո՛չ  
մէկ ատեն գիշերը այդքան թովիչ եւ լու-  
սաւոր պատկերացումով մը բազմած էր  
իր հոգիին վրայ:

Պենթութեան մը ետեւէն վազելու  
տենչը այլեւս մտատանջութիւն մը ըլ-  
լալէ դադարած էր իրեն համար: Վճռա-  
կան որոշումով մը ելաւ նետուելու իր  
փոքր սենեակէն դուրս, քայլու մազոդ  
տնձրեւին տակէն, թաց մայթերուն վրա-  
յն, կոխկոտելով հսկայ ծառերու խո-  
նաւ տերեւները, հասնելու համար հո՞ն՝  
ուր կեանքը կը ստանայ նոր իմաստ, նոր  
երանգ, նոր եղանակ:

Կեանքին համերգը այնտեղ այլ շեշ-  
տով կը հնչէ:

Հոգիները հո՞ն, տարբեր բեմերու  
վրայ, իւրաքանչիւ ընդունակութիւններ  
կը սկսին ցուցաբերել:

Եւ լոյսէն խրտչող, լոյսին խորթ  
հոգիբանութեամբ՝ գիշերին հարազատ  
եւ մթութեան ապաւինած՝ հոգիներու  
ռոյտ մեծ դադարիքը, այգտե՛ղ... , ա-  
ռաջին իսկ պահին կը քակուի եւ նե-  
րաշխարհներ կու գան լեզու առնել, ար-  
տասունք լռելիայն, հրճուիլ եւ կամ ման-  
կութիւնէ կուտակուած գերազոյն յուզ-  
մունք մը խեղդել մութին մէջ, սբուն  
խորհուրդը կեանքին անբաժան մասը կը  
կազմէ:

Կեանքին իմաստը տոյգ պահուն կ'ամ-  
բողանայ, կը քաղցրանայ եւ մարդ կը  
սկսի սիրել նոյնիսկ տղեղը. մոռնալ ա-  
ռօրեայէն եկած բոլոր ապշտուկներն ու  
ատելութիւնները, եւ ըլլալ բարի. ապա՝

յուսալ եւ փարիլ կեանքի մէկ ուրիշ  
խորհուրդին, մոռացութեան յանձնելով  
յուսախարութիւններ ու ձգտիլ շիբա-  
կանացած նպատակներու:

Վճռական որոշում մըն էր, եւ ո՛չ  
ոք կրնար շեղել միտքը:

✽

Արեւելքի ուսանող մըն է Ժողէֆ,  
եւ տունը խղճախայթի ուսանողական  
աղբատիկ դրամապանակը կը վերցնէ եւ  
դուրս կը նետուի:

Կէս ժամէն արդէն հասած է իր  
փնտռած վայրը:

Փիքատելի՛... .

Լոյսերու քաղաք մը:

Նեղ ու թաց փողոցներով, նոյնա-  
նման եւ բազմաշաբէ:

Հմայող, գրաւիչ, մագնիսող:

Կիսամութ տուններ կողք-կողքի, եւ  
խուցեր բազմաթիւ, մեծ յուսմունքներ,  
որոնցմէ կախուած են վարազոյրնիք դու-  
նապեղ: Եւ ամէն մէկ տան դրան՝ փոք-  
րիկ, կարմիր կամ դեղին լոյսեր, որոնք  
կու գան խախտելու փողոցի տիրող մը-  
թութիւնը:

Ժողէֆ պահ մը կանգ կ'առնէ դրան  
մը դիմաց, որուն վրայ երեք անուններ  
կը կարդայ: Բոլոր անուններն ալ զէրո-  
սի՝ անունին պէս քաղցր կը հնչեն, կը  
թովեն հոգին, սիրտը կը սկսի բարա-  
խիլ, տրոփել սովորականէն աւելի ա-  
բաւ: Եթէ զէրոսի՝ արձանը այդ նըր-  
բաւէն փիքատելին կը դարձնէ գրաւ-  
չութեան մը կեդրոնը, եւ կը խորհրդ-



մար աշխատանքի պարզ, բայց իրեն հա-  
մար աշխատանքի բարդ, անբացատրելի, ան-  
ըզնունելի: Միթե՞ կարելի է մերկ կնոջ  
մը դիմաց շուտով, եւ դիտել միայն:  
Ա՛հ, ինչ լաւ եղաւ, որ փրկուեցայ իրմէ,  
եւ աշխատանքիս համար, որ ազատ եմ այս  
պահուս, փրկատելի փողոցներու նոր  
թափառաշրջիկս, ե՛ս, որ ջիւղ դրամ ու-  
նիմ եւ դեղեցիկներ կ'որոնեմ:

Այսպէս կը մենախօսէ ժողովը եւ  
կարծէք առաջին անգամն ըլլալով, ահ-  
ռելի իրականութեան մը որպէս ականա-  
տես՝ նոր փոխադրութիւն մը կը սոր-  
վի եւ կը հաստատէ:

— Քիբատելին քաղցրութեան եւ հա-  
ռաշունքի ֆիզիոնէ, անյազ հողիներ քա-  
ւարարող, հողիներ մուրհեցող: Փիքա-  
տելին կը կիզէ հողին, կը խոցէ: Հատա-  
դատ է եւ նոյնքան խորթ: Քաղաքական  
ուժ ունի եւ նոյն ատեն վանողական  
սաարսափելի բնաւորութիւն: Ովկիանի  
նման խորթ ունի եւ անբացատրելի շատ  
խոհեր: Հողիները կրնան ըմբռնել միայն  
երեւոյթն ու մակերեսը, կը դժուարանան  
խորանալ այս տարօրինակ կեանքի փի-  
լիսոփայութեան մէջ, երբ իրենք ներկայ  
են փրկատելի զանազան բեմերու վրայ,  
եւ կը հանդիսանան որպէս յաջող կամ  
ձախողած դերակատարները այս խենթ

ու անբնականոն աշխարհին, որ մարդ-  
կային էութեան կը շնորհէ տեսակ մը  
աւելն, տեսակ մը խանդ, տեսակ մը  
զաւրտնի թռիչք:

Ժողովի առաջին այցը կ'ունենայ  
այլ վախճան:

Վճռական եւ արագ որոշման մը ար-  
դիւնքը, իր ըմբռնողութեամբ, տարբեր  
պիտի ըլլար. սակայն անհամարժեք ու  
անփորձառու ըլլալու մասին երբեք չէր  
մտածած ինք:

Երբեք չէր կրնար մտածել, որ փ-  
քատելի երթալն ալ դժուար է, իր նոր  
սորված դասերուն պէս, իր թոթոված  
օտար լեզուին նման: Կը կարծէր, թէ  
հեշտ է փողոցի աղջիկ մը գտնել...

Փրկատելի լողացող լոյսերու մէջ  
իր հողին խորը կանացի ժպիտ մը չը-  
թափանցեց, եւ նոյն անյազ հողիով  
առաւօտեան առաջին ժամերուն, յոգնա-  
րեկ եւ քնաթաթա փերտղարձաւ ուսա-  
նողի սենեակը:

Փրկատելին, սակայն, ժողովի հա-  
մար դարձաւ ապրումի նոր ակունք:  
Թէեւ ֆիզիքապէս չբաւարարուած, փ-  
րեց այս տարօրինակութիւններով ի-  
կեղորոնը, եւ երիտասարդ իր խենթ հո-  
գին այդ օրուրէն ակսեալ յանձնեց  
կեանքի խենթ հովերուն:

Թեհրան

Ղ. Ժ.

## Ա Ն Ո Ւ Ն Դ

Ահա ամուսն այս գիշեր, արցունքիս հետ քոկ-քոկ  
Կու տամ քու թափին սպիտակ, այնպես զաղտնի, վարանքով,  
Որ ինձմէ զատ ուրիշներ չկարենան կարգալ գայն,  
Ու կարգալով չգիտնան. քէ պատրաստ չէ ան միայն...:

Իարձակ կ'ուզեմ պահել գայն սրտիս խառնակն այս գիշեր,  
Ու գտնել քան մը քեզմէ, որուն փարիս սիրայեր,  
Որմէ կարտ սպասեմ սիրոյս համար անապակ,  
Բան մը չունիմ անկէ զատ քեզմէ ինձի յիշատակ...:

Հիմա վանկերն ամուսնիդ, ինչպէս փերքեր վարդերու,  
Կը գրկուին քոկ-քոկ ու դիւքանքով կը բուրեն,  
Որոնք հովում անցին պէս սրտիս մէջ հեւք կը քաղան...:

Թովի՛ անունդ այս գիշեր, արցունքիս հետ յանձնեցի  
Ահա քու թափին սպիտակ, քերթուածի մը ընդմէջէն,  
Բան մը քեզմէ յիշատակ այս մէկն ըլլայ քո ինձի...:

ՇԱՀՊԱՆ



## ՏԱՆՁԷ ՈՐՔԱՆ ՈՐ ԿՐՆԱՍ

Տանջէ՛ որքան որ կրնաս քու նայումդիդ ազնիւով  
Տեսիլներուս քանդակին մութ-մութ ծալքերն հրաշէկ,  
Անոնց ամէն մէկուն տակ ունիմ ծիծաղ մը պահուած,  
Դեռ քանդակիդ ցայգերու ճանաչներովը հիւսուած:

Տանջէ՛ որքան որ կրնաս. ու խօսքերուդ կապարճէն  
Անհղափազ իժերու քոդ սարսափները սուլեն...  
Ինչ փո՛շք սակայն հոգւոյս մէջ անապատներ կան քեզիմ,  
Ուր հովերն ինձ կը բերեն լուսէ քեւերն անհունին:

Տանջէ՛, տանջէ՛, քայց անա քաբքիչներդ կը հոսին,  
Արտասուքաց օրերու յիշատակներ շիթ առ շիթ...  
Տանջէ՛ որքան որ կրնաս, պիտի երգեմ ես կրկին...  
Քու աչքերուդ արցունքն է մուսաներու քորք գինիմ:

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

Պէրուք

digitised by A.R.A.R.@



ԿԵՆԴԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ,

ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲՈՅԸ

Այս ումանամուտին, ընթերցողը, «Ազգակ» օրաթերթին միջոցով հետևեցաւ Մուսա Փրենսին, բազմաթիւ համալսարաններէ վկայուած, բազմաթիւ համալսարաններու պատուոյ անդամ, բազմաթիւ տիւրքաներու տէր բազմաշնորհ այն անձնաւորութեան, որ հայաբնակ վրայ գործադրուած մեծ ապամարտի իր հրատարակած հարցերէն մէկը պարզուեց եւ բռնի եւ գործով լծուեցաւ ամուր արդար լուծման: Յեղափոխութիւնը դատապարտող եւ մուս ու քաղաքակրթական մտաւորականը եւ առարկայական տուեալներու երկմամբ՝ հրատարակութեան տուաւ փրանսերէն լեզուով գիրք մը՝ «Հայաստանի մեր օրը, եւ, ի յայտ բերած իր պարկեշտութեամբ ու անաշուարտեամբ նուանեց ընթերցողին համակրանքը:

Հետագայ էջերուն իր ստորագրութեամբ կու տանք ձեռք մը մարտնչական թիւով մը, որ սովորական գրութիւններէն չէ: Չտես չենք, եւ մեր մասին գրուած բոլոր գրութիւններուն առջեւ կաշառուելու վարժութիւն չունին մեր օրերը, քայքայիւն չուն արտասանուող սովորական բառերով կազմուած չէ այս յօդուածը, ունի խորք մը, խորք մը վրայ կը նստի լայս մը, որ իր պայծառութեամբ տեսանիլի կը դարձնէ մեր ստեղծագործ, տոկուն ու յանձնարարուն խոտմուտին բնորոշ գիծերը:

Դարերուն բերած հազար փոքրիկներուն աւ հազար փոքրութիւններուն զինադրելու ուժ հայրաշրջած ցեղին ճշդապիւն կառուութեան հանգիստը պեղող այս փորձը նմոշ մըն է, որուն էական գիծերը կ'արժէ որ խորհրդածութեան միւր դառնանք մեր մը-տաւորական շրջանակներուն մէջ, ժողովրդականացուիմ, օրակուսի իր տակունութեամբ հայաստան քուրճի'ն իսկ նգմող հայկական անհատականութիւնը մեր ճանաչողականութեամբ չտարաբանայ, օտարամտութեան պիտանքները չհեռացնեն մեզ ցեղին կենսատուականներէն, մեզ՝ մե'նք մնանք, ու հայկական լինելութիւնը անդի ունենայ անսոց խոշորագոյն:



«Հայերը բնութագրված են եւ միշտ կ'ընտելանան միւս ժողովուրդներում, երբ պէտք է թիգերը միացնել՝ հազափայլութիւնը զարգացնելու եւ մարդկութեան ծառայութիւն մատուցանելու համար: Ո՛չ մէկ երկիր վճռաւեցաւ ամենց ներկայութեան, բնականապէս, կը բուխէ բաշտքն ալ բարեբախտ նկատեցին ամենց գործունէութիւնը: Թուրքերը՝ իրենց, իրենց խորհին մէջ, զգրացին, պիտի զըջան տակաւին ու հետզհետէ տեսնէին: Տրամաբանութեան օրէնքը ա՛յս կը պահանջէ, ա՛յս կը պահանջէ մանաւանդ ժողովուրդները տրամաբանութիւնը»:

ՄՈՒՍԱ ՓՐԵՆՍ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԼԻՆԵԼՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԱՑՈՒՑ

ՏԻԳՐԱՆ ՈՍԿՈՒՆԻ

Պերկուն կ'ըսէր արդէն, թէ կեանքը լինելութիւն է: Այս կը նշանակէ արդեօք, թէ լինելութիւնը շարունակութիւնն է ներկային՝ անոր այլազան յատկանշներուն եւ բազմապիսի երեւնորուն մէջ: Հայաստանութեան մասին մեր ուսումնասիրութիւնը, ցեղասպանութեան բնագիտութիւնը եւ պատմական շրջագծին մէջ, իրրեւ մէկը մարդկութեան դէմ գործուած ոգիներուն, նպատակ չունէր երբեք հազարերորդ անգամ կատարելու յուզիչ նկարագրութիւնը

հայկական սպանդին, աներեւակայի՛ն՝ իր վայրագութեան եւ աննկարագրելի՛ իր ահաւորութեան մէջ: Ընդհակառակն, մեր առարկայականութեան մէջ, աշխատեցանք կարելի եղածին չափ հաստատել զբոլորականներն ու իրողութիւնները, եւ, մեր ենթակայութեան մէջ՝ առաջագրել, որքան հնարաւոր է, անխուսափելի հետեւանքները հաստատակ ազգային արժանի լինելութեան մը: Այդ լինելութիւնը տակաւին ապարէզ կը կարգաւ մարդոց արդարութեան եւ բարձր քա-



ղաքականութեան, երբ ածոնք հետեւ են ճշմարտութեան: Ինչ որ արդար է՝ արդար է եւ փորձեցինք համեստօրէն, պիտի փորձենք միշտ՝ այս ազնիւ գաղափարը յարգել մինչեւ ծայրը, աշխարհի մը մէջ, ուր, աւա՛ղ, առաքինութիւնները կարծէք աստիճանաբար կ'անհետանան եւ ուր բարոյականը հետզհետէ կ'ընկրկի... Սրբեմն հարց կու տանք մենք մեզի, եւ՛ իրաւամբ, թէ արազաքայլ շէնք դիմեր միթէ դէպի ամբողջական անհաստատանքներն, դէպի խաւարները անցեալ դարերուն, դէպի թանձր մշուշը պատմութեան...

Ինչ կ'ուզենք ապացուցանել: Ինչ պէտք է ապացուցանենք: Ինչ է հայկական լինելութիւնը: Ժամանակն է, որ վերջին այս հարցումը տրուի, իբրեւ հետեւանք առաջին երկուքին, խոստովանելով հանդերձ, թէ այս պարագային, կայ մէկ պատասխան. պատասխանը աւարկական է իրականութեան, պատմական եւ քաղաքական իրականութեան միաժամանակ:

Առանց երբեք չեղելու հակացեղապաշտի մեր անտեղիտանի սկզբունքին, չենք կրնար անդիտանալ սակայն հայ ազգին «ցեղային յատկութիւնները», ազգ մը, որ յաղթական դուրս եկաւ ցեղասպանութենէն եւ աւելի քան երբեք կենսունակ: Հայկական ճանահետականութիւնը դատապարտուած չէ կորուսելու սփռւածով, որ եղաւ պարտադրանքը դարեւու վրայ տարածուող յաջորդական ջարդերու եւ անցեալ դարուն վերջերը սկսած սխալմամբիք հայաստանութեան: Ընդհակառակն, այդ անհատականութիւնը կրնայ արժեւորուիլ եւ հարստանալ, պայմանաւ, որ ի սփռւած աշխարհի ցրուած հայերը խոր դիտակցութեամբ եւ զօրեղապէ՛ս օգտագործեն ցեղային կարողութեան հանքերը, զորո թաղուած կը գտնենք ցեղին ընդերքներուն մէջ: Հայերը այսպէսով կոչուած են մնալու «հայ» ի դերեւ հանելու համար յաւիտենապէս հռչակաւոր ցեղասպանութիւնը թորքերուն, եւ այս՝ շատ բան ըսել է արդէն... Բայց «ինքզինք» մնալու այս

կոչը, ինչպէս պիտի տեսնենք հայկական լինելութեան հանդէպ ներկայ դերը՝ բոլոր մէջ, պէտք չէ ու երբեք պիտի չկասեցնէք «ընտելացում»ի գործողութիւնը, որ, պէ՛տք է խոստովանիլ, լիովին յաջողեցաւ այս կենսունակ ժողովուրդին մօտ: Ամէն պարագայի մէջ, ժողովուրդ մըն է այս, որ ցեղապաշտ չէ, սփռւած եւ աքսորի ենթարկուած այլ ժողովուրդներու պէս: Այլ խորապէս մարդկային ժողովուրդ մը, որ ատկա՛ն կը հաւատայ եղբայրութեամբ հարստացած հաւասարութեան մը:

Հայկական լինելութիւնը չի սահմանափակուիր պարզ վերադարձով մը նախնեաց հողերուն, որովհետեւ, ատկեւ, մեր համեստ կարծիքով, երկրորդական երես մըն է: Յամենայնդէպ՝ հեռուօր հանգրուան մը նպատակի ճամբուն վրայ: Հազը, ուշ կամ կամայիս, ինքնաբերաբար պիտի ըլլայ ամուց, անքանք տէ՛րն եմ անքոր՝ իրենց հոգիին մէջ: Քանի որ, մեզի համար, հողը ունի հողի մը, որ հաղորդութեան մէջ է ազգին հոգիին հետ, որուն նուիրուած եւ նուիրութեւում է պատմականօրէն եւ ընկերութեւում: Ներխուժողները շատ յաճախ ունին անցքի իրաւունք մը միայն, ազատ՝ ժամանակի եւ միջոցի սահմաններէն: Մարդիկ, երբեմն, սխալմամբ, կը կարծեն տէր ըլլալ բանի մը, մինչ իրականութեան մէջ, կը ստանան անոր չարապը՝ տուգը միայն: Ու բռնադրաւորները, ո՛վ որ ալ ըլլան, իրենց էութեան մէջ կը զգան այս անփութիւն ճշմարտութիւնը, զոր, շատ շատ, կ'աշխատին ծածկել: Այս կէտին մէջ, աշխարհ քանի՞ անգամ չեղաւ գոհը իր սեփական պատրանքներուն եւ քանի՞ անգամ քաղաքականութիւնը չաշխատեցաւ դիտումնաւոր կերպով ստեղծել նման շփոթներ:

Հայկական գտնաբերքին ազգա-հոգեբանական ուսումնասիրութիւնը, որուն միացաւ պատմական փորձ մը, մեր «Հայաստանութիւն» գործին ընդմէջէն մեզի ցոյց տուաւ, թէ այս տիպարը ունի ցեղային երկու բացառիկ յատկութիւններ. առաջինը՝ «ընտելացում»ի յատկու-

թիւնը, երկրորդը՝ «կենսունակութեան», ինչպէս պիտի հաստատենք հայկական լինելութեան այս յանդուգն ուրուագծին մէջ: Անգամ մը եւս յայտնենք, թէ մեր վերոյիշեալ գործը կոչուած չէ ո՛չ ցեղային կամ կրօնական պատակտում եւ ոչ ալ ժողովուրդներու միջեւ ատելութիւն ստեղծելու: Ընդհակառակն: Խորագէտ աղբուած Օսմանեան կայսրութեան քառասուն ողբալի վիճակէն, կատարեալ բարեմտութեամբ նուիրուեցանք զուտ առարկայական ուսումնառիրութեան մը, որուն շնորհիւ կըցանք երեւան հանել հայ սպիտակ քաղաքին յատկութիւնները:

Այսպէս, այն պահուն, երբ այդ կայսրութեան գրեթէ բոլոր ենթակայ ժողովուրդները, քրիստոնեայ թէ իսլամ, կը դրսևորէին աղատադրութեան իրենց արդար ցանկութիւնը եւ քաջայայտօրէն կ'անջատուէին այդ ժամանակի «շիւանդ մարդուն» մէջ մարմնացած «օսմանցիութենէն», լայնօրէն փաստուած է, որ հայերը, ընդհակառակն, նոյնքան հաւանականութեամբ էին իրենց հայկական ազգայնականութեան, որքան իրենց օսմանեան քաղաքացիութեան: Պատմութիւնը կ'ընէ, թէ անոնք կը դահանային Բարեհաբուրդումնի պահանջելով, մինչ ուրիշներ կ'ապստամբէին արդէն, իրենց կատարեալ անկախութեան համար: Ասիկա մեզ կը մղէ երեւան բերելու ընտելացումի յատկութիւնը հայերու մօտ, ու այս՝ հայկական «տիպար»ին յատկանշիւնընէ մէկն է: Բացի ասկէ, պատմականօրէն հաստատեցինք, թէ թուրքերու ցեղասպանութեան զոհ հայերը հազուադէպ պարագաներու զէնքի գիմեցին՝ միայն ինքնապաշտպանութեան համար: Որինչդեռ, Աստուած դիտէ, թէ հայերը որքան քաջաբի կռուողներ են: Անոնք նոյնիսկ անցեալին քաջութեամբ եւ սիրով պաշտպանած են անկումի մէջ Եղդ կայսրութեան մը սահմանները եւ հիմերի վարչակարգի մը, որ բնաջնջումի դատապարտած էր զիրենք: Ասիկա, պէտք է խոստովանել, կ'ըսենք ի պատիւ իրենց: Ինչեք փաշա հրապարակով ընդունած է արդէն այս ճշմարտութիւնը:

Հայերը միշտ տէր կանգնեցան կայսրութեան հռչակաւոր ազատական «Սահմանադրութեան»: Ապա, խորապէս հաւատացին Երիտասարդ Թուրքերու խոստումներուն: Օրինակ, Ջոհրապ եւ իր ընկերները պատրաստ էին ներելու նոյնիսկ միջոնաւոր զոհերը, եթէ Երիտասարդ Թուրքերը վերադառնային «Իթիլ-հաս վէ Թերապի» կուսակցութեան ազատական վարչակարգութեան: 1894-ին մինչեւ 1915, օսմանցիութենէն բազմցյալ յուսախաբ՝ հայերը ընտելացումէ ընդունեցին հրաժարիլ ա՛յն ատեն միայն, երբ նոյնինքն օսմանցիութիւնը հրաժարեցաւ իր սկզբունքներէն՝ կորստելու համար ցեղակրօն եւ ազանդամուլ համաթուրանականութեան մը կամ համաթուրքութեան մը մէջ:

«Ապաստան» կոչուող երկիրներուն մէջ, ուր հայկական արիւնքը արժանազանք իր վերելքը, պէտք չկայ ընտելացումի ապացոյցներ տալու: Պատմաբաններու, ընկերաբաններու եւ զինուորական պետերու վկայութիւնները լսած են այս մասին: Առաջին Աշխարհամարտի վաղորդային, «Հայկական Լեզնի»-ն ուղղուած զօրավար Կուրոյի պերճաբան կարգախօսը քաղմարիւններու մէջ օրինակ մըն է, եթէ պիտի ուսմանապահէինք զինական սխրագործութիւններու մարդին մէջ: Մարդկութեան պատմութեան մէջ, ուրախութեամբ կը կարդանք այս ժողովուրդին սահմանուած հրախտադիտական ամբողջ էջեր եւ կ'ըսենք, օրինակ, թէ հայերը գիրից կորուզով, առաւապանքներով եւ այն յարգանքով՝ որ պարտական ենք իրենց փառապանծ անցեալին, արժանի են, որ Եւրոպան պատուաւոր տեղ տայ իրենց աշխարհի մէջը: Հայերը ընտելացած են եւ միշտ կ'ընտելանան միւս ժողովուրդներուն, երբ պէտք է ճիշդը միացնել՝ քաղաքակրթութիւնը զարգացնելու համար: Դրանց հետեւողները միայն ինքնապաշտպանութեան մասուցանելու համար: Ո՛չ մէկ երկիր վնասուցաւ անոնց ներկայութենէն, ընդհակառակն, կը թուի, թէ բոլորն ալ բարեբախտ նկատեցին անոնց գործունէութիւնը:

յըլ թուրքերը՝ իրենց, իրենց խորքին մէջ, զղջացին, պիտի զղջան տակաւին ու հետզհետէ աւելի՝ Տրամաբանութեան օրէնքը ա՛յս կը պահանջէ, ա՛յս կը պահանջէ մանաւանդ ճշմարտութեան տրամաբանութիւնը։

Ընտելացումը ուրեմն հայ ազգին տիրական յատկութիւններէն մէկն է։ Ընտելիւ այդ յատկութեան, հայը կրնայ սքանչելի քաղաքացի դառնալ ապաստան երկրին մէջ, առանց երբեք այդ պատճառով հայկական ճանհատականութիւնը կորսնցնելու։ Վտանգին ենթարկուելու։ Այս վերջինը՝ հայկական ճանհատականութիւնը՝ անխոցելի է, այնքան ատեն որ ներսէն հարուած չէ ստացած։ Վտանգը իր ինքնաքանդումին մէջն է։ Հայերը անոր պաաստիանատուութիւնը կը կրեն իրենց ազգային խղճին եւ մարդկութեան պատմութեան առջեւ։ Պէ՛տք է վախճալ նման ճշմարտութիւն մը քողաղթեմէն։ Ո՛ւր։ Պէ՛տք է քաջութիւնը ունենալ ըսելու, որպէսզի, Աստուած մի պահուէ, չպարտաւորուինք ակահատես ըլլալու հայ ժողովուրդին զոյուրթիւնը հարուածող Յայտնութեանական տեսիլքներու, ժողովուրդ մը, որ գոնէ առաջիկայ, կրնայ դոյառեւել հայաստանէն դուրս։ Պիտի տեսնե՞նք հայեր, որ ձեռով մը հայասպանութիւնը կը հառցնեն իր իսկական նպատակներուն, որոնք յաջուեցան Թշնամիին կողմէ եւ պիտի պարծաղրուին իրենց միջոցաւ։ Այն ատեն, ճակատադրի ի՞նչ հեղեանք, հայերը իրենց սեփական ձեռքերով պիտի բանգըն այդ ճանհատականութիւնը, որ պատմութեան ընթացքին, բոլոր արշաւողները չկրցան քանդել ոչ մէկ ստեն։ Ձենք ուզեր հաւատալ... Հայասպան թուրքերն իսկ ճգմուեցան այդ ճանհատականութեան ժողովուրդեան առջեւ։ Անոնք լռեցին ընդունեցին իրենց պարտութիւնը, առանց սակայն սխալները ուղղելու քաջութեան տաքերիութիւնն ունենալու։

Հայերը մեռան միլիոններով, զոհ՝ ահաւոր սպանդներու, բայց հայկական ճանհատականութիւնը՝ վերապրեցաւ։

Փիւնիկի մը պէս, որ կը վերածնի իր տնիւններէն։ Անտիաքի է անոր գիւնհատականութեան յատկութիւնը, երկրորդը՝ իր գլխաւոր ստորոգծիներուն, որուն վրայ պիտի նետենք արագ անհուրկ մը։

Պատմութիւնը պիտի լո՛ւ է այն հարցումին՝ ի՞նչ է հաւ հայոց կեցութեանը ցաւատանը դարերու ընթացքին, կը գտնենք հետեւեալ պատասխանը. «Այդ կեցութեանը եղաւ վեհարժան եւ հերոսատական։ Վեհարժան՝ որովհետեւ ժողովուրդը, հակառակ իր անհուն դժբախտութիւններուն, ամբօրէն կռուած մնաց իր հաւատքին, իր լեզուին, բարբերուն եւ ազգային աւանդութեանց։ Հերոսական՝ որովհետեւ Հայաստան յաւակաւանացաւ միայն արցունք թափելով, այլ բազմիցս, վերաւոր՝ իր մտերմագոյն զգացումներուն մէջ, զէնքի դիմեց եւ իր արիւնով վճարեց իր հողին պոթկումները։ Նման ազգ մը չի կրնար մեռնիլ ցեղասպանութեան հարուածներուն տակ, ինչ որ ալ ըլլայ ան Անոր վախճանը կըրնայ ըլլալ անմասպանութեան մէջ միայն եւ անոր կենդանի սահմանականութիւնը շատ աւելի զօրաւոր է քան զօրաւորագոյնը արշաւողներուն եւ բռնակալներուն։ Մեր վախը կու դայ ուրեմն ներքին կռիւներու տեսիլքէն, որովհետեւ այս եռուն, բայց որոշ ուղղութիւն չըստացած եւ ոճրային քաղաքականութեամբ մը մաքիւրականորէն շահագործուած ճանհատականութիւնը՝ կը մնայ ընափնջումի միակ օճախը։ Ցեղասպան չըլլալով իրենէ քաղաք ծունկի բերել հայութիւնը, պիտի փորձէ զայն ընափնջել իրենէ ճանհատք եւ իրենէ գիւտակցութիւն, զանոնք իրարու դէմ ցցելով։ Այս անարդ եւ զաղիւր հայասպանութիւնն է, որ պէտք է ձախողեցնել։ Այսպէս որ, հայկական սահմանականութիւնը իր մէջ եւ միայն իր մէջ կը կրէ սերմեր իր սեփական քանդումին։ Ի վերջոյ, այս չէ՞ միթէ մեռալին միւս կողմը եւ նոյնինքն ցեղին հայտնութիւններէն ծնունդ տանող վտանգը։

Եզրակացութիւն. կարելի է ըսել, թէ հայկական լինելութիւնը կախում ունի հայկական այս «անհատականութենէն», որքան ատեն որ կապուած է տնոր: Հայերէն կը պահանջուի վառ տանի այդ անհատականութեան րոյցը, մշակել անոր յատկութիւնները, որովհետեւ ան է կենդանի Հայաստանը իրենցմէ իւրաքանչիւրին մէջ, ինչ առհաստ ալ ունենան, ինչ կուտակցութեան ալ պատկանին, ո՛ր երկիրն ալ բնակին: Իսկ ջաղաքացիներ են ամենուրեք՝ այս հայերը, այնքան ատեն, որ հայկական «անհատականութեան» յատկութիւնները անոր կարելիութիւնը կու տան իրենց: Եւ սակայն, իրենցմէ կը պահանջուի մասնակցութիւն մը այդ «ազգային», որուն սահմանները ամէն բանէ առաջ սահմաններն են անհատականութեան, զերկու Արարատներու հայրենիքն են սահմաններն անգին: Ամենուրեք եւ ամէն բանի մէջ, սքանչելի արհեստաւորներ են, բայց ամէն բանէ առաջ՝ կերտիչները հայկական լինելութեան:

Աշխարհ դուցէ որ մը արդարութիւն ընէ հայ ազգին: Ասիկա մեր սրտագին մտղթանքն է եւ ասիկա Արդարութիւն մըն է: Բայց բուն արդարութիւնը այն է՝ որ հայերը իրենք եւ միայն իրենք

պիտի դարձնեն, անկախ՝ պետութիւն-նիւրու դիրքէն եւ Մեծերու քաղաքականութենէն: Հայը սխալուն է մարդ էակի իր յատկութիւններով: Կէտք է ընդունի այս: Պէտք է սխալուն ըլլայ նաեւ հայու իր յատկութիւններով: Ասիկա բնիկային գործողութիւն մըն է, որ շատ բնականաբար կը կատարուի հայկական «անհատականութեան» մէջ: Ուստի, կրնանք ըսել եւ, առանց հնարաւոր սխալի, ոչ ալ ուրիշները վերաւորելու վտիւն, թէ հայկական լինելութիւնը կենդանի եւ բարեշրջող իրականութիւն մըն է: Պատասխանատու է այս լինելութեան՝ իւրաքանչիւր հայ, ինչ ջաղաքացիութեան ալ պատկանի: Հայաստանութիւնը անշուշտ զատն փորձութիւն մը եղաւ, բայց հայկական լինելութիւնը կը սրտնըւի բախտորոշ փորձութեան մը նախօրեակին, ան՝ որ միւսին չափ արիւն պիտի չհոսեցնէ անշուշտ, բայց որ կրնայ ընկղմել տմբողջ ազգ մը, եթէ ուշուրի չըլլայ ան:

Այսպէս, շատ պիտի պահանջուի հայէն, նախ՝ հայկական լինելութեան համար, ապա՝ մարդկութեան բարեքին, որովհետեւ, ի ծնէ, շատ տրուեցաւ իրեն:

## ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

Ան. Սարգսեան *ուշադրութեան արժանի յօդուած մըն է ստորագրած՝ «Գեղարուեստական թարգմանութեան հարցերից» խորագրով (ՎՍՈՎ. Հայաստան)։* (Ո Սոստոս, 1967) :

Մինչեւ վերահաստատումը հայ պետականութեան, գեղարուեստական թարգմանութիւնը մեր մօտ եղած է ոչ — ծրարեալ։ Եւ, հետեւաբար, պատահական։ Այս պարագան արդէնք եղած չէ, սակայն, հայութեան երկու հատուածներուն համար գրեթէ հաւասարապէս, ունենալու իրենց թարգմանական գրականութիւնը։ Ընդէ, որ արեւելահայերը, ըլլալով աւելի մերձ ռուսական ու գերմանական մշակոյթներուն, իսկ արեւմտահայերը՝ ֆրանսականին, իրենց թարգմանական նախախրութիւնները եւս կրած են ազդեցութիւնները այդ մերձաւորութիւններուն։

Ան. Սարգսեան կը մտնան թէ՛ գեղարուեստական թարգմանութեան դժուար տեղեւորական աշխատանք լինելուց առաջ կազմակերպական բարդ աշխատանք է, պետական նշանակութիւն ունեցող դժուար։

Ընդգծեցի ճառաջը, որովհետեւ, իրապէս, թարգմանական գրականութիւնը կը տարբերի ինքնուրոյն գրական ստեղծագործութիւնէն անով, որ պրոզը կը ստեղծագործէ իր ներքին հակումներուն համաձայն։ Վիպագրին կարելի չէ պարտադրել թատերականութիւն գրել կամ քեր-

թըւած, իսկ ցնարեցակ-բանաստեղծին՝ գիւցագներգութիւն։

Թարգմանական գրականութիւնը, սակայն, ունի որոշ նպատակներ, — սեփական գրականութիւնը օտարին եւ օտար գրականութիւնը սեփական ժողովուրդին ծանօթացնել։

Այս երկուքն ալ իբրեւ «գրականութիւն» ընդհանուր բնորոշումներ են։ Եւ որովհետեւ խնդիրը կը վերաբերի ծանօթացման, թարգմանութիւնները, ուրեմն, պէտք է ըլլան նախընտրութեամբ։ Հետեւաբար՝ ծրագրուած։ Ասկէ նաեւ՝ ճառաջին առաջնակէրթ գոյութեան իրաւունքը։

Ծանօթ է, որ Հայաստանի մէջ այդ աշխատանքը վերապահուած է «Հայաստան» հրատարակչականին։ Բայց «Հայաստան»ը միայն թարգմանական հրատարակչական չէ։ Ան կը հրատարակէ նաեւ հայ գրական երկեր։ Մասնաւորապէս վերջին տարիներուն՝ «Հայաստան» հրատարակից արտասահմանի կարգ մը մահացեալ ու կենդանի հայ դրոշմերու երկերը։

Այս կրկնակի աշխատանքը արդիւնք է, ապահովաբար, այն իրողութեան, որ Հայաստանի հայութիւնը — մասնաւորապէս այն սերունդները՝ որոնք կազմաւորուեցան խորհրդային իշխանութեան շրջանին, — համեմատաբար աւելի անծանօթ են արեւմտահայ գրականութեան, քան՝ ընդհանրապէս հայութիւնը՝ օտար

չբաժանվածության։ Ուրեմն երկու հատ-  
ւածները իրարու ծանոթացնելու աշ-  
խատանքը, կամ՝ միևնույն սկզբունքն է,  
որ կը կիրարկուի։

Ան. Սարգսեանի տուած տեղե-  
կութիւններուն համաձայն՝ «Հայաս-  
տան» հրատարակչականը «հրապարա-  
կում է միջին հաշուով 5000 մամուլ» տա-  
րեկան։

«Գիտար է առել՝ բաւարար է այս  
ծաւալը՝ աշխարհի գրականութիւնը իր  
իմասական ազդուութիւններով (ընդունւի  
դարձեալ ի՞մա է։ Կ. Մ.) մեր ժողովուր-  
դին ներկայացնելու համար»,- կը գրէ  
ան։

Ինծի կը թուի, թէ Ան. Սարգսեան  
պէտք է վերցնէր հարցականը «բա-  
ւարարին վրայէն, եւ փոխանակ գրա-  
կան «էջին»՝ դնէր ժխտական «էջն»։

Պէտք չէ անսես առնել այն պարա-  
պան, որ, նոյնիսկ իր «հիմնական ուղ-  
ղութիւններով», օտար գրականութիւնը  
ցարդ թանգմանուած է շատ անբաւարար  
շափով։ Եւ առաւել անբաւարար՝ հայ  
գրականութիւնը՝ օտար լեզուներու։

Ինչ կը վերաբերի «հիմնական ուղ-  
ղութիւններուն», դոնէ մինչեւ պետա-  
կանացում, այդ զոյգ թարգմանութիւն-  
ները եղած են, ընդհանրապէս, թարգ-  
մանողներու անձնական զնահատումնե-  
րով ու նախասիրութիւններով, մամու-  
լին համար՝ թերթին ունենալու առա-  
ջագրութեամբ։ Իսկ թարգմանողին ու  
տպագրողին համար լոկ առեւտրական  
նպատակներով։

Այս իրողութիւնը կը պարտադրէ,  
ուրեմն, որ մեր թարգմանական գրա-  
կանութիւնը չկարենայ զուգահեռաբար  
ճոխանալ մեր եւ օտար ժամանակակից  
գրականութիւններուն հետ, եւ ստիպ-  
ւած ըլլայ անցեալը եւս, դասականներէն  
սկսած, իր ծրագրերներուն ու աշխա-  
տանքներուն նիւթ դարձնել։ Ուրիշ խոս-  
քով՝ մեր թարգմանական գրականու-  
թիւնը «թերաճ» է։ Որով եւ՝ կը կարօտի  
«բարգաւաճման»։

«Աճ»ը, սակայն, կը նշանակէ առ-  
տիճանական յաւելում։

Ան. Սարգսեանի ցոյց տուած թի-  
ւերը աստիճանական յաւելման յոյսը  
չեն ներշնչեր։

«Եթէ 1960-ի բաժինը,- կը գրէ ան,-  
700 մամուլի հնարաւորութիւն է ունե-  
ցել, 1961-ին՝ 644.5, ապա յաջորդ տար-  
ւանից սկսած ընկնելով, 1964-ին հասել  
է (ըսել կ'ուզէ «իջնէ է»։ Կ. Մ.) 352.2  
մամուլի։ 1965-ին դրութիւնը ինչ որ չա-  
փով բարելաւուել է, սակայն 1967-ին  
նորից ընկել է մինչեւ 467»։

Ստույգ չէ թէ 1967-ին կցուած թիւը  
«Երազբուն»-ի շափն է մամուլի, թէ բն-  
թացիկ տարուան անցնող ութ ամիսնե-  
րուն եղած հրատարակութիւններու գու-  
մարը։

Ան. Սարգսեան չ'ըսեր նաեւ, թէ ի՞նչ  
է պատճառը այն աստիճանական նուա-  
զումներուն, երբ, կը կրկնեմ, մամուլ-  
նեւրու թիւերը աստիճանական յաւելում  
պէտք է ունենային։

Անտեղի ու նաեւ անարդար պիտի  
ըլլար, անշուշտ, երեւոյթէն զատել եւ  
այդ նուազումները վերագրել անհոգու-  
թեան եւ զանցառութեան։ Կամ՝ միայն  
անոնց։ Հրատարակչական ձեռնարկը  
ունի երեք ազգակներ,- գրող (ներկայ  
պարագային՝ թարգմանող), տպագրող  
հնարաւորութիւններ («Հայաստան»-ի  
համար համապատասխան նիւթական  
միջոցներ) եւ ապառու։

Դժբախտաբար, կարգ մը ԽՄԽ թանե-  
րու նման, նաեւ կամ նոյնիսկ «Հայաս-  
տան» հրատարակչականի հետ կապուած  
ինչոյքները զոնէ մեզի՝ Արտահայա-  
տանցիներու համար իսկ գիրք են։  
Գուցէ՛ երկրի հայութեան համար եւս։  
Որովհետեւ, Ան. Սարգսեանի յոյս-  
ւածին նման, թերթերու մէջ երեցող  
շատ պատահաբար դրութիւններ են, ոյ  
մեզի նոյնքան պատահական եւ ոչ-բա-  
ւարար թիւեր կու տան։

Այսպէս՝ անստույգ կը մնայ հետեւ-  
եալը,- մամուլի քանակին աստիճանա-  
կան նուազումը արդիւնք է նիւթակոն  
յատկացումներու՝ նուազման եւ, հետե-  
ւաբար, տարեսկիզբին իսկ տպագրութիւն  
մամուլի թիւերը նուազ նախատեսուած

են, թէ, նիւթական յատկացումները տարուէ տարի աւելցած են, բայց թարգմանիչները թերացած են իրենց յանձնառութեանց մէջ, եւ կամ պատճառաւ թարգմանութիւններէն մաս մը, թերեւ զատնառնելով, տպագրել կարելի չէ եղած:

Միւս կողմէ՝ եթէ ընդունինք որ նաեւ Հրատարակչականը «տնտեսութիւն» մըն է, որ ունի իր Հարտադրութիւնները, ապա ուրեմն ան պէտք է ունենայ նաեւ իր սպառումները: Այստեղ եւս «մատուցում» իւր «պահանջ»ի պարտքները ի դօրու են: Այն իմաստով, որ Հիմնական ուղղութիւններով է, Հետեւաբար, Երազրուած ձեւով ըլլալիք թարգմանութիւնները պէտք է Համապատասխանեն Հենթերցող Հասարակութեան նախասիրութիւններուն, որպէսզի սպառումը գոնէ որոշ չափով արդարացնէ արտադրութիւնը:

Համաձայն Ան. Սարգսեանի՝ «մեր (Հայաստանի) թարգմանական քաղաքականութիւնը (ընդգծումը իմա է: Կ. Վ.) այսօր ընթանում է վեց կայուն ուղղութիւններով՝ առաւ զստականներ եւ միջ-տեխնիկական շրջանի այլ դրողներ, որոնք խորհրդային գրականութիւն, խորհրդային Ժողովուրդներէ գրականութեան ընկերակցական երկիրներէ գրականութիւն, արտասահմանեան գրականութիւն եւ Հայ գրականութիւն՝ առանձին»:

Ձեռն գրութիւն, թէ թարգմանականին կցուած գաղաքականութիւնը բաւը պատահաբար եկած է Ան. Սարգսեանի գրին տակ, թէ, ընդհակառակն, ան գիտակցաբար դրած է զայն:

Ինչ ձեւով ալ եղած ըլլայ՝ շատ տեղին է այդ բառը:

Տեղին՝ որովհետեւ Հայաստանի՝ ինչպէս ամբողջ խորհրդային գրականութեան մէջ, գրականութիւնը, թարգմանական ըլլալ թէ անգիական, կ'առաջնորդէ իր քաղաքական-ընկերային նախասիրութիւններով՝ երբ մանաւանդ պաշտօնական ձեռնարկ է ան:

Այդ է պատճառը, որ մինչդեռ մեր

թարգմանական գրականութիւնը «թեւաճ» է, «Հայաստան» Հրատարակչականը, Հետեւելով ընդգրկուած ուղղութեան, իր աշխատանքներուն գլխաւոր ու մեծագոյն բաժինը պէտք է յատկացնէ իր անմիջական շրջապատին: Իսկ այդ շրջապատը շատ լուրջ է, — Հին ու նոր ռուս գրականութիւն, Յ. Միլոթեան միւս Հանրապետութիւններու գրականութիւնները եւ յետո՛յ միայն արտասահմանի լայնածաւալ գրականութիւնը, առանձին բաժին մը նկատելով «Հայ գրականութիւնը ուսեքէնի» թարգմանելու գործը:

Կը նկատուի, անուշտ, որ նաեւ այդ բաժինն մէջ իր տեղը ունի քաղաքականութիւնը, — կը խօսուի միայն առանձին թարգմանելու մասին՝ կարծէք միայն ռուս եւ Յ. Միլոթեան ոչ-ռուս Ժողովուրդները անձանթ ըլլալին Հայ գրականութեան եւ կամ միայն անոնց ծանօթացնելը անհրաժեշտ ըլլաւ...

Ան. Սարգսեանի Հիմնական մատնանշումներէն մէկը այն է, որ նաեւ ու՛րիմ թարգմանչական գործը Հետեւեալաբար պլանով է շրջանառու: «Դոտտեւակու» «Ունիւր» ու «Պատիժը» պլանաւորելու մենք չպէ՛տք է մտածենք որ շուտով առաջ գայ նաեւ «Աղուշը» թարգմանելու անհրաժեշտութիւնը: ... Կամ՝ մտնում ես գրախոսութիւն եւ յանկարծ «Թերէզ Ռաբէն» Ուրախանում ես: Բայց յուսախարութիւնը պատում է քեզ, իսկ «Դոտեղ» են Ձուլայի միւս Հանրայայտ վէպերը, պատմուածքները:

Եւ կը գնէ «ամբողջական Հոյսերէն ունենալու» սկզբունքը:

Առարկելի չէ, անուշտ, այդ սկզբունքը: Բայց չեմ գիտեր ինչո՛ւ Ան. Սարգսեան իր ու մեր առջեւ չի դնել պահանջուած գործի ծաւալին եւ մեր կարելիութիւններու խոտոր Համեմատութիւնը: «Թարգմանութեան գործն առաջ տանելու Համար պէտք է մի քիչ ատ գնալ» նոր թարգմանութեան ձեռնարկելուց առաջ Հարկաւոր է պարզել, թէ ինչ է արուած մինչեւ օրս, — կը գրէ:

Թարգմանութեան գործը ոչ թէ դա-  
նալ տանելու, այլ՝ ամբողջացնելու  
համար ան, պէտք է ճշտ գնալ: Բայց  
ոչ թէ ձմի քիչ: Անհետ միայն ուս  
գրականութիւնը, քանի որ ձմեր քաղա-  
քականութիւնը նախընտրութիւն կու-  
տայ անոր, բաւական պէտք է ետ եր-  
թանք: Նոյնը պարագան նաեւ այլ ժողո-  
վուրդներու գրականութիւններու թարգ-  
մանութեան:

Եւ յետոյ՝ ի՞նչ է պատճառը, որ  
Զոյա կամ Տոթոյիսկի մէկան եր-  
կերով են ծանօթացուած: Եւ ինչո՞ւ  
«Պայլակի տաւը հատորների լոյս ընծա-  
յումը, խոշոր երեւոյթ լինելով, փաստ-  
օրէն հետք չթողեց»:

Անհրաժեշտ էր, որ Ան. Սարգսեան  
իր այս մատնանշումներուն կցէր նաեւ  
պատճառները: Թերացումները կամ պա-  
կանները գոնէ մասամբ կը դարձանուին,  
եթէ անոնց պատճառները ճշդուին:

Գրականութիւնը միատեսակ ստեղ-  
ծագործութիւն չէ: Ան ունի իր սեռերը:  
Այդ սեռերը, իրենց կարգին, ունին ձեւի  
եւ բովանդակութեան իրենց տեսակները:  
Այնպէս որ՝ մեր ճշտ երթալը, ձմի քիչ  
ըլլայ թէ շատ, թեք կը դնէ լայն ու  
ծանր աշխատանքի մը առջեւ: Աշխա-  
տանք մը, որ, կ'ըսէի, իր տարողու-  
թեամբ անհամեմատելի կերպով մեծ է  
մեր կարելիութիւններէն: Թարգման-  
ական անմեղակազմ, նիւթական ու թէք-  
նիք հնարաւորութիւններ եւ սպասման  
գործ:

Պարզ է, որ ուսն թարգմանական  
գրականութիւնը, համեմատ մերինն,  
լայն է ու ճոխ: Բայց համեմատած հա-  
մալիարհային գրականութեան ի՞նչ է  
անոր տոկոսը: Աղատ աշխարհի մէջ  
տպագրական եւ, հետեւաբար, թարգ-  
մանական գործը մասնաւոր նախաձեռ-  
նութիւն է: Ուրեմն՝ առանց ծրագրի:  
Բայց ճարտարաւե՞ր երկիրներու թարգ-  
մանական գրականութիւնները առնուազն  
բուարար չափով ծանօթացուցած են ու-  
րիշ ժողովուրդներու գրականութիւն-

ները իրենց ժողովուրդներուն: Իսկ նա-  
խադրափոխական ուսն թարգմանակա-  
ն գրականութիւնը քանակով ո՛չ, բայց ո-  
րակով ետ չի մնար խորհրդային շրջանի  
ուսն թարգմանական գրականութիւնն:  
Ունի նոյնիսկ այն առաւելութիւնը, որ  
ընտրութիւնը, ընդհանուր առումով, ե-  
ղած է լոկ գրական նախասիրութեամբ  
ու հայեցողութեամբ, մինչդեռ խորհր-  
դային շրջանի ուսն թարգմանական  
գրականութիւնը թարգմանելի երկերուն  
կը մօտենայ քաղաքական-ընկերային չա-  
փանիշով: Նոյն պարտադրութեան տակ է  
եւ Հայաստան:

Հայ գրքին գծախտութիւններէն  
գլխաւորը այն է, որ հայերէն՝ բայց  
մանաւանդ հայերէն գրականութիւն  
կարդացողներու թիւը շատ փոքր է՝ հա-  
մեմատած մեծաթիւ ժողովուրդներու թի-  
ւին: Տոկոսի խնդիրը չդրի: Եւ ծանօթ լւ  
ուրախացուցիչ այն իրողութեան, թէ  
Հայաստանի Հայ գանգուածը ընթերցող-  
ներու աւելի մեծ տոկոս մը ունի, քան  
կարգ մը ուրիշ ժողովուրդներ:

Բայց տոկոսի այդ առաւելութիւնը  
բաւարար թիւ մը չէ՝ հրատարակական  
գործը ապահովելու, բայց մանաւանդ  
ճշտ երթալու եւ միտնադասին առաջ  
նայելու համար:

Այս բոլորը մեզ կը դնեն կարելիին  
ձգտելու կամ, գոնէ առ այժմ, միայն  
կարելին իրականացնելու հարկադրան-  
քին տակ:

Կ'ուզեմ ուշադրութեան յանձնել  
պարագայ մը: Ան. Սարգսեան յիշած  
էր Զոյայի «Թեքի Ռաքէն»-ը: Կ'ենթա-  
դրեմ թէ Հայաստանեան թարգմանու-  
թիւն եւ հրատարակութիւն է ան: Բայց  
նոյն վէպը ունի նաեւ իր արեւմտա-  
յնրէնով թարգմանութիւնը՝ Մեարսը  
եան ուղղագրութեամբ: Մասնահանր  
կողմէ Շէյքսպիրի երկերուն թարգմա-  
նութիւնը զանազան առիթներով դնա-  
հատուեցաւ նաեւ Հայաստանի մամուլին  
մէջ: Բայց, եթէ չեմ սխալիւր, Խ.  
Դաշտենց եւս թարգմանութիւններ կա-



տարած է ու կը կատարէ: Ինչո՞ւ այս կրկնակի աշխատանքը, երբ մենք ունինք կատարուելիք գործերու տարողութեան եւ մեր կարելիութիւններու խոր տր համեմատութեան դժուարութիւնը՝ չըսելու համար տաղանազը:

Պատճառը, ապահովարար, բարբառի՝ բայց մանաւանդ ուղղադրութեան խնդիրներն են:

Հայաստանի մէջ կատարուած ու կատարուելիք թարգմանութիւններուն զլիաւոր անպատեհութիւններէն մէկն ալ այն է, որ զանազան ժողովուրդներու զրահանութիւններէն ըլլալիք թարգմանութիւններու ասան տարողութեան, որ որակի տեսակէտէն համեմատութիւնը ազատ է: Օրինակ՝ այժմու անգլիական զրահանութեան համեմատաբար անկի նուազ տեղ կը տրուի, քան ... ուղղակի զրահանութեան: Ան. Սարգսեան իր յօդուածին մէջ համեմատաբար լայն տեղ տուած է ճշգրտայր հանրապետութիւններէն՝ կատարուելիք թարգմանութիւններու անհրաժեշտութեան:

Հայաստանի թարգմանական գրականութիւնը, իր կամքով ըլլայ թէ իր կամքէն անկախ, երեք զլիաւոր չըջա՝ զիմեր ունի նախնադրելի, ուսու գրականութիւն, տասներեք հանրապետութիւններու գրականութիւն եւ համայնավար երկիրներու գրականութիւն:

Այս երեքը արդէն բաւական մեծ խումբեր են՝ ուստի չու. համեմատաբար իր տկար ուժին համար:

Հակառակ ասոր՝ նոյն Ան. Սարգսեանը գտնուանքով կը գրէ. — «Կ'ուզեանայինք իմանալ նաեւ թէ ո՞վքեր են, օրինակ, Թրանսայից փիէս Ժան Պերանսէն, Փոլ Վեռլէնը, Շառլ Պոտլէրը, Մարտէլ Փրոստը, Արթիւր Ալամովը, Էօժէն Իոնեսկօն, Անգլիայէն՝ Թոմաս Մորը, Օսկար Ուայլտը, Զ. Օլտրիշը, մոն Պրիստլին, Ամերիկայէն՝ Օրսկին Կորաուիլը, Արթիւր Միլլէրը, Զ. Զոյսը, Յ. Նիլը, Գերմանիայէն՝ Թոմաս Մանը, Հենրիխ Մանը... եւ անշուշտ՝ նաեւ Նորվեգիայէն, Շուէտէն,

Տանրմարեայէն, Հարաւային Ամերիկայէն, — շորքը անվերջ է:

Ինծի խոր պարմանք պատճառեց Ան. Սարգսեանի հետեւեալ վկայութիւնը, — «Եթէ ուզում ենք աշխարհի ժամանակակից գրականութեան հետ հաւասար քայլել, պէտք է ձգտեմք ինքնուրոյն ընտրութեամբ քննարկից թարգմանել (ընդգծումը ի՛րն է: Կ. Մ.) Սակայն ուսերէնը միշտ օգնել եւ ոյսուհետեւ էլ օգնելու է մեզ: Ան այժմ... մինչեւ ամէն կատարել, որոհեալ գեղեւտ չենք լուծել թարգմանական կատարել հարցը: Այսօր բոլոր հնարաւորութիւնները կան այդ գործը պետական հիմքի վրայ դնելու համար»:

Թարգմանութեան հիմնական աղաղակը թարգմանիչն է: Այն անձը՝ որ պէտք է տիրապետէ թագրի լեզուին ու թարգմանելիք լեզուին: Կամ, առնուազն լաւ ծանօթ ըլլայ անոնց: Կամ, այն իմաստով, որ տեղեակ ըլլայ երկու լեզուներու ներութիւններուն, տալիս անոնց ներքինութեան, համարադատական գործածութեան, հոմանիշներու երանդներուն: Աւելին. — ան պէտք է ունենայ գրական հասկացողութիւն: Լեզուները եւս ունին իրենց ճիւղերը, — գիւնադիտական լեզու, ընկերային լեզու, գիտական լեզու ու նաեւ գրական լեզու: Հաւաքոյն գիւնադիտական թարգմանիչ մը կրնայ յոռեզոյս գրական թարգմանիչ մը ըլլալ: Ինչպէս եւ՝ հակառակը: Գրական թարգմանութիւնը գրական արուեստի ճիւղ մըն է: Ի զուրէն՝ որ Հատինացիք կ'ըսէին՝ քրտտիւթօրէ, քրտտիւթօրէ, — թարգմանիչ, դաւանան:

Ան. Սարգսեան կ'ըսէ, թէ «...այսօր բոլոր հնարաւորութիւնները ունինք այդ գործը (թարգմանիչներ պատրաստել) պետական հիմքի վրայ դնելու համար»:

Ինչո՞ւ ճայսօր: Նո՞ր է մեր պետականութիւնը: Կամ՝ պէ՛տք է եղբայրացեալ, թէ մինչեւ ճայսօրը պանցառութիւն մը եղած է այդ ուղղութեամբ: Իսկ ասոր պատճառը այն է, ապահովարար, որ

ընդհանրապէս թարգմանական գործը արժանի ուղղորութեան ստարկայ եղած չէ:

Ինչ կը վերաբերի գոռոնիկների օգնութեան, ուղղակի զարմանալի է: Ինչպէս կարելի է ծրարութեամբ թարգմանական գործ կատարել եւ ասոր համար պետական հիմք ունենալ, բայց թարգմանութիւններ կատարել երբորդ լեզուի մը միջոցաւ: Թարգմանական գրականութեան առաջին պայմաններէն մէկն է զՊԵՐ ակէն բմպէյ, զոնկ ակն լեզուներէն, որոնք ընդհանրացած են:

Թարգմանիչներու խնդիրը, իր կարգին, ոչ միայն ատակ ու տրամադիր ուժերու հայթայթումն է այլեւ՝ դանոնք բաւարարելու անհրաժեշտութիւնը: Ենթակային համար անիկա պէտք է դառնայ ասպարէզ եւ ոչ թէ զի միջի այլոց աշխատանք մը:

Համազգային բնոյթ կրող բոլոր այս աշխատանքներուն համար Հայաստանի պատկան մարմինները նկատի ունին միայն իրենց անմիջական շրջապատն ու շրջանակները,՝ երկիրը: Ծարդ որեւէ փորձ չէ եղած օգտուելու նաեւ Արտահայաստանի ուժերէն:

Հայ գրականութիւնը օտարներու ծանօթացնելու խնդիրը մեզի համար ունի բոլորովին առանձին արժէք ու նշանակութիւն: Եւ այդ հիւշիւն մէջ է, որ մենք ուղղակի «քաղաքականութիւն» պէտք է դնենք՝ «եղբայր հանրապետութիւններու» և ընկերվարական երկրներու

բու գրականութիւններուն նախընտրութիւն տալու ուսմանական գաղափարներէն: Եւ նպատակ մեր գոգովութիւն միջազգային հանրային կարծիք ստեղծելու համար: Հայաստանի մէկ կատարուած թարգմանութիւնները միայն նեղ շրջագիծին մէջ են,՝ կը թարգմանութիւն գոռոնիկ եւ կամ, պատահաբար, այս կամ այն Ուկրաինացիի մէկ հաստնացին հայ գրականութիւնէն, որով գործ կամ գործեր կը թարգմանի իրենց լեզուին:

Այս գետնին վրայ մեր աշխատանքը պէտք է գուրս գայ այդ ուսմանական շրջագիծէն: Այդ ուղղութեամբ արտահայտմանի մէջ որոշ աշխատանք կատարեցաւ՝ թէեւ միշտ անձնական նախաձեռնութեամբ,՝ «Ստաւուցի Գաւթը», թարգմանեցաւ Փրանսիայէն եւ անգլերէնի, Նարեկացիին՝ մասամբ Փրանսիայէն եւայլն:

Նաեւ այս մարդին համար երկրի պատկան իշխանութիւնները պէտք է օգտուին արտասահմանէն:

Հայերէնէ օտար լեզուի թարգմանութեան համար ոչ բարբառի խնդիր կալ եւ ոչ ալ՝ ուղղագրութեան:

Գծախոսաբար դե՞ռ կայ, սակայն, նոյնիսկ համազգային բնոյթ ունեցող աշխատանքներու մէջ «Թորգրային լըր» ջազիծէն գուրս չգալու այլամբողք քաղաքականութիւնը:

Կ. ՄԵՀԵԱՆ

## ՄՏԱԾՈՒՄԻ ԵՒ ՀԱՌԱՉԱՆՔԻ ՇԻԹԵՐ

Մեր բարեկամութիւնները հանգիստութիւնը ունին մեր սերերուն: Կը սիրենք մտաւ իրենց յանգիստութեանը համար, ուրիշներու մէջ կը տեսնենք անասնաման գոհալուութեան ոգի, կան որ իրենց գոհալուութեանը կը փարատեն մեր հոգւոյն մտայլը, կը սիրենք մէկ քանին իրենց հոգին խռովող վիշտներուն խորութեան համար:

Անոնք բոլորն ալ մեր համակրանքի ծիրին շուրջ յաճող մոլորակներ են, որոնք խառնուածքով, բայց սիրելի, ամէնքն ալ, իրենց մերաշխարհէն քարոզացող անկեղծութեան համար:



Մարդը ստորնացնող մեծագոյն թերին կեղծիքն է, որովհետեւ միայն կեղծաւորներն են ամէնէն անվստահելիները, ընդունակ միտքի եւ փառքի համար աւելն սրբութիւն ուրանալու:



Ճշմարիտ հայրենասէրը իր հոգեկան գոհալուութիւնը կը փնտռէ ցեղին պատիւ բերող սխրագործութիւններու մէջ:

Հայ արիւնին եւ հայ անունին հմայքը զինք կը խանդավառէ եւ ան առանց հատուածամտութեան, հայ անհատին ամէն մարդի վրայ կատարած նուաճումները կը համարէ ցեղին խորացնող նպաստ մը:



Մեծութիւնները չեն արհամարհիր իրենց անձին ու գործին մասին անկեղծ քննադատութիւնները, որովհետեւ կը զգան, թէ անոնք եղած են կատարեալիւ եւ անթերիին նախանձախնդրութեամբ. ուստի թիւրիմացութեան պարագային, պատասխանով մը հարթելի:

Ամէն հեղինակ ու ամէն անձ սակայն արհամարհանով կը լեցուի. երբ քննադատութիւն անունին տակ կը հաստատէ նենգ ու դիտումնաւոր փորձեր, ուրանալու կոչուած մտաւոր եւ հոգեկան վաստակը ուրիշներու:



Փորձառութիւնը նպաստ մը պիտի չդառնար, եթէ զոքայտութիւններ մաս չկազմէին մեր ապրումներուն:



Մեծ ու տեւական յաղթանակները կամեով ու գոհալուութիւններով ձեռք բերուած նուաճումներն են:



Երջանիկը այն չէ, որ շատ ու հացկատակ խնկարկունք ունի, այլ ան, որ կը հաշուէ անկեղծ ու սրտակից գոյգ մը բարեկամ:



Մեծ սէրերը եւ մեծ առաքինութիւնները զուգընթաց կը բաղեն:



Հոգեկան վիշտերը աւելի կը խորանան, երբ փիզիքական աւերներն որ խոցեր կը բանան մեր բարոյական աշխարհին մէջ:



Ասպետը սուրը ձեռքին կը նակատի հաւատարմագէտ հակառակորդին դէմ, անորի վատը՝ մութին մէջ կը զատէ անոր դէմ:

Ժամանակաւոր յաջողութիւնները անցաւ երեսօյթներ եմ. տես-  
կանները կ'ենթադրեն պատրաստութիւն, քարոյական նկարագիր եւ բացա-  
ռիկ առաքինութիւններ:

Իրական երջանիկները թերեւս ամենքն էմ, որ չեմ փորձեր երբանկա-  
թիւնը տարազաւորել: Կ'ապրին կեանքէն վերցնելով մասնակի շնորհներ ու  
կը գտնանան յարիւնքաւ օգտակար ըլլալով:

Իրական վատը այն չէ, որ կ'ստէ ձեզ ու կ'ըսէ առիկա ձեզի անվա-  
րան, այլ ան, որ ձեր տագնապալի մէկ վայրկեանին շողմելով կը մօտե-  
նայ ձեզի եւ օգտակար ըլլալու խոստումներով կը զաւէ աւագակի ձեր  
կեանքին դէմ:

Արկածներէ մեր քաղաքի դատը պիտի ըլլար զանազան առաջ քերտզ  
պատճառները այդի առջեւ ունենալով՝ զգուշանալ կրկնութիւններով մեր  
օրերը դառնացնել:

Որքան ատեն որ ռսկի հորքը պիտի շարունակէ մարդոց պաշտա-  
մունքի կուրքը դառնալ, մտաւորական ընտրանքի մը պիտի մնայ ուրաց-  
ւած ամէն տեղ, առանձնապէս այն ժողովուրդներուն մօտ, որոնք մարդ-  
կային արժէքները թիւքով միայն կը փորձեն չափել:

Մեծ ճշմարտութիւնները ապահովներու կը նմանին, զանազան վկա-  
յութեան կոչելու փորձերը հերքելուամ ուժ կը պահանջեն:

Ամբոյսը խոյտարդէտ եւ անսկզբունք քաղմութիւն մըն է, պատրաստ  
այսօրուան կոտորելը վաղը փշրելու:

Մեր դժբախտութիւնները փորձաքարեր են, հանչնալու համար շրթ-  
քապառը, որուն մէջ գործելու հակաստագրուած ենք:

Որքան ալ խօսք ըլլան անանցմէ մեզի պատճառուած դառնութիւննե-  
րը, երջանիկ առիթներ պէտք է համարել զանազան, մարդերն ու կեանքը  
տարբեր երեսօյթի մը ներքեւ ճանչցած ըլլալու պատեհութիւնը այս գծով  
մեզի բնծայելուն համար:

Ամէն իրական մեծութիւն յարգանքի արժանի է. որովհետեւ ան որ-  
քան բնածին տաղանդի մը տուրքը. մօյն ատեն յարատեւ աշխատանքի եւ  
կամքի մարմնացումն է: Պէտքանքով սակայն պէտք է մայիլ անոնց վրայ,  
որ գարկ թէ՛ մէկ եւ թէ միւս շնորհներէն, մեծ ըլլալ կը ձեւացնեն ու կը  
սլաւեն, որ քաղմութիւններ պատիւներ ընծայեն իրենց:

Որքան ատեն որ շահը պիտի մնայ հզօրներու քաղաքականութեան  
ուղղութիւն տուող գործօնը, սուրը իր տեղը պիտի ունենայ արդարութեան  
հաշուեյարդարին մէջ:

ՎԱՐԴԱՆ ԳԻՈՐԳԵԱՆ

## ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆ

Ութուներկու տարիների կարճատև, սիրով ու տենչերով, վշտերով ու երազանքներով կանաչեանն այցելելու էր Հայրենիքը: Այո, իր ութուներկուամեայ կեանքի բոլոր յոյզերը Հոգու մէջ ամբարտած՝ մտովին սլանում էր դէպի Հայրենի Հող, Գարջ եւ յաճախ թեւատում էր իր Հոգու թռիչքը, աչքերից ընկնում էին արցունքի կաթիլները: Թեւատում էր թռիչքը, որովհետեւ աչքերը քառն տարէ է արդէն իրենց Հայնացքը դարձրել էին դէպի ներս, դէպի Կանաչեանի Հողու անցնալի խորքը միայն եւ չէին տեսնում գուրբը, արեւն ու աշխարհը, ճամբաները...

Եւ երբ սլանում էր Կանաչեանի ոգին դէպի Հայրենի աշխարհ, աչքերը, խամբած աչքերը թողնում էին: Նրանք ուղում էին տեսնել եւ իրենց լոյսի ու կարօտի Հրով խնկարկել Արարատի վեհ դադարը, նախնաց սուրբ մասունքները, դարերի խորքից յառնած դարազարդ Հայտատանը: Ուղում էին, բայց չէին տեսնելու եւ լալիս էին անձայն:

Եւ սակայն պիտի գար Կանաչեանը: Նա իր Հոգու ու կարօտի աչքերով կը տեսնէր երկիրը Հայրենի, կը շօշափէր Մաշտոցի գերեզմանի արքայած մարմարի, կը քայլէր ու իր ոտքերի տակ կը զոյգար դարաւոր ցեխի ու աւերների մոտիկը բնդմիշտ խցանած ողորկ սալալատակը, կը մտնէր դպրոց ու իր ժողովրդի նորարարի շիւքերի զրնգուն ծիծաղից վերստին կը դալարէր եւ իր Հոգին, Հայրենի Համերգարանի կամարների տակ կը լսէր իր կեանքի գերագոյն իմաստը դարձած երաժշտութիւնը Հայկական:

Իսկ մենք, մենք որքան պիտի գուր-

գուրայինք՝ իր անձի մէջ տեսնելով նաեւ մարմնացեալ նշխարը մենք Կոմիտասի...

Աւա՛ղ: Մի քանի օր առաջ, Մայիսի 21-ին, օտար Հողի վրայ իր մահկանացուն կնքեց Բարսեղ Կանաչեանը:

Մեռել էր նա Ռոտոստայում, 1885-ին, տարազէր Հայի ճակատագրով անցել Պուլկարիա, Ռումանիա, Ատանա, Պոլիս, Հալէպ, Եգիպտոս, Կիպրոս, Յունաստան, Փարիզ, Պէյրուս, Պաղատա... անհանգրուան մի ճամբորդ, սակայն, օնուած իր ժողովրդի սիրով: Այս ոչքը զգացում կամ դադարի չէր միայն, այլ մարմնաւորութեամբ էր ազգային երաժշտութեան մէջ, որով նա նուիրաբերում էր իր ժողովրդին:

Այս ու այնտեղ մի քիչ երաժշտական կրթութիւն ստացած, իսկ աւելի շատ ինքնակրթութեամբ դարգացած Կանաչեանը 1912 թուականին ընկնում է Պոլիս. Կոմիտասեան երգչախումբի Համերգն է: Կանաչեանը մտնում է Համերգարան: Եւ ահա Կոմիտասեան երաժշտութիւնը, ապա եւ ինքը՝ մենք Կոմիտասը Կանաչեանի Համար բաց են տնում մի նոր աշխարհ՝ բարձրարուեստ Հայ երաժշտութեան աշխարհը, որով նա ընթանում է իր ամբողջ կեանքում:

Կէս դար շարունակ Կանաչեանը եղաւ Հայ երաժշտական մշակութիւնի ամենաշնորհմեծանդ զործիչներից մէկը: Ամենաւրեք, ուր եղաւ Կանաչեանը, անմիջապէս բացեց իր թիւերը, գրկեց մի խումբ Հայորդիներ, Հայ երգով կայծ տուեց Հայրենասիրական զգացումներին ու բոցավառեց մի ոգեղէն բազին՝ Հայ երաժշտութեան արքայած մեղեդիներով կայծկլտացող բազին:

Պանի՛ քանի երգչախմբերով Կանաչ-

եանք օտար երկնակամարների տակ միաձուլեց մեր ժողովրդի հատուածաճատ ուղիները: Դրանցից «Գուտանը» 18 տարի ծառայեց իր երգատարած զործունէութիւնը Սիրիայում եւ Լիբանանում:

Կանաչեան հայն ու երաժշտադէտը իր արուեստակերտ ձեռքով յղկել է, բազմաձայնել բազմաթիւ արարական երգեր՝ դրա համար արժանանալով եւ արաբ ժողովրդի հրախառնողութեանը, ևստանալով Փրանսիական եւ արաբական շքանշաններ:

Կանաչեան խմբավարի մէջ միշտ աղբիւ է նաեւ ստեղծագործողը: Բազմաթիւ մեներգներ ու խմբերգներ, մանկական երգեր, նուագարանային երգեր ու ռոմանս հետ նաեւ «Արեղայ» երաժշտական տոհման Կանաչեանի մշտնջենական նուէրն է հայ ժողովրդին:

Կանաչեան ստեղծագործողը իր այս զեղարուեստական ժառանգութեամբ պատմութեանն է յանձնել նաեւ համազգային երաժշտական մշակութիւնը ստեղծագործական սեփականացումով մի ճիւղ:

Այդ ոճը բնորոշուած է մեղեդային ու ռիթմիկ աղագային խորութեամբ, ներառելով իր մէջ բազմաճիւղ ժողովրդական երաժշտութեան հոգեւոր թրթիռները՝ լոյս ու եղանակ, քնքշանք ու ողջախոհութիւն, երգիծանք ու կարեկցանք՝ միասնութեամբ կուռ ստամոթիկական կառուցուածքով: Մեղեդիական գծի ամբողջականութիւնը միաձուլուած է կլիշեային ճկուն ու զօրեղ մտածողութեամբ: Մեղեդիները համակցուած են բազմաձայնութեամբ, թանձր ու խտացած ուրբումներով: Կանաչեանի երգերը մեծ մասամբ ծառայուն են, որոնք կարելի է անուանել փոքրիկ ստամոթիկական երգեր:

Կանաչեան վարպետը շնորհալատ է ասերգային ոճի, որ գիտէ շարահիւսել երգեցիկի հետ եւ կերտել հոգեբանական դիպրիկ կոտիւններ, զիտէ զարգացնել իր թեմաները:

«Օրոր», «Նանոր-նանոր», «Տալիւ», «Հոյնար», «Լուսնակն ելաւ», «Ալվարդի

երազը», «Պէնիզ», «Թալիւրդ», «Վարդերի հետ», «Կամենքդ ու շատ տասնեակ այլ երգեր ու խմբերգներ դեռ երկար-կար պիտի ախորժալուէ լինեն բոլոր ունկնդիրների համար:

Իսկ «Արեղայ» հոգեբանական տաճան մեղեդու կառուցուածքի ժամանակակից խոր հոգեբանական ու սոսմաթիկական բնոյթով, հոգեմեղմաների տրամաբանական փոխանցումներով ու նաեւ սուր բախումներով եւ իր բնականորէ մեղակառուցման հակիրճութեամբ, համակենտրոնացուածութեամբ, մեր ազգային երաժշտութեան մեծ արժեքներէ, որ բեմական կեանքի կարօտն ունի միայն:

1962 թուականի Սեպտեմբեր 21-ի նամակում, իր երգերի հրատարակութեան առթիւ, Կանաչեանը գրում է. «Ես պիտի փափաքէի, որ եթէ հարաւորութիւն ունիք, Ձեր որոշած երգերէն զատ տեղ տայիք նաեւ «Հայրենիքի կարօտ» խմբերգին, որովհետեւ անոր մէջ կ'որտացուի փոքր տարիքէս ի վեր ունեցած սէրս հայրենիքիս հանդէպ: Ձեռ գիտեմ, թէ օր մը պիտի կարենամ յազնցրնել այդ կարօտը»:

Որքան որքան պիտի փափաքէինք ու մաղթէինք զիւ քայլող՝ կարաւաններով իր սունդարմը, իր հանգիստը հայրենի սուրբ հողի վրայ:

Ոչինչ: Թող հանգիստ իր մարմնից օտար հողում, քայց այն, ինչ յաւերթ կենդանի է Բարսեղ Կանաչեանից՝ իր հայրենաբաղձ ուղին, իր աղքատուէր երգերը, իր անմոռանալի երախտիքը հասարակ ժողովրդի կենսականութեան համար, իր անկատար երազանքների իրականացումը, այդ հայրենիքում է, ժամը հայրենիքում, որն իր հեռատարած դաւակնների հետ միասին այսօր խոնարհւում է նրա թորմ շիրիմի առաջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԳԱՆԱՆՆԵՐԻ  
ՄԻՈՒԹԻՒՆ

«Հայրենիքի Զայն»

# Հոգևորականներ

## ԽՈՐԱԳԻՐԸ ԽՈՐՀՐԳԱՆՇԱՆ

Խորագրերն են՝ ընտրության կապակցությամբ՝ Հայաստանի մէջ գոյութիւն ունեցող դասական անփութութիւնը հերքող երեսօթի մը առջեւ կը զննէ մեզ կարգ մը գիրքեր, որոնց լուսանկարչական պատկերները կուտանք քովի ակնակէն վրայ:

Գիրք մը կ'ընէ՝ գիրք մը գրելու լավ ժամանակ ու որոնում կը պահանջէ յայտնի, ամբողջութեամբ, ամբողջութեամբ մը իմաստը մէկ կամ քանի մը դասերու մէջ խտացնելու հարկի մը առջեւ կը զննէ գրողը եւ ատիկա ստեղծագործական երկունքին անյարկը նկզմէ:

Սրբազան, պաշտօն է, գիրքի մը խորագրերը խորհրդանշական հմայք մը պէտք է ունենայ, անկենդան չլլայ, լլլայ, հոս ամէն վայրկեան, եւ հոս մէկտեղումները, ի մեն ուրախութիւն ընթերցողին, օտուտան են այդ լինելութեամբ՝ - Վսլիտակի գիրքը անաւարտ երգի մը իրադրոյթն էր քաղցր կոյը ունէր, Վնիլիի Զանգակատումը ցեղին յանձնաճանչ ծայրին օրովը, Վիլիք լինելութեամբը խորագրական իսկութեան մը արամարանական որոնումը, Վեդգնիքը լիոնարիւնցիները բերտ ու մին դէմ ապրելու մեր յամառութիւնը հակադրող խորհուրդ մը եւ Վարսման միերը երեսասարգական թարմ ու առողջ ապրում մը: Այդպէս է, կամ՝ Ժամանորակա աղջկա: Մինչեւ իսկ առանց մանրամասնութիւններուն տեղեակ ըլլալու, կարելի է մտածել անոնց մասին, խորագրերն են կը ասիպէն որ մտածէք, աշխատակցիք իրենց, թարմութեամբ, քաղցրանաք, ամբաստանք:

Խորհրդանշանը մեն յարգ կը վայելէ զբաղանքեան մէջ ու ամէնէն աւելի խորագրերը պէտք է օտուտայդ առանկութեամբ:



ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Անուանի  
Կանգնակցումի

ՎԵՐԵ ԽԵՉՈՒՄՅԱՆ  
ԳԻՐԲ  
ԼԵՆԻՆՈՒԹՅԱՆ

Վկայատանության առաջին



Ռա. Ֆայել Արա. Ման.

ԶԵԱՄԲԱԾ ԶԻԵՐ

## ՆՈՒԱՍՏՈՒՆԻՆ ԱՍԱԽՈՒ

Մեր նախորդ թիւին մէջ, ընթերցողը կարդաց Նշան Պէշիկթաշէնեանի մէջ գրողութիւնը, ուր, անուանի արդիւնաբեր ոտանաւորով կ'երգիծէր Հայաստանի այսօրուան բոլոր արժանաւոր բանաստեղծները, յատկապէս ծանրանալով Շիրազի ժյուշ, որ

վեհապետի պէս, տարիմ տասմ ամգամ

Ուզարկում է մեզ կոնգակ աւ պատգամ:

Թայանէնք, որ ոտանաւորով ոտանաւորի ներկայացուցիչներուն տխրասուր կամ չնոքասուր թերութիւնները երգիծելու այս մէջ շատ ընդհանրացած մէկ մըն է Հայաստանի մէջ: Բանաստեղծները, մինչեւ անգամ իրենց հասարակներուն մէջ, Վերալիսմ կուտակ, Վարդիւր ու Բարիւր, Վիպիկրումները կամ ուրիշ անթախտաբարբերով կ'աշուտ գլուխներու տակ՝ կ'երգիծեն իրար, երբեմն ծածկաղծի սլաքներով եւ երբեմն յայտնապէս, ինչպէս ցոյց կու տան զիմացի էջին արուած երկու ոտանաւորները:

Երգիծական այս մէջ, երգիծաբանութեան միւս մեծերուն պէս, քաղաքացիական շարժումիւն մը կ'ենթադրէ մ'աւ գրողին, մ'աւ գրողի անթախտաբարբեր զէմքին մօտ եւ պէտք է խոստովանել, որ Հայաստանի մէջ գրողները զուրկ չեն ուրիշ անաքննութենէ: Երբեք ինք ինքիսին մէջ հրատարակուած Պարոյր Սեւակի ծաղրանկարը եւ անոր տակ անգլոսոստան Վաղարշապատէն զնկարող երգացոյցներ եւ այլ ուղղութեամբ: Երեւոյթը տակից զնկարող պիտի ըլլար հարկաւ, եթէ երբեք յայտնի ըլլար նաեւ ոտանաւորին հեղինակը: Մենք չենք գիտեր նոյնպէս, թէ ո՞վ է Նուստուհի ծածկանաւի տակ թաքնուած զոգնիւն: Հաւանաբար Վերալիսմ Թերթի այսօրուան խմբագիրն է, Համօ Սահակեանը, որ, ի զեպ, այս մարդի վարդապետներն են համարուի եւ առաջին անգամը չէ, որ կը շարժարէ զնկար Յուստապէս:

Բայց պոետը մեր անուանի,

Թողած անուան իր Սեւակի,

Թողած Շիրակն իր Կոնգակ,

Անուանի է իրեն՝ Շիրազ:

Ստաք անուան անի վրամ,

Մարդ է անուամ սրան-մրան:

Իսկոք պարագաներուն զնկարող է այս զուարթ բախումը եւ չիւնի վէպայութիւն ու չէ անթախտաբարբեր ծաղրանկարի մասին:

Քաղաքակիրթ ժողովուրդներու մօտ՝ ամէնէն աւելի փնտռուած սեռերն է երգիծանքը, մասնաւոր համ մը ունի անիկա, երբ մանաւանդ թիրախը ծանօթ զէմք մըն է, պատահան կամ քաղաքական բարձր պաշտօնատաք մը: Կարգ մը երկիրներու մէջ մեծ ժողովրդականութիւն կը վայելէ նաեւ բանաստեղծ երգիծանքը: Թրանսիս եւ Անգլիան ոտար համար յատուկ թաքնուած ունին եւ հրապարակներ, ուր, մարդիկ ազատութիւն կը հեղձեն քաղաքական ու հասարակական մարդի կարկառուն անձնաւորութիւնները: Ամբողջ Եւրոպայի մը կ'աւանդէ իրենց զուարթացնող ծաղրանկար, գրողին հանդէպ կը բարձրանան սպաննող զրգիլ մը ու կը ծնին անոնց երկիրդ: Մարդի անթախտաբարբեր զէմքերու այնքան զօրաստ չեն, որպէսզի չոնցեն ընդդիմադրող, պետութիւնները այնքան ակաւ չեն, որպէսզի արդիւնէի միջոցներու գիտեն: Էականը խոսքին սոքին մասնաւոր պահանջն է, չորհրդանշան է, գոհակութեան չեն ներհր, երգիծելի առաջ եւ երգիծուելի տար՝ մարդի փոխադարձ յարգանք ունին իրարու հանդէպ: Վերջ կրնար ըսիմ ձեր պատճ, ձեր անգամ ծնունդ մանաւանդ: Պարտաւոր է՞ սակայն զայն ըսիմ, եթէ երբեք իր յարգէ՞ զնկար, կ'որի մեծանուն քննողաւ Թ. Օշական: Այդ է:

Երգիծանքի այս մէկն մէջ կիրարկուած գոհակութեան բաժինը զանցառելի առկա մը չէր կողմեր մերկաներուն մօտ, զոն աստեղծանակ մը առաջ, այլ հիմա ո՞նք զմարդի մը զգուշ է անոնց մօտեցման մէջ ու ամբողջ լաւ երեւոյթ է:





### ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Ես ի՞նչ եմ անում... Ձեր աւանդական  
Ջրագացները ես չբառում եմ,  
Հին բախարհները  
Ձեր գլխին չարդում ու խրատում եմ,  
Որ չկրկնէ՛ք, քէ արջը արջ է,  
Եւ ձուկ է ձուկը:  
Ես պատկում եմ արջը ձկան հետ,  
Գարձնում մարդ ու կին...  
Եւ չեմ հաւանքում, այլ պահանջում եմ,  
Անյապաղ քաղէ՛ք  
Ձեր խրիզանդեմն ու երիցուկը  
Ճանապարհ տուէ՛ք իշակաբնուկին:  
Ապա քէ դառնում  
Վերստին, դարձեալ, նորից ու կրկին  
Խրատում եմ ձեզ,  
Որ երգը երգ է լույս աշմ ժամանակ,  
Երբ ուր նրա մէջ միտքն է միրածը...  
Հը, ի՞նչ է՛ք կարծում, վերջում,  
Վերջապէս  
Ձեզ մի լաւ յանգով՝ չզոհացնե՛մ,  
Չզոհե՛մ նաեւ... «Կեցցէ տիրածը»:

«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ»

### ՍԱՐԵՐՆ Ի ՎԵՐ

Սարերն ի վեր, ի վեր Մասիս...  
ՅՈՎՀ. ՇԻՐԱՅ

Երգում է նա Սիփան ու Սիս,  
Երգում է նա ազատ Մասիս:  
Սիփան ու Սիս, ա՛խ, վիրաւոր,  
Ազատ Մասիս՝ կալանաւոր:  
Դու՛ք չգիտէ՞ք ձեր Շիրապին...  
Ջօրանում է նա գնալով՝  
Ու մնում է ձեզ պահապան,  
Որ ձեռք չտան ձեր մի մագին:  
Ջուր է խմում նա ձեր սրտից  
Ու ջուր տալիս իր բնարով,  
Շուրթը ծախած ձեր կրակին:  
Երկինքն առել Աստուծոյ ձեռքից,  
Ցած է բերել երկինքներից,  
Փռել է ձեր ռաբիւրի տակ:  
Ինքը շնչաւ մի մահաւակ,  
Հայաց վշտի հիմնայտակ,  
Ազգն իր հոգում, ինքն ազգի մէջ,  
Առիծի ուժն իր բազկի մէջ,  
Մահն է գալիս տատանակի մէջ,  
Սրտում պահած աւրբ սարն հայաց,  
Մտել երգի տաճարն հայաց,  
Հառաչում է աշխարհով մէկ:  
— Տուէ՛ք արեան վնարն հայաց,  
Տուէ՛ք վերքի մի ճարն հայաց,  
Դու՛ք բախտի նժարն հայաց,  
Սրբագործել շրթի վրայ  
Ամէն հեշիւնն ու բառն հայաց,  
Փշերի մէջ դարձել է նա  
Միակ ծաղկա՛վաճառն հայաց,  
Նաւատունին առաւ՝ Շիրազ,  
Սրտից, երգից, ծաղկից բացի  
Ել ի՞նչ ունի հանճարն հայաց:  
Շիրազն առաւ՝ բա չե՛ս տեսնում,  
Մէկ էլ փառքի մի լաստ ունի,  
Կննիւնաշար իմաստունի,  
Ու խիզմ-շաղաղ շուշան  
Եւ մի քանի շփանչան:

ՆՈՒԱՍՏՈՒՆԻ

## «ԴՐՈՒԹԻՒՆՆ ԱՅՆՊԷՍ Է»...

Վերջին տասնամյակին, Հայաստանի գրականության արժանի թիվը աւելի արդուկ բարձրացող էր չուրջը, քան նորերուն բանաստեղծութիւնը։ Այսօր, արժանազոր-ններուն մէջ կարելի է դիտարկեալ գիծազիծ կազմած վեց-եւթը անուններ յիշել ու կըր-նալի անոնց թարմաշունչ բերքով։ Գէորգ Արշակեան եւ Վարդգէս Պետրոսեան, Նորայր Աղայեան եւ Հրանդ Մաթեւոսեան, Կարէն Արմենեան եւ Ռուբէն Յովակիմեան, Զորայր Խաչատրեան Լ. Յովհ. Մելիքեան որոշ վաստակի տէր համակերպիչներկայութիւններ են արգէն եւ մեն ունեկալութիւններ կազմում են իրաւունքներին։

Նոր անուններով բանաստեղծութիւն գրողներուն թիւը աւելի ստուար է նախ-բանիցս, թերթերու մէջ կարելի է քառասունէ աւելի անուններ հաշուել, պաշտօնական քննադատութիւնը, պաշտօնական տոբներով, կը համարձակէ նոյնիսկ տասը-տասնըհինգ անուն թուել, բայց ոչ ոք կը յաջողի անոնցմէ մէկ-երկու տիրական դէմք անշաւել եւ չպարտորէն ներկայացնել հանրութեան։

Կը թուէ, թէ գրական մտային հետեւելու մտան հո՛ն եւս սկսած է զլուր-ցցել եւ զնորամուտութեան ախարք իր զգալի հարուածը տուած է նորերուն ստեղծագոր-ծութեան։ «Ալիմբէ» գրախօսին այնպէս է. որ մեքի կարգապահութիւնը ի սպաս դարս է մղուում արուեստից եւ քաղաքակ տարաբնակութիւնը, յաճախ ամստութիւնը երաժշտ-ւում է որպէս բանաստեղծութիւն։

Այսպէս ըլլալով հանդերձ, սակայն, հարկ չկայ իբրտ անցնելու։ Արտաքին մե-ւերու աշխարհում եւ ստացական տարօրինակութիւններով ընթերցողին մտքին մէջ քիչ ժէ լիւթ ու խորհրդաւորութիւններ ու նախադասութեանք առեղծելու անպարտութեամբ ո՛ր ոք կրցած է գրական ու գրական ներութիւն մը նախադասութիւն, Ըսելով ընդհանրա-ստութեամբ մենհանգստացող մարդուն կը պատկանէ ներութիւն ստեղծելու փառքը, ներու-թիւն անունով արժեքողները շատ բախտ չունին հաս, հետեւողներութիւնը բարձունքներ հուանելու արժանով ճամբայ բնաւ չէ եղած։ Ատիկա ամէ՛ն ոք գիտէ ու ոչ ոք պէտք ունի խուճաղի մասնաւելու։

Կաւ տանք Հայաստանի ներստարգ բանաստեղծներու շարքին պատկանող ամէնէն ստատեմենքին կարգ մը նմոյշներ։ Հոս մէկտեղուած կատրները արարողին կուսակուս-ններուն պատճառած մասնողութեանց առիթ չեն տար, բայց պէտք է անպայման խոսիլ արիւշ անպատեհութեան մը մասին, շատ դրելու փաստին մասին, որ նուազ վաստակաւոր չէ. քան մոտայական մախուսը։

Երեսուհի յարժ գեղերող տղաք են մեր խմբած բանաստեղծները, ալ իբրեւան-չիւրը երեք հարիւրէ աւելի բանաստեղծութիւններու հեղինակ է արդէն։ Այս լուսլու-թիւնը մարդկորէն ու պարգորէ՛ն զեղեցիկ արդիւնքներու չի տանի, ընդհանրապէս, կը հարուածէ բանին էութեան, բանաստեղծականութեան, արուեստին ու անկրկնելիութեան նախադրութիւնները։

Պիտի ուզէինք ըսել բանաստեղծ այս արդոց, որ իրենք զիրենք «չմանրեն» սովոր-բանն ուսանողներու մէջ, ալ շատ տքին, քիչ տրտաւրեն, արտագրուածը ըլլալ խիտ, լուսայտղ, ընթերցողին լսեմնն բացառիկ տեսլիցներու բացարձակութիւնը միայն, որպէսզի անեղում տուողը մարդոց շնորհին, դուրս դան շարքային բանաստեղծներու տիրոջն տարտած կարաւանէն եւ անմանան ու անանմանան։

## ՆԱՆՍԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ



Կրակի հետ խաղ անելով ես անփայթ,  
Ախ, մի անգամ իմ ձեռքերը այրեցի:  
Կրակի հետ ես անգգուշ վարուեցի:

Պղտոր գետից ջուր բերեցի տակառով,  
Թե՛՛ կրակի լեզուները մարեցի:  
Կրակի հետ ես անհոգի վարուեցի:

Յետոյ յամկարծ մոխրի վրայ ծխի պէս  
Քառու քերից բռնած էիմառ պարեցի:  
Կրակի հետ ես անկրակ վարուեցի:

## ՀԱՅՍԵՐ

Ինչքան լուսեր կան ամենուր հիմա,  
Կարած աստղերի անհաղորդ լուսեր,  
Ճերմակ ամպերի քուլումորք լուսեր,  
Սիրած աչքերի յարագիւր լուսեր,  
Անսէր բառերի դաւադիր լուսեր,  
Հաւատի եւ դէռ՝ գաւաթի լուսեր,  
Շուրթեր քրքռում՝ երդումի լուսեր,  
Աչքեր կիսախուր՝ մեկնումի լուսեր,  
Ձեռքեր՝ մեզ խոնարհ ծառայող լուսեր,  
Երգեր՝ ներշնչման փառաւոր լուսեր...  
Խայծակներ՝ հագայտ մահերի լուսեր,  
Անճրհանելի՝ տխուր պահերի լուսեր,  
Եւ ծիծառնի ակնթարթ լուսեր...  
Դու այդ վերջինն ես, առաջինն իմ սէր:

## ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԳԱՒԱԽ—

Ես իմ երկնքի կապուտակ գիծին  
Խմելու համար  
Լուսնի եղջիւրը պարզում եմ հիմա  
Որպէս գիշերուայ հաշտութեան գաւաթ,  
Ես նարից, նարից վերեւ եմ պարզում  
Իմ լուսին եզան պղքէ հեռանդ:

Առաւօտների շաղատ հեփաթը  
Վառելու համար  
Ես իմ երազը գիշերուայ ծերից  
Ներքեւ եմ կախում կրակի նման,  
Ու վեր եմ իջնում առաւօտների  
Հրեւանքը գերող,  
Ու վեր եմ բաշտում, որ ցերեկները  
Ոտնատակ չտան փռշտ ստիկերով:

Այսպէս ապրում եմ, իջնում բարձրանում  
Քն հասակն ի վար,  
Քն հասակն ի վեր,  
Ես ունեմ վշտի եւ ուրախութեան  
Քիւրաւոր ճեւեր՝  
Անպերից ներքեւ եւ ամպերն ի վեր:

Իմ եւ քո այսօրն հեռաւորութեան  
Տարածութիւնը կոչում է կարօտ,  
Իմ այս շերտութեան եւ քո ստանութեան  
Բախումը պայթում դառնում է արտո:

Քն եւ իմ այսօրն անտարբերութեան  
Ժամանակները կոչում են ճմեռ,  
Երբ իմ շերտութեան եւ քո ստանութեան  
Շփումից անգամ ծնում են հոգիներ...

Իմ եւ քո փռքիկ բաժանումն անգամ  
Սառնամանքի պահեր է բերում,  
Կուում ենք այսպէս բիւր հազար անգամ,  
Բիւր հազար անգամ հաշտում ենք,  
Ներում:

Եւ ես բիւր հազար մէկերորդ անգամ  
Լուսնի եղջիւրը պարզում եմ հիմա  
Որպէս գիշերուայ հաշտութեան գաւաթ,  
Եւ այս գիծու հետ վերեւ եմ պարզում  
Իմ արեան բոցը քանճու ու հեռանդ:  
Ն. Մ.

## ՄԱՐԻԱ ՅԱԿՈԲԵԱՆ

Արեւը քո տան քիկանքից ելնում  
 Ու մայր է մտնում մեր տան ետեւում,  
 Ամբողջ երկինքը կտրել անցնելու  
 Արեւի ուղին կէտ օր է տեսում:  
 Մեր տներն անչափ մօտիկ են իրար,  
 Ու սիրտս անվերջ քեզ մօտ է քեւում,  
 Մեր տանից ձեր տուն հասնելու համար  
 Ամբողջ իմ կեանքը ինձ կարճ է թւում:

✽

Արթնանում եմ լուսաբացին,  
 Ու քեզ իմ մէջ արթնացնում,  
 Քեզ, իմ վաղուց որոնածին,  
 Մի համբույրով թարմացնում:  
 Ու տանում եմ, տանում եմ քեզ  
 Համբանքով անքիւ, անվերջ,  
 Այնքան տանում, որ դու յազմես  
 Ու ինձնից շուտ գնես իմ մէջ:

## ԻՄ ԹՈՒԽ ԲԻՐԵՂ

Դու՛, դու՛, դու՛, դու՛, ամեն տեղ դու,  
 Հանապարհին, ջրին, օդում,  
 Ամենաբոխ, ամեն ինչում,  
 Իմ երազում, իմ անուրգում:  
 Դու թխաչուի, դու թխաղէմ,  
 Դու անխօս լին կապշոտ - կամաչ՝  
 Միշտ քեզ փնտռող աչքիւ տառօ...  
 Դու մի հատիկ, բայց ամեն տեղ,  
 Դու թանկագին, իմ թուխ բիրեղ:

Ձիւն չեկաւ մի փչ՝ Զանգուն վարարել,  
 Մի փչ յոխորտար, ափերից ելնել,  
 Ելնելու ողորդել ափերը իր եին,  
 Մի սղալ քիկներ ժայռի ստուերին,  
 Մի աղբիկ շիկներ ձորաքարանին,  
 Հանապարհն արած դուրս ելնել  
 ձորից...

Ձիւն չեկաւ՝ Զանգուն վարարել ձորից:

✽

Էլ չեմ անի, էլ չեմ անի,  
 Քեզ ինձանից էլ չեմ վանի,  
 Էլ չեմ գնալ, որ չգնաս,  
 Չեմ հեռանալ՝ չհեռանաս,  
 Չչարչարուես, չծերանաս:  
 Ես կը ժպտամ, որ դու ժպտաս,  
 Կը հաւատամ, որ հաւատաս,  
 Ու չեմ տանջի, ու չեմ տանջի,  
 Ու թէ գնաս, ու թէ գնաս  
 Հանապարհ քող կանաչի...

✽

Ինչ արեց-չարեց, խաչմերուկն արեց,  
 Փողոցներն եկան-հատեցին իրար, -  
 Մէկը վեր ձգուեց, մէկը ձգուեց վար,  
 Լոյսեր վառուեցին, ու մութը մարեց,  
 Ինչ արեց-չարեց, խաչմերուկն արեց,  
 Ինչ արեց-չարեց, խաչմերուկն արեց,  
 Բախտերը եկան-բախտեցին իրար. -  
 Մէկը գտնուեց, ու մէկը կորաւ,  
 Սրտերը սիրոյն տրուեցին գրաւ...  
 Ինչ արեց-չարեց, խաչմերուկն արեց:

Մ. Ե.



## ՈՐՈՏԱՆԻ ԿԻՐՃՈՒՄ

Աղառածների լուսեան վրայ  
Քաբայծն սպիտակ առագաստի պէս  
Լազում է ձորի կապոյտ երկնքում:

Իր փոքրիկ, տխուր գլուխը շեքում,  
Տխուր աչքերը քափանցիկ, տխուր զանգակների պէս  
Կախում անդունդին,  
Լուսնեակ պոզերով պոզանալով է զէմքը լուսնեակի  
Եւ մի անմոռաց, յաւիտենական խոր ափսոսանքի  
Փշրանքներ խամրած  
Ընկնում են հատ-հատ  
Զօրում քաւալուող սարսափի վրայ:

Կարօտի լեզուն ներմակ հպումով  
Նրա շուրթերից սրբում է ծափած տապը կարօտի,  
Եւ զանգակները քրքռում են վայրի  
Արտացոլանքով տխրաբախ սրտի:

Քարերի կքծփն կակաչները մօր  
Անտիկ ծաղկումով աչքում են կրկին,  
Եւ մրանց բոցը օրօրում էամուս  
Ու խշխշում է ժայռերի ձեռքին:

Նա մարդու ձայնը մեծանում յանկարծ  
Վայրկեան առ վայրկեան ելնում է հզօր  
Բնութեան անդունդ-օրօրացներում. —  
Այդ անպարագիծ օրօրումը մէջ  
Մարդը՝ ինքն այնպէս հեշտ է մեծանում:

Նա հաղնաեղած առագաստի պէս  
Կանգնել էմ ծերպի սարսափին շողում,  
Իմ ռոտերի տակ բախուր Անաստ,  
Թափուր յուշերի վտանգ է լազում:

Նա ու քարայծը սարսափի վրայ  
Կանգնել ու իրար մայում ենք անվերջ. —  
Իմ լուս կարօտի ձայնն է զօղանշում  
Քաբայծի տխուր զանգակների մէջ:

ՌԱԶՄՐԻԿ ԳԱՆՈՇԱՆ

### ԼՈՒԴՎԻԳ ԴՈՒՐԵԱՆ

Բազմապատկում է ասուզերի թիւը  
Մաւքը խտացող,  
Եւ լուսիւնը որպէս մտածող  
Խառնում է իր մէջ ասուզերի լոյսը.  
Մաւքն ու անոններ:

Օ՛, լուսիւնը...

Այդ լուսիւնը մոյճն է ամէն տեղ  
Ու չունի ասիւն,  
Սակայն աշխարհում նրան ընդհատող  
Ձայները հիմա ինչքան են տարբեր  
.....  
Օ՛, լուսիւնը...

Մարմնիս վրայ խել մամոնտի  
Կեռ ժանիքով քացած վերքի  
Սպիւն դեռ կայ:  
Օ՛, ես քանի՞ տարեկան եմ.  
Քանի՞ անցեալ, քանի՞ ներկայ:

Օ՛, ամտառի ծառեր,  
Ձեր երգ երգողը գրեցի ես  
Եւ ուզեցի անապատում կարդալ.  
Սակայն եկաւ

Անապատի դաժան ու չոր քամի՛ն  
Եւ ինձ ասաց, որ ամտառի մասին  
Խօսել անապատում ես իրաւունք չունիմ:

Օ՛, ամտառի ծառեր:  
Ես չափեցի խանձուած անապատը  
անծայր՝

Իմ մէջ ցատում դարձաւ  
Կամաչ բողբոջը ձեր  
Եւ գթութիւնն իմ աչքերից քամեց  
Երկու կամաչ արցունք:

Ընկամ արցունքներն իմ,  
Ընկամ աւազներին.

Ու ես տեսայ ինչպէս վեր բարձրացան  
նրանք

Դարձան երկու կաղնի:  
Ողեսց անապատի դաժան ու չոր քամի՛ն -  
Ուզեց՝ կաղնիները արմատախիլ տանել,  
Ուզեց. քայց անկարող եղաւ:  
Սակայն պոկեց տերեւներ ու ոստեր  
Ու շաղ տուեց, ցրեց ամբողջ  
անապատով:

Ես շաղ տուեց, ցրեց,  
Սակայն ընկած ամէն տերեւ ու ոստ  
Վեր խոյացան՝ դարձան հզօր կաղնի:  
Օ՛, ամտառի ծառեր,  
Վեր խոյացաւ անապատում  
Մի նորաշունչ ամտառ.  
Ու ես այնտեղ  
Ձեր երգ երգողը կարդացի:

Լ. Դ.

# ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿԵԱՆ



Այո, մէկ մէկ այնպէս չեմ ուզում յիշել,  
 Որ կռիւներ եմ եղել աշխարհում,  
 Որ մարդիկ իրար գրկե՛լ եմ, փշրե՛լ,  
 Սեւ ամուսններ եմ եղել աշխարհում...  
 Այնպէս յոգնե՛ւմ եմ, տխրե՛ւմ եմ  
 երկար,  
 Ձե՛մ ուզում լսել վատերի մասին,  
 Այո, ես այնպե՛ս եմ ուզում հաստատել,  
 Որ ինչ-որ գիտեմ, բամբասանք է սին...

Ո՞ւր եմ արդեօք անհե՛տ կորած  
 Հարազատներն իմ թանկագին,  
 Ինչե՞նչ չկայ մի վերադարձ՝  
 Նրա՛նց, ովքեր պիտի գային...  
 Ինչե՞նչ չեկաւ նա կռուից տուն,  
 Ինչե՞նչ մնաց նա առանց հայր... -  
 Ես ուզում եմ, որ իմ որդուն  
 Այս հարցերը լինեն օտար...

Երազում տեսայ երկիրը չկայ...  
 Կրա՛կ էր, աւե՛ր, մոխի՛ր էր չորս դիմ,  
 Սպասում էի ես մի ազգկայ,  
 Իսկ նա մոխրացած ընկեր էր գետնին...  
 Իմ ծանօթներից մարդ չէի գտնում,  
 Անծանօթներից ա՛յ մէկը չկար,  
 Չկար երեխա՛յ, չկա՛ր պատմութիւն,  
 Գիտութիւն չկա՛ր, եւ արուեստ չկար...  
 Ջեռէրս լացով տարայ տիեզերք,  
 Յետայ... վեր թռայ... Շատ էի ճնել...

Սա չար երազ է, բայց զգուցա՛շէ՛ք -  
 Արթն՛ւմ պահին էլ կարող է լինել...

Ինչե՛ր արի ես յամում չեզ,  
 Դու չիմացա՛ր այդ մասին,  
 Անէ՛ն ինչ էլ տուեցի չեզ,  
 Դու չիմացա՛ր այդ մասին:

Ի՛նչպէս եղաւ՝ գէթ մի անգամ  
 Գանգատուեցի չեզից ես,  
 Թեքե՛ւ մի բան, եւ ահա, տե՛ս,  
 Դու... իմացա՛ր այդ մասին:

Դու իմացա՛ր ու հեռացա՛ր...  
 Բայց թէ համբիշ դեռ կեսին  
 Ինչե՛նչ բարիք ցանկացայ չեզ,  
 Դու... չիմացա՛ր այդ մասին:

Ա. Մ.

## ՈՒՋՄԻԿ ՏՕՆԵԱՆ

Նրանք արեւ արարող կրակ են վառել  
 Նրանց մեծ-մեծ աչքերից այդ հեքիաս  
 այրումը,  
 Նրանց արեւ-արիւնի ծախն է բարձրանում,  
 Քաղաքակալ խաղաղից քաղաւ բն գինի,  
 Քաղաքակալ վարդերից քաղաւն էն զգում  
 Հրդեհակն են կիսով լսեք,  
 Բայց ճկարում են արեւ, հաւր են հրազում:

## ՕՐԸ ԼՅՈՒՆԷԼ Է...

Օրը լցուել է զօրաւոր ու թանկ  
 Մի գեղեցկութեամբ.  
 Գիր լիանալով թանկ թանկով,  
 Արագիւնների բնույթներով,  
 Օրը լցուել է խաղաղ, անվրդով  
 Հոբել ու բարեւով,  
 Հրճում է ինքն ինքն ինքն,  
 Մանկան հրճում է մարդու գայիքով,  
 Մարդը՝ սեփական ինքնամանկանով:

## ԶԱՐԹՕՆԻԲ

Միլը՝ ճշմարիտ, ճակատ առ ճակատ  
 Առաւել խօսքի պէս  
 Միտանել է շարքին.  
 Կանաչ խլրտում եւ յարթանակ կայ  
 Այդ հերթում մէջ,  
 Բարձունքի վրայ,  
 Յաղթանակի մէջ այս գարնանային  
 Եւ պղծակիր անցեալն է հերթում՝  
 Օրերի երթում  
 Բեռնաբաք հղած մի սեւ պատուանդան:  
 Պարտութեամբ շահած գալիք հանգիստ կայ  
 Այդ հերթում մէջ:  
 Ողբո՞յն քեզ գարուն...  
 Բեռնում մի երկր'անջ, եւ ճար մի աշխարհ  
 Եւ մահաբերի՞նք կայ  
 Բա զարթոնքի մէջ,  
 Խլրտում մէջ քո գարնանային:  
 Միլը՝ ճշմարիտ, ճակատ առ ճակատ  
 Առաւել խօսքի պէս  
 Միտանել է շարքին:

## ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Պատշաճ Սեպտեմբեր

Ես գիտեմ որն է իմ Հայաստանը,  
 Իմ արեւմտեան է, իմ Հայաստանը,  
 Ինքնամանկան իմ հին թախտին է  
 իմ Հայաստանը.  
 Խիզմն է, իմ խիզմն է,  
 Յաւել տնտեսական հերթում իմ ուժն է,  
 Իմ գիտն է, կանոն է,  
 Իմ բնականն ու յամառ իմ եան է,  
 Արեւի կեան է,  
 Մեզ իբր կապող արմատը իբրն է,  
 Ես գիտեմ որն է  
 իմ Հայաստանը

## Ի՞ՆՁ ԳԻՏԵՆԱՅԻՆԻԲ...

Թեքեւ էր այնպէս կարգաւոր օրոյ,  
 Մեծ հարուստ էին կեանքում իրարով,  
 Տերեւներն արդէն թափում էին վաթ,  
 Մեծ անցնում էին աշուն անտառով:  
 Ազատանում էր անտառը մեր գլխ,  
 Բայց մեծ կատակում, ծածկում էին.  
 Կարաստի ցուր կորցնող գիտէր,  
 Մեծ ցուր ի՞նչ իմանայինք...

## ՀԱՅՈՑ ՏԱՌԵՐ

Դուք այն գամերն էք,  
 Որոցում մեր հին, մեր հին ռաշիդ  
 Գամակն մեր թերթի հին պարբերականին:  
 Մանր ճանաչեց,  
 Մեծ՝ անմահացանք:  
 Դուք մերն էք, ինչպէս  
 Մերն է յաւիտեան մեր ինչ անունը,  
 Հոսող ջրերին՝ հոսանքի հունը,  
 Ընթացող թրի ինչքան էլ փոխեւ,  
 Հունը իր հետ է:  
 Դուք այն գամերն էք, որոցում մեր հին,  
 Մեր հին ռաշիդ  
 Գամակն մեր թերթի հին պարբերականին,  
 Մանր ճանաչեց:  
 Մեծ անմահացանք:





# Արևիկա Լուրեր

ԵՐԿՁՈՒՀԻ ՎԻՐՃԻՆԻԱ ՊԱՊԻԿԵԱՆ

Նիւ Եսթի մէջ երգչուհի Վերժինա Պապիկ-  
եան (սովորաւ) ժենակաւորը Հանդիպեցած է  
Ֆրանսացի երաժշտագէտ Տպիւսիէ՝ ՎՄ. Սեպա-  
տիկիին ժառանգորդութիւնը զօրեղն նոր ձա-  
րագրութեան, «Գոլուստիան» երգչակազմներու յայտ-  
նի ընկերութեան կողմէ:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ԲԱՐԵԿԱՄԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Նիւ Եսթի Հայ Գրականութեան Բարեկա-  
մերու Միութեան ամսական ժողովը տեղի  
ունեցած է Յունիս 16-ին, Նիւ Եսթի Վերք-  
լը շէնքին պանդոկի «Պատրիս» սրահին մէջ:  
Դիւանի անունապետ ընտրուած է պ. Արամ Ա-  
ֆարեան եւ ասեմագիր՝ պ. Արքիբը Հա-  
րսեան:

Կարգադրուած է Միութեան գործունէութեան  
տեղեկագիրը, որում բարոյական եւ միաբնակ  
բովանդակութիւնը, ժողովը գտած է զանազու-  
միւր, ու վարկաբանութեան գնահատական տուելով:

1908 ի ընթացքին, Միութիւնը ունեցած է  
5052-07 տպարի ելուստաւ:

Առաջարկուած է եւ ընդունուած՝ Կանոնա-  
գրային կետերու վրայ յանձնարար կատարել  
յատուկ ժողովի մը ընթացքին:

Այժմեան, տեղի ունեցած է ճար վարչա-  
րեան ընտրութիւն:

Ժողովը որոշած է Յուն Միութեան Յանկի  
Յանապետ պ. Արշակ Սահակեանին տալ պատ-  
ւոյ Յանապետի տիտղոս. իրեն զմահատմէ՝  
իր երկարամեայ պաշտօնավարութեան:

Նորընտիր վարչութիւնը իր չիւանը կազ-  
մած է հետեւեալ կերպով.

Պ. Վարդգէս Գրիգորեան՝ անունապետ, տի-  
կիս Ամեն Յովակիմեան՝ փոխ-անունապետ, պ.  
Ե. Ն. Մակարեան՝ վարիչ-ժառանգար, պ. Ա-

րտ Գաբրիէլեան՝ տրամադրող-ժառանգար, պ.  
Արքիբը Հարսեան՝ ցանկապետ, տիկիս Պեր-  
ճուսի Սարգսեան եւ պ. Մկրտիչ Նուբեան՝ խո-  
րհրդականներ:

Տիկիս Պերճուսի Սարգսեան Միութեան ճը-  
ւիրած է հայերէն ճոր գրամեթեայ ժը:

ՆԿԱՐՁՈՒՀԻ ԿԱՄԱՆՈՒԹԵԱՆ

Պ

Ուսանողներ ժենակաւոր Քերթիզե՝ Վիլ-  
լիսիէն Փոսթի եւ Ռեզիլիլլը Տիպաքիւմ-  
ի կողմէն երգչակազմը, Վարչապետ Պատրիկ  
արեւմտադէտներու. զօրեղն ցոյցանալէսը  
տեղի ունեցած է Նախագահական Պալատի (ըն-  
դիւնական Տուն) պարտէզին մէջ:

Ներկայացուած Հարիւրաւոր զօրեղն մէջ,  
դասաւորներու մասնաւոր զանաւորներու տը-  
ժանացած է ՎՍԸ Պոյն իւղաներկ նկարը, զոր  
օր. Կլաւա Ղազիկեանի. Այս զանաւորներ  
Համար օր. Ղազիկեան արժանացած է ՎՍԸ  
Ռիպըն շքանշանին եւ դրամական մարգարէի  
պարգևին:

Օր. Կլաւա Ղազիկեան իր մասնագիտու-  
թիւնը կատարելագործած է Մայրիկ Աթի եւ  
Ուսանողներ Միութիւնը եւեթիւրբի Աթի  
Համալսարաններուն մէջ: Անոր աշխատանի-  
սակն (սթուտի) ու տնտեսը լայն կերպով ծա-  
նօթ են ամերիկեան եւ հայկական շրջանակե-  
րուն: Իր Հինգ ժենակաւոր եւ ընտրուի ձեռ-  
գործները Մ. Աստուածածին, Մ. Գր. Հասար-  
բէլի, Մ. Վարդան Զորագործ, Խաչիկեան  
եւ Մկրտիչեան, գեղեցիկերն կը զարգարեն  
մէր եկեղեցիներու խորաններն ու պատերը:

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՆԿԱՐՆԵՐԸ

Ժընեւի համալսարան ՄՈՁ Կարթիկի մէջ  
վերջերս բացուած է Կարապետ Ղազարեանի իւ-  
ղաներկ Յարմարու ցուցանալէսը: Միջ հաս-  
տատարիւն մըն է, որում ցուցանալէսը  
իրապետ տրտէ կը ճիւղայացնեն եւ այդ նշ-  
ւոյքը քաւական է արուեստագէտին արժէքին  
մասին ցաւաքար մը կազմելու համար: Բացման  
հանգիստեան Յարկայ եղած են Ժընեւի ար-  
ւեստի գրքերէ բարի համալսարան զեմքերն ու

բանցմէ շատեր երբ Մաքս Մաքի ծարացած են  
ալ. Կարապետ Ղազարեանի մասին, ան եկեղեցու  
բառերով արտայայտուած է.

Էմ Կարծիքս այն է, որ Կարապետ Ղա-  
զարեան կը գտնուի բարձրաւարտ մը վրայ, ու-  
րով արժանի է Կալըքի Մոսի մէջ մերկայաց-  
նելու:

**ՏԻԿԻՆ ԱՐԱՔԱՍ ՍՎԱՃԱՆԻ**  
**ԵՐԳԱՆԵՆԴՍԸ ՆՈՒՆՈՐՔԻ ՄԵՋ**

Պարզէ՛ք օգնելի տաղանդաւոր երգչուհի  
տիգին Արաքս Սվաճեան, որ ներկայիս Միաց-  
եալ Նահանգներ հաստատուած է, իր աղջկան՝  
զանապախարուհի օր. Մեղա Գարապաշեանի  
հետ, վերջերս, Երզնահոգէս մը տուած է Նիւ-  
Եորքի Գրանտիկէ Հոլի մէջ, հայ եւ օտար երու-  
թընդամեններու առաւար բազմութեան մը ներ-  
կայութեան:

Երգչուհիէն արժանազարմ է փայլուն յա-  
նգութիւն: Վերին-նորը թայմը մեն օրաթերթի  
երաժշտական քննադատ Թովղթի Եւրման, յա-  
ջորդ օրը գրած է իր թերթին մէջ, Վոգրանի  
տիգին Սվաճեան երգեց օգնելի արիւններ՝  
Վերիպոլի հարսանիքին, Վիսնոնի, Վոգրանի-  
ն, Վոստալ Պարթիֆայէն ինչպէս նաեւ մեղե-  
դներ՝ Եւրպոլիսի ու Պրանմոնի եւ ժողովրդ-  
ական երգերու փունջ մը ետքը հայ երգչուհի-  
ներէ:

Տիգին Սվաճեան ունի ուսման, հնչող եւ մը-  
շակուած ձայն, զգալուն եւ ինքնայատուկ զը-  
րուշուրեանք իր կատարումները սպասողի  
էն ուրոյն արտայայտութեամբ, եւ եթէ ար-  
ւեստի կատարներ երգեց զասական ըմբռնումով  
Վոգրանի արիւնները արտայայտեցին առա-  
ւորիկ եւ զգալուն իր խառնուածքը:

Հայկական ժողովրդական երգերը ունէին  
բացառիկ գրաւութիւն եւ Վիպաղազի մէջ տի-  
գին Սվաճեան յայտնարեց, թէ ընդունակ է  
հայնպէս ամենանորին ու մեղմ ձայները վա-  
րդարարութեամբ օգտագործելու:

Երգչուհիէն մեն յաջողութեան իր լայն  
բաժինը բերած է երգչուհիին զանազան ար-  
ջիւղ: օր. Սեդա Գարապաշեան, որ հայկական  
երգերէն մինչեւ զասական եւ օգնելի բոլոր  
երգերուն զանազան ճարտարութեան ընկերանալէ  
զատ՝ Գրանտիին նուազած է Եոգիկի Պալատին  
մէջ: Միջերգի, հիմաւի թեթեւով եւ մանաւանդ

զգացական արտայայտութեամբ: Իսկ Կոմիտասի  
եւ Քարեմազարեանի կատարումներով՝ հիւսն-  
լիթիւն արտայայտած է հայկական ժողովրդի  
զմայրելի գեղեցկութիւնը:

**ՎԱՄԱՍՏԵՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՊՐԱՅ**  
**ՈՒԱՇԵՆԿՈՐԸՆԻ ՄԵՋ**

Գմանատելով հայ մեծանուն գրողիմ հարաւ  
եւ բիրեղ վաստակը, Ուաշինկթընի հայ վա-  
ժորթանի կրթական մարմինը գեղեցիկ գագաթա-  
նը ունեցած է շարաքօրեայ հայ դպրոցը անու-  
նել Վամաստեան հայկական դպրոց:

Կարող լսուցիչ եւ ուսուցչուհիներ նշ-  
անակուած են եւ արդէն քառական քիւով աշ-  
ակերտներ արձանագրուած:

**ՈՒԱՇԵՆԿՈՐԸՆԻ ՎԱՅ ՄԵՇԱԿԱՅԹԻ ԿԵՐՈՆՈՐ**

Հանգուցեալ բարերար Յակոբ Արապեանի  
գլխաւոր նուիրատուութեամբ շինուող Ուաշինկ-  
թընի Վայ Մշակութի կեդրոնի շէնքը ար-  
դարեւ կը բարձրանայ: Բացուած տեղի պիտի  
ունենայ Գեղեցիկ 10-ին:

Այս առիթով, շէնքին Երեւութեան Յանձն-  
արարը ունեցած է լայն խորհրդակցական ժո-  
ղով մը, մասնակցութեամբ զայր մարմիններու՝  
Հ. Յ. Գ., Հ. Օ. Մ., Հ. Ու. Գ., Տիգինայ Միւ-  
թիւն եւ Հոգաբարձութիւն:

Սեպտեմբերէն Գեղեցիկ մեծանունը յա-  
տարարուած են հանգանակութեան ամիսներ:  
Կողմուած են զանազան յանձնարարութեան, բաց-  
ման հանգէտը եւ հանգանակութիւնը խանգով-  
առութեամբ իրադրութիւնը համար:

Նորակառոյց շէնքը ո՛չ միայն Ուաշինկթընի  
հայ համայնքին կեդրոնը պիտի ըլլայ, այլեւ  
պիտի ըլլայ հայութեան կեդրոնը: Միացեալ  
Նահանգներու մայրաքաղաք՝ Ուաշինկթընի մէջ:

**ԼԻՆ՝ ՏՈՒՐԵՆԻ ԱՌԱՋԻՆ ՍԱԼԸ**

Երեսակամ Գաճաքեան շարքին, Ֆիլիպ-  
քիներթիւմը հրապարակ խառն է Գրանտեան  
օփերայի տաղանդաւոր երգչուհի Լին Տուրեանի  
առաջին աւել:

Կլիւի Վոգրեթմ միջեւ Պիլիմի Վոքամմա,  
Լին Տուրեան կը փաստէ՝ քէ տիրացած է մեծ  
թեմիքի մը, եւ ձայնիմ ծաւալը՝ զինք կրնայ  
դասել այլեւ մեծ տաղանդներու կարգին:

## **ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ**

ԹԻԿՆԱԾՈՒՆ (վեպ), Զ. ՈՐԲԱՆԻ, ՊԵՂՐԱՔ, 1967

ԻՆՐԱՊԵՏ ԱՍԼԱՆԻՆ ԱՂՋԻԿԸ (վիպակ), Ս. ՍԻՄՈՆԻԱՆ, ՊԵՂՐԱՔ, 1967

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ

Ա. ԱՐՓԻՆԷ

**ԿԵԱՆՔԻ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ**

(ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ)

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍՄԱՀՄԱՆ 7 ՏՈՂԱՐ

ՀԱՏԱՎԱՅԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ. —

G. SASSOUNI

Rue Sélim Boustani, Beyrouth-Liban

digitised by A.R.A.R.@